

Նախաբան

Սույն գործնական-գիտական մեկնաբանության առարկա «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը երրորդ օրենքն է, որն ընդունվել է վերջին 8 տարիների ընթացքում: «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2003 թ. դեկտեմբերի 17, ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2004 թ. հունվարի 14 և գործողության մեջ է դրվել 2004 թ. հունվարի 30-ից՝ պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից: Սույն օրենքը կանոնակարգում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անվճարունակության հետ կապված իրավական հարաբերությունների զարգացման երրորդ փուլը: Սնանկության մասին օրենսդրության նման ինտենսիվ զարգացումը բացատրվում է նրանով, որ երկրում բավականին արագ տեմպերով իրականացվում են տնտեսական բարեփոխումներ:

Սնանկության հարաբերությունները կարգավորող առաջին օրենքը 1995 թ. «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքն էր: Նրանում ներառված էին սնանկության մասին միջազգային օրենսդրության զարգացման հիմնական տեղեկանքները, օգտագործված էին ինչպես արտասահմանյան պետությունների առաջադեմ փորձը, այնպես էլ տեղական առանձնահատկությունները: Օրենքն ուներ մի շարք թերություններ, որոնք դժվարացնում էին դրա կիրառումը: Մասնավորապես, այն չէր կարգավորում սնանկության գործերի դատավարական առանձնահատկությունները, թերի էին կարգավորված մի շարք մեխանիզմներ**, ինչը առաջացնում էր իմպլեմենտացիոն լուրջ պրոբլեմներ: Սակայն դրական էր այն փաստը, որ օրենքի առկայությունը հնարավոր էր դարձնում մրցութային վարույթի իրականացումը:

«Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի օրենքը (այն գործել է բավականին երկար՝ մինչև 2004 թվականը) առավել համապատասխանում էր տնտեսության զարգացման հեռանկարներին և առավել մանրամասն էր կարգավորում սնանկության ընթացակարգերը: Միաժամանակ, օրենքը հաշվի էր առնում անցումային ժամանակահատվածի առանձնահատկությունները, մասնավորապես, սեփականաշնորհման ենթակա կազմակերպությունների սնանկացման վարույթի առանձնահատկությունները (հոդված 75): Սակայն այս օրենքը ևս ուներ բազմաթիվ թերություններ, որոնք ծնեցին նոր օրենքի անհրաժեշտությունը:

Բացի այդ, 1999 թ. ուժի մեջ էր մտել ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը: Երկու օրենքների դատավարական նորմերի մրցակցությունը ևս կանխորոշում էր սնանկության մասին նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Սնանկության մասին նոր օրենքը տարբերվում է նախորդներից իր դետալիզացիայի մակարդակով: Այսպես, եթե 1995 թ. օրենքը բաղկացած էր 47 հոդվածից, 1996 թ.՝ 77, ապա «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքն ունի 101 հոդված:

Մեկնաբանվող օրենքը սահմանում է մի շարք նոր ինստիտուտներ, մասնավորապես՝ պարտապանի և պարտատիրոջ դատարան դիմելու պարտականության և այդ

պարտականությունը չկատարելու դեպքում պատասխանատվություն կրելու ինստիտուտը, կեղծ և կանխամտածված սնանկության, սնանկության անվիճելիության, ժամանակավոր կառավարչի, կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունների, այդ կազմակերպությունների և կառավարիչների գործունեության հետևանքով հնարավոր վնասների ապահովման, ինչպես նաև սնանկության պարզեցված ընթացակարգերի ինստիտուտը և այլ ինստիտուտներ:

Մեկնաբանվող «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի առանձնահատկությունը ոչ միայն նոր ինստիտուտների ներմուծումն է, այլև նախորդ օրենքներից արդեն հայտնի ինստիտուտների կատարելագործումը և նրանցում ավելի ժամանակակից և արդյունավետ մեխանիզմների ներդրումը:

Մասնավորապես, կատարելագործվել են դատավարական ընթացակարգերը և լուծվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և մեկնաբանվող օրենքի դատավարական նորմերի հարաբերակցության հարցը (հոդված 1-ին կետ 2-րդ):

Փոխվել են սնանկության հատկանիշները: Այսպես, եթե նախկին օրենքում պարտապանի սնանկության հատկանիշ էր մեկ միլիոն դրամ կազմող վճարային պարտավորության 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանցը, ապա ներկայումս՝ կետանցի նույն ժամկետի պայմաններում, սնանկության հատկանիշ է համարվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող վճարային պարտավորության առկայությունը*: Բացի այդ, պարտապանի կողմից սեփական անվճարունակության ճանաչման հայցադիմում դատարան ներկայացնելիս, օրենքը նախատեսում է՝ որևէ դրամական պարտավորության կատարման անհնարինության կամ պարտատերերի պահանջները բավարարելու համար նրա գույքի արժեքի անբավարար լինելու փաստը:

Էականորեն ընդարձակվել են կառավարչի լիազորությունները (հոդված 31):

Փոխվել և իրավիճակի պահանջներին առավել համապատասխանեցվել է պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը (հոդված 82):

Սահմանվել են սնանկության վերաբերյալ գործն ավարտելու օպտիմալ հիմքեր, որոնք հնարավորություն են տալիս խուսափել գործի արհեստական ձգձգումից և կառավարչի և նրա վարչական ապարատի աշխատավարձի գծով ակնհայտորեն չբավարարվող պահանջների մեծացումից, այն դեպքում, երբ՝

- պարտապանը չունի որևէ գույք.
- պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ.
- պարտապանի գույքն այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը.
- պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:

Մեկնաբանվող օրենքն իր մեջ բովանդակող բոլոր վերը հիշատակված նորություններով և առանձնահատկություններով, ընդհանուր առմամբ, բավականին հաջողված իրավական ակտ է:

Մեկնաբանությունը մշակվել է ՀՀ տնտեսական դատարանի, ՀՀ արդարադատության նախարարության և առանձին տեսաբանների կողմից, որոնք ունեն սնանկության բնագավառում ինչպես պրակտիկ, այնպես էլ տեսական որոշակի փորձ և հմտություններ:

Սույն աշխատությունում գործնական և տեսական վերլուծության են ենթարկվել ոչ միայն «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի նորմերը, այլև դրա հետ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Սնանկության մասին օրենքը մեկնաբանելիս, հեղինակները անհրաժեշտության դեպքում հղում են կատարել գիտական գրականությանը, դատական պրակտիկային, դատական վիճակագրության տվյալներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, այլ օրենսգրքերի և օրենքների հոդվածներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ) ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Անվճարունակության (սնանկության) հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը

1. Անվճարունակության (սնանկության) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

2. Անվճարունակության (սնանկության) գործերի քննության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

1. Սնանկության օրենսդրությունը իրենից ներկայացնում է իրավական նորմերի բարդ համակարգ: Սնանկության իրավահարաբերություններ կարգավորող նորմեր բովանդակում է ոչ միայն «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ սույն օրենք), այլև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ու այլ օրենքներ: Վերջիններս բովանդակում են ինչպես մասնավոր (քաղաքացիական), այնպես էլ հանրային (վարչական, դատավարական) իրավունքի նորմեր, ուղղված պարտապանի անվճարունակության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, հանդիսանալով ընդհանուր նորմատիվ իրավական ակտ, բովանդակում է սնանկության հետ կապված որոշակի դրույթներ՝ նվիրված, ինչպես կոնկրետ սնանկության հարաբերություններին (հոդվածներ 28, 67, 71 և այլն), այնպես էլ ընդհանուր քաղաքացիական շրջանառությանը (ժամկետներին, գործարքներին, իրավաբանական անձանց, պարտավորություններին վերաբերող և այլ հարաբերությունները կարգավորող քաղաքացիական իրավունքի նորմեր), որոնք կարևոր նշանակություն ունեն սնանկության կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների կարգավորման համար:

Այնուամենայնիվ, սույն օրենքը հատուկ կարգավորում է ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական խնդիրները սնանկության իրավահարաբերություններում: Վերջինիս մի շարք նորմեր էականորեն տարբերվում են քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքներից, ինչպես նաև առավել մանրամասնում են դրանց դրույթները: Օրինակ՝ սույն օրենքը սահմանում է սնանկության սպառիչ հատկանիշները և պարտապանին սնանկ ճանաչելու կարգը, ինչպես նաև առավել մանրամասնում է պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը՝ ելնելով սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրության սկզբունքներից, մասնավորապես պարտատերերի պահանջների բավարարման համամասնության սկզբունքից:

Սույն օրենքը հանդիսանում է ուղղակի գործող նորմատիվ իրավական ակտ, որը հնարավորինս սպառիչ կարգավորում է սնանկության գործընթացը և դրա մասնակիցների միջև ծագող հարաբերությունները: Այնուամենայնիվ, ելնելով որոշ իրավահարաբերությունների առանձնահատկություններից, որոնք առավել մանրամասն կանոնակարգում են պահանջում և դուրս են գալիս սույն օրենքի կարգավորման ոլորտից՝ հղում կատարելով այլ նորմատիվ իրավական ակտերին: Օրինակ՝ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» («Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք):

2. *Սնանկության գործերի քննության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Հաշվի առնելով այս գործերի քննության առանձնահատկությունները՝ օրենսդիրը որոշակի դատավարական նորմեր է ընդգրկել սույն օրենքում, որոնք առնչվում են դատավարության բոլոր փուլերին՝ հայցադիմում ներկայացնելու պահից սկսած մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը: Դատարանի կողմից սնանկության գործերի քննությանը վերաբերող հիմնական նորմերը զետեղված են սույն օրենքի երկրորդ գլխում: Սակայն դատավարական նորմերի շրջանակը սրանով չի սպառվում, օրենքի այլ գլուխները նույնպես բովանդակում են դատավարական կանոններ, որոնք կանոնակարգում են դատարանի և սնանկության գործով դատավարության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:*

Օրենսդիրը սահմանում է, որ սնանկության դատավարական իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սակայն

յուրահատուկ ձևով շեշտադրում է, որ սույն օրենքով այլ բան նախատեսված լինելու դեպքում կիրառվում են սույն օրենքով սահմանված դատավարական նորմերը: Սույն օրենքի նման կարգավորումից ակնհայտ է դառնում, որ այն դատավարական իրավահարաբերությունները որոնք կարգավորված չեն մեկնաբանվող օրենքով՝ դրանք ընկնում են քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորման ոլորտ: Օրինակ՝ ժամանակավոր կառավարչի միջնորդությամբ դատավորը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել հայցի ապահովման միջոցներ (սույն օրենքի՝ 14-րդ հոդվածի 4-րդ մաս): Հայցի ապահովման միջոցների կիրառման դատավարական կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (գլուխ 14), ինչը կիրառվում է դատարանի կողմից, սակայն այստեղ առկա է նաև մեկ այլ առանձնահատկություն, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի, սույն օրենքով (14-րդ հոդվածի 4-րդ մաս) հայցի ապահովման հիմք կարող է հանդիսանալ պարտապանի և նրա հետ առնչվող գործողությունների կամ գործարքների կատարումը, որոնք կարող են էապես նվազեցնել նրա ակտիվները:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը սահմանում է պարտապանին անվճարունակ (սնանկ) ճանաչելու կամ պարտապանի կողմից սեփական անվճարունակությունը (սնանկությունը) հայտարարելու հիմքերն ու կարգը, անվճարունակ (սնանկ) ճանաչված պարտապանի ֆինանսական առողջացման և լուծարման ընթացակարգերն ու դրանց մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա:

3. Բանկերի և վարկային կազմակերպությունների անվճարունակության (սնանկության) բնագավառի հարաբերությունները կարգավորվում են «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Ապահովագրական ընկերությունների և բնական մենաշնորհի և շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների անվճարունակության (սնանկության) վարույթի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է օրենքի կարգավորման առարկան՝ այն հարաբերությունների ամբողջությունը, որոնք առաջանում են սնանկության գործընթացում, ինչպես նաև դրա մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես, սահմանում է պարտապանին սնանկ ճանաչելու և սեփական սնանկությունը հայտարարելու հիմքերն ու կարգը (սույն օրենքի 3-րդ, 5-6-րդ հոդվածներ), ֆինանսական առողջացման (սույն օրենքի 59-69-րդ հոդվածներ) և լուծարման ու անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման (սույն օրենքի 70-72-րդ հոդվածներ) ընթացակարգերը, ինչպես նաև սնանկության հետ կապված գործի քննության առանձնահատկությունները և այլն: Այստեղ տեղին է հիշատակել սույն օրենքի առավելությունը սնանկության հարաբերությունները

կարգավորող նախկին երկու օրենքների նկատմամբ: Այս օրենքը համապատասխանում է հանրապետության տնտեսական զարգացման ներկայիս պայմաններին և առավել մանրամասն է կարգավորում անձանց սնանկության հետ կապված առաջացող իրավահարաբերությունները: Օրինակ՝ նախորդ երկու օրենքներում ամրագրված էին պարտատերերի առաջին և հետագա ժողովների, պարտատերերի խորհրդի գոյությունը, սակայն դրանց հրավիրման, գումարման և անցկացման, ինչպես նաև դրանց իրավասությունները և որոշումների ընդունման կարգը կանոնակարգված չէր, ինչը առավել մանրամասն կարգավորված է սույն օրենքով:

Սույն օրենքով առավել հստակեցված է պարտապանի ֆինանսական առողջացման ընթացակարգը, այդ ընթացքում կառավարչի դերն ու լիազորությունները, դրա արդյունքում սնանկության գործն ավարտելու կարգը և այլն: Սույն օրենքի շրջանակներում կայացվող վճիռների և որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգին և ժամկետներին, ինչը չէր կարգավորված նախկին օրենքներով և հակասում էր վերջինիս համապատասխան դրույթներին:

2-4. Սույն օրենքի 2-ից 4-րդ մասերը սահմանում են այն անձանց շրջանակը, որոնք կարող են սնանկ ճանաչվել: Դրանք՝ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն են: Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 50): Անհատ ձեռնարկատեր է համարվում այն քաղաքացին, որը գրանցվում է որպես անհատ ձեռնարկատեր և գրանցվելու պահից իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ՝ առանց իրավաբանական անձ կազմավորելու (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 26):

Ի տարբերություն 1996թ.-ի օրենքի սույն օրենքը չի նշում բյուջետային հիմնարկների վրա օրենքի գործողությունը չտարածվելու մասին: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ պետական հիմնարկը, նախ՝ չի հանդիսանում իրավաբանական անձ, երկրորդ պետական հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը («Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք, հոդված 6): Հետևաբար, հիմնարկի պարտատերերի պահանջները բոլոր դեպքերում կարող են բավարարվել:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ չպետք է նույնացվի պետական (բյուջետային) հիմնարկը, պետական մասնակցությամբ կամ պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձի հետ, քանզի նշված սեփականության ձև ունեցող իրավաբանական անձը քաղաքացիական շրջանառությունում հանդես են գալիս

ինքնուրույն և կրում է պատասխանատվություն իր գույքով և այս պարագայում Հայաստանի Հանրապետությունը և համայնքները հանդես են գալիս հիմնադրի (սեփականատիրոջ) կարգավիճակով և որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ նրանց նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկությունից (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 128): Նույնատիպ կարգավիճակով են հանդես գալիս նաև իրավաբանական անձ հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպությունները («Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 3 և 6):

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի՝ ՀՀ դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք:

Ելնելով վերոնշյալ դրույթից՝ ՀՀ տնտեսական դատարանը կարող է քննել օտարերկրյա իրավաբանական անձին սնանկ ճանաչելու պահանջի մասին գործեր, որը Հայաստանի Հանրապետության տարածքում գույք ունի:

Այնուամենայնիվ, այս հարցը կարգավորված չէ ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ սույն օրենքով, ուստի մեր կարծիքով անհրաժեշտ է ընդունել իրավական ակտ, որը հստակ կկարգավորի օտարերկրյա անձանց սնանկության հարցի քննումը Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից:

Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28-րդ հոդվածով նախատեսված է, որ քաղաքացին կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով, և որ դրա հիմքերն ու կարգը սահմանվում են այլ օրենքով, սակայն սույն օրենքը կամ ՀՀ այլ օրենքները չեն կարգավորում քաղաքացիների (ֆիզիկական անձանց) սնանկությունը՝ ի տարբերություն ԱՄՆ, ՌԴ և մի շարք այլ երկրների: Զարգացած տնտեսության պայմաններում քաղաքացիների սնանկության ինստիտուտը թույլատրելի է նույնիսկ առաջադեմ՝ սոցիալական քաղաքականության տեսանկյունից, սակայն անցումային ժամանակահատվածում գտնվող ՀՀ տնտեսության համար նման ինստիտուտի գոյությունը օրենսդիրը համարել է վաղաժամ:

Այսպիսով, սույն օրենքը նախատեսում է սնանկության ընթացակարգերին ենթակա երկու տեսակային սուբյեկտ՝ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր: Ընդ որում, սույն օրենքը բացառություն է սահմանում իրավաբանական անձանց որոշ կատեգորիաների համար՝ սահմանելով, որ դրանց վրա սույն օրենքը չի տարածվում: Ելնելով դրանց առանձնահատկություններից՝ բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության

մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2001թ. նոյեմբերի 6-ին: «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների անվճարունակության և սնանկության հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը:

Ապահովագրական ընկերությունների, բնական մենաշնորհի և շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների անվճարունակության (սնանկության) վարույթի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով: Օրենսդիրը սահմանում է, որ սույն օրենքով բոլոր իրավաբանական անձանց համար նախատեսված ընդհանուր չափանիշները, սնանկության հատկանիշները և սնանկության ընթացակարգը կիրառելի են նաև անչափ կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող, ինչպես նաև յուրահատուկ մասնագիտական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց սնանկության իրավահարաբերությունները կարգավորելիս: Սակայն, հաշվի առնելով այս խումբ իրավաբանական անձանց գործունեությունը, առանձնահատուկ դերն ու նշանակությունը, շուկայում գերիշխող դիրքը և բնական մենաշնորհ ունենալու հանգամանքը՝ օրենսդիրը նախատեսում է, որ դրանց առանձնահատկությունները պետք է սահմանվեն առանձին իրավական ակտերով, որոնք առայժմ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են: Որպես կանոն, այս կատեգորիայի պարտատերերի սնանկության վարույթին, որպես գործին մասնակցող պարտադիր սուբյեկտ, մասնակցում են պետական իշխանության մարմինները, որոնք ապահովում են պետական միասնական քաղաքականությունը տնտեսության համապատասխան ճյուղում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն): Բացի այդ, այս խումբ սուբյեկտների համար պետք տարբեր լինեն նաև սնանկության ինչպես արտաքին, այնպես ներքին հատկանիշները: Այս բացառությունը փաստում է այն հանգամանքը, որ հիշատակված իրավաբանական անձանց անվճարունակության ընթացակարգերը պետք է ունենան էական առանձնահատկություններ:

Հոդված 3. Պարտապանի անվճարունակության (սնանկության) հատկանիշները

1. Պարտապանը կարող է անվճարունակ (սնանկ) (այսուհետ՝ սնանկ) ճանաչվել միայն դատարանի վճռով, եթե ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները սույն հոդվածով նախատեսված հատկանիշների առկայության դեպքում:

2. Այն դեպքում, երբ սնանկության գործը հարուցվում է պարտատիրոջ (պարտատերերի) կողմից, պարտապանը ճանաչվում է սնանկ, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը

գերազանցող վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված հատկանիշներն առկա են:

3. Այն դեպքում, երբ սնանկության գործը հարուցվում է պարտապանի կողմից, պարտապանը ճանաչվում է սնանկ, եթե վճռի կայացման պահին ի վիճակի չէ կատարել իր դրամական պարտավորությունը (պարտավորությունները), կամ եթե նրա գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար:

1. Պարտապանը անվճարունակ է ճանաչվում միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով, որը կայացվում է սնանկության վերաբերյալ դատական գործի քննության արդյունքում: Գործի քննության ընթացքում դատարանը պարզում է երկու հանգամանք: Առաջինը՝ թե արդյոք պարտապանը ի վիճակի չէ բավարարել պարտատիրոջ (պարտատերերի) պահանջները, և երկրորդը՝ թե արդյոք պարտապանի կողմից պահանջների բավարարման այդ անհնարինության պատճառները սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված հատկանիշներն են: Ընդ որում, այդ հատկանիշները պետք է առկա լինեն սնանկության գործի քննության պահին: Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքեր պարունակվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում և 71-րդ հոդվածում: Այլ կերպ ասած, պարտապանի սնանկության հիմքում դրված է անվճարունակության սկզբունքը: Այդ սկզբունքը բխում է քաղաքացիական իրավահարաբերություններում պարտավորությունների ժամանակակից հասկացությունից, ըստ որի գույքային շրջանառության մասնակիցները պարտավոր են պատշաճ կատարել իրենց պարտավորությունները և հասարակական իրավական պարտականությունները: Իսկ նման պարտավորությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում նրանք կհայտնվեն սնանկության նախաշեմին: Ընդ որում, ի տարբերություն մի շարք այլ երկրների, պարտապանի սնանկության հիմքում դրված է պարտապանի պարտավորությունների կատարման 30-օրյա և ավելի ժամկետով կետանցը (օրինակ՝ «Անվճարունակության (սնանկության) մասին» դաշնային օրենքով սնանկության հիմքում դրված է պարտապանի երեքամսյա ժամկետով կետանցը՝ սկսած այն օրվանից երբ նա պետք է կատարեր այդ պարտավորությունը):

Սնանկության գործերը կարող են հարուցվել պարտատիրոջ (պարտատերերի) կամ պարտապանի կողմից (սեփական սնանկությունը ճանաչելու հայցով): Ընդ որում, կախված նրանից, թե հայցվորը պարտապանն է, թե պարտատերը, սույն օրենքը յուրաքանչյուր դեպքում պարտապանի համար սահմանում է մի քանի առանձին սնանկության հատկանիշներ, որոնց առկայության դեպքում միայն վերջինս կարող է ճանաչվել սնանկ:

2. Այն դեպքում, երբ սնանկության գործ է հարուցվում պարտատիրոջ կողմից, պարտապանը ճանաչվում է սնանկ, եթե նրա նկատմամբ պահանջը կազմում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումար և վճարային պարտավորությունների կետանցը հավասար կամ ավելի է 30 օրվան:

Համաձայն դատական պրակտիկայի՝ նման հայցադիմումների քննության ընթացքում հաճախ պարտապանների ներկայացուցիչները իրենց սնանկությունը վիճարկելիս հենվում են այն փաստի վրա, որ պարտապանի գույքը բավարար է եղած պարտավորությունները կամ միայն հայցվորի պարտքը մարելու համար, և ընդունելով իրենց կողմից թույլ տրված պարտավորության կետանցը, դատարանից խնդրում են մերժել սնանկության հայցադիմումը: Նմանօրինակ դեպքերում պարտապանները շփոթում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հատկանիշը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշների հետ: Սա նշանակում է, որ անկախ այն հանագամանքից, թե պարտապանի եղած ակտիվները (շենքեր, շինություններ, հիմնական միջոցներ, նյութեր, առարկաներ, այլ շրջանառու միջոցներ և ոչ նյութական ակտիվներ), դրանք դրամի վերածելու դեպքում, ծածկում են կամ չեն ծածկում պարտապանի պասիվները (պարտապանի նկատմամբ ներկայացված պահանջը), միևնույն է պարտապանի մոտ առաջանում է սնանկության հատկանիշը, երբ գործի քննության պահին պարտապանը տարբեր պատճառներով թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց: Այնուամենայնիվ, սնանկության գործընթացում պասիվին գերազանցող ակտիվներ ունեցող պարտապանը հնարավորություններ է ունենում դուրս գալ սնանկությունից ֆիանանսական առողջացման ծրագրի իրականացմամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում (սույն օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մեկնաբանվող հոդվածի վերոհիշյալ հատկանիշների սահմանմամբ կարելի է ցանկացած նորմալ կամ բարգավաճող կազմակերպության նկատմամբ սնանկության հայցադիմում ներկայացնել, քանի որ 30-օրյա ժամկետով պարտավորության կետանց կարելի է հանդիպել Հայաստանի Հանրապետությունում գործող գերակշռող մաս կազմող կազմակերպությունների մոտ, բայց սա չի նշանակում, որ այդ բոլոր կազմակերպությունները սնանկության նախաշեմին են: Մինչև սնանկության հայցադիմում ներկայացնելը պարտատերերը և պարտապանը վերջինիս թույլ տրված կետանցը կարգավորում են բանակցությունների միջոցով կամ ընդհանուր իրավասության հայցային վարույթներով: Սակայն ընդհանուր իրավասության վարույթով կայացված բռնագանձման վճռի հիման վրա հարուցված հարկադիր կատարման վարույթներում պարտատերերի պահանջները, ի տարբերություն սույն օրենքի, բավարարվում են այլ հերթականությամբ՝ այլ սկզբունքով: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 70.1-րդ հոդվածի համաձայն «Եթե միևնույն պարտապանի գույքի նկատմամբ կան բռնագանձման երկու

կամ ավելի դատարանի վճիռներ, ապա պահանջատերերի պահանջները բավարարվում են ըստ կատարողական թերթի ներկայացման հերթականության», որի արդյունքում պարտատերերից կատարողական թերթը առաջինը ներկայացրածը կստանա իր պահանջների լրիվ բավարարում, իսկ ավելի ուշ ներկայացրածը՝ մասնակի կամ ընդհանրապես չի ստանա բավարարում: Նման պարագայում ավելի ուշ ներկայացրած պարտատիրոջ շահերը թելադրում են վերջինիս պարտապանի նկատմամբ սնանկության վարույթ հարուցել, քանի որ սնանկության վարույթի հատուկ նշանակությունը կայանում է նրանում, որ պարտապանի ակտիվները բաշխվում են պարտատերերի միջև պահանջների համամասնության սկզբունքով:

Համաձայն 01.01.2004թ. ուժի մեջ մտած «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների... առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նշված օրենքով տասներեք հազար ՀՀ դրամ սահմանված նվազագույն ամսեկան աշխատավարձը: Որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 (հազար) ՀՀ դրամը: Սա նշանակում է, որ մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում նշված «օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը» հավասար է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի, ինչը կարող է փոփոխվել ՀՀ-ում գործող նվազագույն աշխատավարձի հաշվարկային չափը փոխվելու դեպքում:

3. Պարտապանի կողմից հարուցված սեփական անվճարունակության ճանաչման հիմքերից առաջինը հանդիսանում է պարտապանի որևէ դրամական պարտավորության կատարման անհնարինությունը: Ի տարբերություն պարտատիրոջ հայցադիմումով հարուցված սնանկության վարույթի, պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու համար անհրաժեշտ է, որպեսզի վճռի կայացման պահին հաստատվի նրա գույքի արժեքի անբավարար լինելու փաստը պարտատերերի պահանջները բավարարելու համար (պարտապանի ակտիվը փոքր է պասիվից), առանց այդ պարտավորությունների նվազագույնը սահմանելու:

Այսպիսով, ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է սնանկության երկու բնորոշում: Մեկնավբանվող հոդվածի համաձայն պարտատիրոջ (պարտատերերի) կողմից սնանկության գործը հարուցվելու դեպքում, պարտապանը ճանաչվում է սնանկ, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված հատկանիշներն առկա են: Մյուս ձևակերպումը տրվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28-րդ և 71րդ հոդվածներում, որոնց համաձայն. քաղաքացին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը և իրավաբանական անձը դատարանի վճռով կարող են սնանկ ճանաչվել, եթե նրանք ի վիճակի չեն բավարարել պարտատերերի պահանջները: Կա արդյո՞ք հակասություն այս երկու ձևակերպումների միջև, ինչպես է՞ն դրանք հարաբերակցվում: Այս հարցերին պատասխանելու համար

ահնրաժեշտ է բացահայտել սնանկության հատկանիշներն ու բովանդակությունը: Մրցութային իրավունքի տեսությունը առանձնացնում է այդ հատկանիշների երկու մակարդակ՝ ներքին և արտաքին:

Հատկանիշների ներքին մակարդակը դա տվյալ ձեռնարկությունում գործերի վիճակն է, նրա ակտիվների և պասիվների հարաբերակցությունը: Սնանկության դեպքում հատկանիշների այդ մակարդակը արտահայտվում է գույքի անբավարարության մեջ, իսկ որոշ պետությունների օրենսդրական տերմինալոգիայով՝ գերպարտավորվածության մեջ:

Սնանկության ներքին հատկանիշ նախատեսում է մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը, դրանք հետևյալներն են՝

- ակտիվների և պասիվների բացասական հարաբերակցությունը, այսինքն ձեռնարկության պարտավորությունների ամբողջությունը, որտեղ ընդգրկվում են վարկային և այլ ներգրավված միջոցները, կրեդիտորական պարտավորությունները, գերազանցում է ձեռնարկության գույքի արժեքը, որի կազմում կարող են ընդգրկվել հիմնական միջոցները, այլ երկարաժամկետ ներդրումները, շրջանառու միջոցները, ֆինանսական ակտիվները.

- հաշվեկշռի անբավարար կառուցվածքը. պարտապանի գույքի և պարտավորությունների այնպիսի վիճակը, երբ գույքի հաշվին չեն կարող ժամանակին բավարարվել պարտատերերի պահանջները՝ այդ գույքի ցածր լիկվիդայնության պատճառով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի տալիս անվճարունակության ներքին հատկանիշների ցանկը կամ հասկացությունը, մտցնելով սուսկ «ի վիճակի չէ» տերմինը:

Հատկանիշների արտաքին մակարդակը դա ձեռնարկության ֆինանսական հարաբերությունների արտահայտությունն է կրեդիտորների և պետության հետ (հարկային մարմիններ, արտաբյուջետային ֆոնդեր և այլն): Անվճարունակության դեպքում հատկանիշների այս մակարդակը արտահայտվում է պարտապանի կողմից իր պարտավորությունների չկատարման մեջ: Տեսաբանները այս մակարդակին են դասում հետևյալ դեպքերը՝

- պարտատերերի օրինական պահանջներով վճարումների դադարեցումը.
- պարտապանի հայտարարությունը իր անվճարունակության մասին.
- պարտապանի փախուստը, գտնվելու վայրն անհայտ լինելը.
- բռնագանձման ընթացքում գույքի անբավարարության ի հայտ գալը:

Ժամանակակից իրավական տեսությունը երկրորդ և երրորդ արտաքին հատկանիշները դիտարկում են որպես անվճարունակության հետևանք կամ որպես չարամիտ սնանկության արտահայտություն:

Անվճարունակության մասին գործող օրենքը սահմանում է մեկ արտաքին հատկանիշ. պարտապանի կողմից ընթացիկ վճարումների դադարեցումը մեկ ամսվա ընթացքում պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուց հետո:

Ի տարբերություն 1996թ.-ի օրենքի, մեկնաբանվող օրենքը սահմանում է հետևյալ արտաքին հատկանիշները՝

- պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարելու ակնհայտ անհնարինությունը (պարտապանի՝ դատարան դիմելու իրավունքի պարագայում).

- մեկ կամ մի քանի պարտատերերի մեկ կամ մի քանի պահանջների բավարարման պայմաններում այլ պարտատերերի պահանջների լրիվ բավարարման անհնարինությունը (պարտապանի՝ դատարան դիմելու պարտականության պարագայում).

- բռնագանձման ընթացքում պահանջները բավարարելու անկարողության ի հայտ գալը:

Ընդ որում պետք է ի նկատի ունենալ, որ այս հատկանիշների համաժամանակյա առկայությունը բացառվում է, քանի որ սրանցից յուրաքանչյուրը նախատեսված է դատարան դիմելու առանձին դեպքերի առումով՝ պարտապանի իրավունք և պարտականություն, պարտապանի պարտականություն, պարտատիրոջ իրավունք:

Անվճարունակության հասկացության վերլուծությունն իրականացնող որոշ տեսաբաններ գտնում են, որ անվճարունակության առկայության համար միշտ պետք է առկա լինի իրավիճակ, երբ միաժամանակ գոյություն ունեն առնվազն մեկ ներքին և առնվազն մեկ արտաքին հատկանիշ:

Հնարավոր իրավիճակները կարող են բազմազան լինել, մասնավորապես՝

-պարտապանի հաշվեկշռի անբավարար կառուցվածքը և պարտավորության չկատարումը մեկ ամսվա ընթացքում.

-պարտապանի հաշվեկշռի անբավարար կառուցվածքը, ինչի հետևանքով ակնհայտ անհնարին է պարտապանի կողմից իր պարտավորությունների կատարումը.

-պասիվների գերազանցումը ակտիվների նկատմամբ պարտապանի հաշվեկշռում և պարտատերերին բավարարում չտրամադրելը մեկ ամսվա ընթացքում.

-պասիվների գերազանցումը ակտիվների նկատմամբ պարտապանի հաշվեկշռում, ինչի հետևանքով ակնհայտ անհնարին է պարտապանի կողմից իր պարտավորությունների կատարումը:

Ըստ որոշ տեսաբանների՝ արտաքին և ներքին հատկանիշների առկայությունը միմյանցից անկախ, չի կարող հիմք հանդիսանալ անձին անվճարունակ ճանաչելու համար:

Մակայն խնդրի լուծման բանալին գտնվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տրված «սնանկության» հասկացության բովանդակության մեջ: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տալիս է անվճարունակության ընդհանուր ձևակերպումը՝ չնչելով դրա ներքին և արտաքին հատկանիշները: Կախված նրանից, թե ինչպիսի մեկնաբանություն կտրվի «կարող են սնանկ ճանաչվել, եթե նրանք ի վիճակի չեն բավարարել պարտատերերի պահանջները» դրույթին, պարզ կդառնա, թե որ լուծումը կամրագրվի որպես անվճարունակության հասկացություն:

Մեր կարծիքով անվճարունակության արտաքին հատկանիշը ինքնուրույնաբար պետք է հնարավորություն ստեղծի անվճարունակի կարգավիճակ ստանալու համար: Այսպիսով, օրենսդրի կողմից արտաքին հատկանիշի գերակայության սահմանումը ներքին հատկանիշների նկատմամբ համարում ենք առավել ճիշտ և արդյունավետ լուծում:

Օտարերկրյա պետությունների մեծամասնության իրավունքը թույլ է տալիս անվճարունակ հայտարարել անձին ոչ միայն ներքին և արտաքին հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում, այլև նրանցից միայն մեկի առկայության դեպքում: Ահավասիկ, 1994թ. նոր գերմանական օրենսդրությունը անվճարունակության մասին գործի հարուցման հիմք է համարում անվճարունակությունը, անվճարունակության վտանգը և գերպարտավորվածությունը: Ցանկացած նշված դեպքում գերմանական դատարանը պարտավոր է որոշում կայացնել պարտապանի անվճարունակության մասին:

Անվճարունակությունը գերմանական իրավունքի համաձայն դա վճարումների դադարեցումն է, այսինքն արտաքին հատկանիշը: Անվճարունակության վտանգը առկա է այն դեպքում, երբ պարտապանն ի վիճակի չի լինի կատարել իր պարտավորությունները՝ դրանց կատարման ժամկետի վրա հասնելու պահին: Ապագա անվճարունակության որոշիչը դա ստացվելիք և կատարվելիք վճարումների հարաբերակցությունն է: Գնահատման օբյեկտիվ չափանիշը ֆինանսական պլանն է, որը ներառում է լիկվիդային միջոցները, կրեդիտորաական և դեբիտորական պարտքերը: Ֆինանսական պլանում պետք է արտացոլվեն տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական վիճակի զարգացումը մինչև պարտավորությունների կատարման ժամկետը:

Անվճարունակության վտանգի դեպքում դիմելու իրավունքը պատկանում է բացառապես պարտապանին: Ներքին այս հատկանիշին առավելություն տալը հիմնավորվում է նրանով, որ ըստ էության պարտապանը բոլորից լավ է տիրապետում

իր տնտեսական վիճակին և նա առավել շահագրգռված պետք է լինի իր պարտավորությունների կատարման հարցում:

Մաքուր կամ գերպարտավորվածությունը ըստ գերմանական օրենքի որոշվում է գույքի և պարտավորությունների չափի հարաբերակցությամբ:

Այսպիսով, գերմանական օրենսդրությունը, անվճարունակության գործի հարուցումը առաջ է բերում դեպի ավելի վաղ ժամկետներ, քանզի հարուցման համար անհրաժեշտ է թեկուզ մեկ ներքին կամ մեկ արտաքին հասկանիշի առկայություն: Այս ժամանակային տեղաշարժի արդյունքում հավասար այլ պայմանների առկայության դեպքում մեծանում է պարտատերերի միջև բաշխվող գույքի ծավալը: Մրցութային զանգվածի մեծացումը բերում է նրան, որ առաջին հերթին մեծանում է անվճարունակության գործերի քանակը, և երկրորդ, պարտատերերի բավարարում ստանալու հավանականությունը մեծանում է:

Այլ պետությունների օրենսդրություններում ևս (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Չինաստան, Լեհաստան) օրենսդրորեն լուծվում է միայն այն խնդիրը, թե ինչ հիմքերի առկայության դեպքում այս կամ այն սուբյեկտը կարող է դիմել դատարան՝ անձին անվճարունակ ճանաչելու պահանջով: Նախադեպային իրավունքի երկրներում անվճարունակ հայտարարելու հիմքերի առկայության հարցը լուծում է դատարանը: Ընդ որում դատարանը իրականացնում է պարտապանի գույքի գնահատում, որոշելու համար պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված դրամական պարտավորությունը՝ քաղաքացիա-իրավական պարտավորության տեսակ է, համաձայն որի պարտապանը պարտավորվում է որոշակի գումար վճարել պարտատիրոջը: Վճարային պարտավորություններ են նաև բյուջետային և արտաբյուջետային ֆոնդեր կատարվող պարտադիր վճարումները (օրինակ՝ սոցվճարներ, հարկեր, տուրքեր և այլն), ինչպես նաև պայմանագրային (այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերից բխող) և այլ դրամական պարտավորություններ:

Այդպիսի պարտավորությունների ծագման հիմք կարող են հանդիսանալ ոչ միայն պայմանագրերը, այլև անհիմն հարստացումը, վնաս պատճառելը և այլն: Դրամական պարտավորությունների չափը որոշվում է ՀՀ արժույթով (ՀՀ դրամով ՀՀ ՔՕ-ի հոդված---):

Հոդված 4. Մնանկության գործերի ենթակայությունը

1.Սնանկության գործերը քննում են Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի (այսուհետ՝ դատարան)՝ սնանկության գործեր քննող դատավորները (այսուհետ՝ դատավոր):

2.Սնանկության գործերը, այդ թվում դրանցով կայացված վճիռների՝ վճռաբեկության կարգով վերանայումից և բեկանումից հետո, քննվում են միանձնյա:

1. 1996թ. սնանկության օրենքի 76-րդ հոդվածը սահմանում էր այն դատարանների անվանումները և սպասարկման տարածքները որոնք պետք է քննեն անվճարունակության գործերը՝ մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված տնտեսական դատարանի կազմավորումը: Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանը կազմավորվել է համաձայն «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում և «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 11.09.2001թ. ՀՀ օրենքների ուժով և վերջիններիս համաձայն ՀՀ տնտեսական դատարանի օրենքով սահմանված կարգով ձևավորման պահից ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանի և առաջին ատյանի դատարանի վարույթներում եղած տնտեսական գործերը (այդ թվում՝ սնանկության գործերը) փոխանցվեցին ՀՀ տնտեսական դատարան:

ՀՀ տնտեսական դատարանի կողմից միանձնյա կարգով սնանկության գործերի քննության ժամանակ ակնհայտ դարձավ, որ անհրաժեշտ են անվճարունակության (սնանկության) գործեր քննող մասնագիտացված դատավորներ: Նման անհրաժեշտությունը պայմանավորված էր սնանկության վարույթի առանձնահատկություններով, որն իրենից ենթադրում է ոչ միայն մասնագիտացված դատարանի, այլև նման մասնագիտացում ունեցող դատավորների կողմից իրականացվող վարույթ: ՀՀ նախագահի 09.09.2002թ. հրամանագրով նշանակվեցին անվճարունակության գործեր քննող դատավորներ, որոնք Հայաստանի Հանրապետությունում առաջին ուղղակի ոլորտով մասնագիտացված դատավորներն են:

Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում սահմանված է քաղաքացիական և տնտեսական գործերի քննության ենթակայությունը, այնուամենայնիվ սույն օրենքը սնանկության գործերի համար լրացուցիչ և հատուկ ենթակայություն է սահմանում, ըստ որի անկախ նրանից, թե ովքեր են պարտատերը և պարտապանը, սնանկության վերաբերյալ բոլոր գործերը քննում են ՀՀ տնտեսական դատարանի սնանկության գործեր քննող դատավորները: Սնանկության գործերը ոչ մի դեպքում չեն կարող փոխանցվել այլ դատարանների կամ ՀՀ տնտեսական դատարանի այլ դատավորների քննությանը:

2. Ի տարբերություն վերաքննության կանոններով քննվող գործերի, որի դեպքում քաղաքացիական գործերը վճռաբեկության կարգով վերանայումից և բեկանվելուց հետո քննվում են երեք դատավորի կազմով, սնանկության վերաբերյալ գործերը վճռաբեկության կարգով վերանայումից և բեկանվելուց հետո քննվում են միանձնյա՝ այլ դատավորի կողմից: Օրենսդիրը այս դատավարական նորմը սահմանել է հաշվի առնելով, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռով սնանկության գործի վարույթը չի ավարտվում: Դրանից հետո պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացրած դատավորի կողմից մեկ պարտապանի նկատմամբ սնանկության գործընթացում կայացվում են բազմաթիվ այլ դատական ակտեր: Պետք է ավելացնել նաև, որ սույն օրենքի 46-րդ հոդվածով նախատեսված պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը, ինչպես նաև սնանկության գործն ավարտող դատարանի վճիռը վճռաբեկության կարգով վերանայումից և բեկանվելուց հետո նույնպես քննվում է նույն սկզբունքով, միանձնյա՝ այլ դատավորի կողմից: Սակայն, այս դեպքում սնանկության տվյալ գործի վարույթը շարունակում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացրած դատավորը:

Հոդված 5. Պարտապանի՝ դատարան դիմելու պարտականությունը

1. Պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան, եթե՝

ա) մեկ կամ մի քանի պարտատերերի պահանջների բավարարումը անհնար է դարձնում այլ պարտատերերի հանդեպ դրամական պարտավորությունների լրիվ կատարումը.

բ) պարտապանի կառավարման բարձրագույն մարմինը որոշում է ընդունել պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան դիմելու մասին:

2. Պարտապան-իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները ամբողջովին բավարարելու համար:

3. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումը պետք է դատարան ներկայացվի ոչ ուշ, քան համապատասխան հիմքերի հայտնաբերումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է, թե երբ է պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր սեփական սնանկությունը ճանաչելու հայցադիմում ներկայացնել դատարան: Չնայած, որ սույն օրենքը առանձին հոդվածով չի սահմանում պարտապանի իրավունքը՝ սեփական սնանկությունը ճանաչելու

հայցադիմում ներկայացնելու համար, սակայն դա ակնհայտ է դառնում սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և սույն հոդվածի դրույթներից, որով օրենսդիրը սպառիչ սահմանել է պարտապանի դատարան դիմելու պարտավորության դեպքերը:

Պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան այն դեպքում, երբ ակնհայտ է դառնում, որ մեկ կամ մի քանի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինքը չի կարողանա կատարել սահմանված ժամկետում իր դրամական պարտավորությունները լրիվ ծավալով այլ պարտատերերի հանդեպ: Խոսքը վերաբերում է այնպիսի իրավիճակներին, երբ պարտավորությունների կատարման ժամկետը դեռևս չի լրացել, բայց գոյություն ունեն փաստեր, որոնք ակնհայտ վկայում են, որ ցանկացած դրամական պարտավորության կատարման ժամկետը վրա հասնելու պահին /որոշ ժամանակ անց/ պարտապանը չի կարողանա կատարել իր դրամական պարտավորությունները բոլոր պարտատերերի հանդեպ: Իսկ նույն իրավիճակում, երբ պարտապանը ունի ընդամենը մեկ պարտատիրոջ նկատմամբ անվիճելի պարտավորություն, ապա սեփական անվճարունակությունը ճանաչելու հայցով դատարան դիմելը կդառնա պարտապանի իրավունքը, ոչ թե պարտականությունը: Այսպես, վերոհիշյալ իրավիճակում պարտապանի մեկ պարտատիրոջ և մեկից ավելի պարտատերեր լինելու հանգամանքը փոխվելու դեպքում փոխվում է նաև պարտապանի դատարան դիմելու կարգավիճակը /դիրքորոշում/ (իրավունք և պարտականություն): Մա բացատրվում է նրանով, որ պարտապանի պարտավորությունները մեկից ավելի պարտատերերի նկատմամբ լինելու դեպքում չի պահպանվի բոլոր պարտատերերի պարտավորությունների պահանջների բավարարման համամասնության սկզբունքը, ինչը հնարավոր է անել անվճարունակության դաշտում: Սրանով օրենսդիրը պաշտպանում է բոլոր պարտատերերի շահերը և պարտապանին օրենքով պարտավորեցնում է դիմել դատարան սեփական անվճարունակությունը ճանաչելու հայցով: Սույն օրենքի 7-րդ հոդվածում օրենսդիրը գույքային պատասխանատվություն է սահմանել պարտապանի հիշյալ պարտականությունը չկատարելու համար:

Պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան նաև այն դեպքում, երբ պարտապանի կառավարման բարձրագույն մարմինը այդ մասին որոշում է ընդունել: Նման իրավիճակ կարող է առաջանալ պարտատերերի տարեկան կամ արտահերթ ժողովների գումարման ժամանակ, երբ գործադիր մարմնի հաշվետվության արդյունքում ի հայտ են գալիս սույն հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով և (կամ) սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշները:

2. Սույն օրենքը նախատեսում է ևս մեկ դեպք, երբ պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան: Այսպես, եթե իրավաբանական անձի լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներին

ամբողջովին բավարարելու համար, պարտապան-իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը պարտավոր է սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնել դատարան: Այս դրույթը համընկնում է սույն օրենքի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ նորմերին: Այս դեպքում դատարան դիմելու պարտականությունը ընկած է պարտապան-իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովի վրա, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Նշանակման պահից լուծարման հանձնաժողովին են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող իրավաբանական անձի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը»:

Մեկնաբանվող մասից ենթադրվում է, որ պարտապանի բարձրագույն մարմնի կողմից իրավաբանական անձի լուծարման մասին որոշում կայացնելիս սույն օրենքով սահմանված սնանկության հատկանիշներն առկա չեն եղել, սակայն լուծարման գործընթացում պարտատերերի հայտնաբերման, դրանց պահանջների հաշվառման և (կամ) պարտապանի գույքի արժեքը նվազելու հետևանքով առաջացել են սույն օրենքով սահմանված սնանկության հատկանիշներ:

3. Բացի սա, օրենքը տասնօրյա ժամկետ է սահմանում պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումը դատարան ներկայացնելու համար՝ սկսած այն պահից, երբ վերը նշված հիմքերը հայտնաբերվել են:

Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի սահմանած ժամկետը հարց է առաջացնում, թե ե՞րբ կարող են վրա հասնել նշված դեպքերը և ինչպիսի՞ իրադարձության վրա հասնելն է համարվում նշված ժամկետի սկիզբ:

Մեկնաբանվող մասի նշված ժամկետի սկիզբ կարող է համարվել ցանկացած իրադարձություն, որի արդյունքում ակնհայտ կդառնա մեկ կամ մի քանի պարտատերերի պահանջների բավարարման արդյունքում այլ պարտատերերի հանդեպ դրամական պարտավորության կատարման անհնարինությունը: Նման իրադարձությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ կարող է վրա հասնել.

- 1) գործունեության տարեկան արդյունքում հաշվեկշռի կազմման ժամանակ, որի համար ժամկետի սկիզբ կհամարվի համապատասխան հաշվեկշռի կազմման և ստորագրման օրը,
- 2) աուդիտի անցկացումից հետո, որի համար ժամկետի սկիզբ կհամարվի աուդիտորական եզրակացությունը կազմելու և այն իրավաբանական անձին հանձնելու օրը,
- 3) ցանկացած դրամական պարտավորություն կատարելուն նախորդող օրը, քանզի մեկնաբանվող հոդվածը սահմանում է դատարան դիմելու պարտապանի պարտականություն և դրամական պարտավորությունը կատարելուց առաջ, կարծում ենք, պարտապանն անպայմանորեն պետք է համեմատի նման պարտավորության կատարումից հետո այլ պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների չափը և դրանց մարման հնարավորությունը,
- 4) լուծարվող իրավաբանական անձի համար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշիռ կազմելու օրը և (կամ) գույքի օտարման փուլում այն օրը, երբ գույքի

արժեքը նվազել է այնքան, որի վաճառքից առաջացած գումարը թույլ չի տա բավարարել բոլոր պարտատերերի պահանջները:

Նման իրադարձություններից ցանկացածի վրա հասնելու պահից սկսած պարտապանը պարտավոր է դիմել դատարան և նման պարտականության կատարման համար հիմնադրի (հիմնադիրների) որոշումը պարտադիր չէ:

Պարտապանի կառավարման բարձրագույն մարմնի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան դիմելու որոշման կայացման համար հիմք կարող է հանդիսանալ ինչպես վերը նշված հիմքերի մասին նրանց իմանալը (արտահերթ ժողով և այլն), այնպես էլ իրենց իրավասությունների շրջանակում տնտեսվարող սուբյեկտի տարեկան հաշվետվությունների քննարկումը և այլ դեպքերը, որի համար ժամկետի սկիզբ կհամարվի այդ մարմնի ժողովների գումարման ամսաթվերը:

Հոդված 6. Պարտատիրոջ կամ այլ անձանց՝ դատարան դիմելու պարտականությունը

1. Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում հարկերի, տուրքերի պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դիմել դատարան հետևյալ դեպքերում՝

ա) հարկային պետական ծառայության մարմինները՝ հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումների գծով վճարումն ուշացնելու դեպքում՝ հարկերի վճարման համար սահմանված ժամկետին կամ հարկային պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում.

բ) սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը՝ պարտադիր սոցիալական վճարների վճարումն ուշացնելու դեպքում՝ պարտադիր սոցիալական վճարի վճարման համար սահմանված ժամկետին կամ պարտադիր սոցիալական վճարների պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում.

գ) համայնքի ղեկավարը՝ տուրքերի կամ պարտադիր վճարումների, ինչպես նաև համայնքի այլ դրամային պահանջներով պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում՝ այդ վճարների վճարման համար սահմանված ժամկետին կամ նման վճարային պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում.

դ) այլ իրավասու պետական մարմինները՝ մյուս դրամային պարտավորություններով՝ տվյալ պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում՝ այդ վճարների վճարման համար սահմանված ժամկետին հաջորդող 6 ամսվա ընթացքում.

2. Եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվել է, որ ԴԱՀԿ ծառայության մեկ կամ մի քանի կատարողական վարույթներով պարտատիրոջ (պարտատերերի) պահանջը բավարարելու դեպքում

գույքի անբավարարության հետևանքով անհնարին է դառնում այլ կատարողական վարույթներով պարտատերերի հանդեպ պարտավորությունների կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դիմել դատարան, անկախ նրանից այդ բոլոր կատարողական վարույթները գտնվում են նույն հարկադիր կատարողի մոտ, թե՛ ոչ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված պետական մարմինների կողմից սահմանված ժամկետում սնանկության հայցադիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները՝ ՀՀ դատախազության մասին օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածով նախատեսված պետական մարմինները և պաշտոնատար անձինք կարող են հրաժարվել հայցից միայն այն դեպքում, երբ պարտավորության կատարման հետևանքով դրա չափը նվազել է սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված չափից:

1. Տնտեսական դատարանի կողմից սնանկության գործի հարուցման հիմք է պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում դատարան ներկայացնելը այն անձի կողմից, ով օրենքով սահմանված կարգով իրավասու է նման հայցով դիմել տնտեսական դատարան: Այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր են սնանկ ճանաչելու հայցադիմումով դիմել դատարան, սահմանված է սույն մասով:

Սնանկության մասին նոր օրենքը նախատեսում է, որ բացի պարտապանից սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան պարտավոր են դիմել նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով: Այդ մարմիններն են՝ հարկային պետական ծառայության մարմինները, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը, համայնքի ղեկավարը Հսկողություն իրականացնելու նպատակով սույն հոդվածով օրենսդիրը սահմանել է այն անձանց շրջանակը, ովքեր որոշակի շահագրգռվածություն կարող են ունենալ պարտապանի գործարքներում: Այդ հսկողությունը հնարավորություն է տալիս զերծ մնալ սնանկության գործընթացում պարտապանի և շահագրգիռ անձանց միջև կնքված պարտատերերի համար ոչ շահավետ գործարքներից:

Օրինակ՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով սահմանված է «Կառավարչի պաշտոնում չի կարող նշանակվել, իսկ նշանակված լինելու դեպքում ենթակա է ազատման այն անձը, որը շահագրգիռ է պարտատերերի կամ պարտապանի նկատմամբ»,

54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու՝ պարտապանի կողմից կատարված անհատույց

փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում»:

Իսկ 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ շահագրգիռ անձին գույքի ուղղակի գործարքով վաճառքի դեպքում չի կարող տրվել որևէ արտոնություն այլ անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի» և այլն: և այլ իրավասու պետական մարմինները:

Սույն օրենքը պարտավորեցնում է պետական մարմիններին պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնել վճարային և դրամային պարտավորություններով՝ տվյալ պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում՝ այդ վճարների վճարման համար սահմանված ժամկետին հաջորդող 6 ամսվա ընթացքում:

Սույն օրենքը այլ պետական մարմիններ սահմանելով ի նկատի է ունենում ցանկացած պետական մարմին, որի հանդեպ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կունենա վճարային պարտավորություն: Նման դրույթը մեծապես կիրառելի է մասնավորապես այն պետական մարմինների նկատմամբ որոնք իրավասու են հավաքագրելու պարտադիր պետական տուրքեր, վճարներ և այլն: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության անունից լիցենզիաներ (թույլտվություն) տալու իրավասու նախարարությունները՝ լիցենզիաների համար վճարվող պետական տուրքերի մասով, մաքսային պետական կոմիտեն՝ մաքսատուրքերի գանձման մասով և այլն:

Պետական մարմինների ցանկը լրացնում է ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կամ հարկադիր կատարողը: ԴԱՀԿ ծառայողի կողմից սնանկության հայցադիմումով դատարան դիմելու պարտականությունը ՀՀ սնանկության մասին նախկին երկու օրենքներով նախատեսված չի եղել և նման իրավասությամբ օժտված չլինելու պայմաններում ԴԱՀԿ ծառայողները ստիպված էին լինում ավարտել կատարողական վարույթները գույքի անբավարարության պատճառաբանությամբ (ԴԱՀԿ մասին օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետ): Արդյունքում ձևավորվում էր իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի մի մեծ խումբ, որոնք չունենալով գույք/դրամական միջոցներ մնում էին քաղաքացիաիրավական շրջանառությունում և առաջնային վտանգ էին ստեղծում նոր պարտավորություններ ստանձնելու և դրանք չկատարելու համար: Ավելին, նման տնտեսվարող սուբյեկտների առկայությունը հնարավորություն չէր տալիս ստանալ ՀՀ տնտեսության իրական պատկերը և տնտեսական վերլուծությունները բերում էին սխալ հանգուցալուծումների: Նման սուբյեկտների

գոյությունը հանգեցնում էր նաև պետական բյուջեի ոչ իրական կազմման և պլանավորման: ԴԱՀԿ ծառայողին սնանկության հայցով դատարան դիմելու իրավասությամբ օժտելը և այդ իրավասության կատարելու պարտականության ու դեպքերի սույն օրենքով սահմանումը հանգեցնում է դրա պարտաճանաչ կատարման, որն էլ կմեծացնի պարտատերերի պահանջների բավարարման մակարդակը և նրանցից յուրաքանչյուրի շահերի պաշտպանության հնարավորությունը: Մնանկության հետևանքով նման տնտեսավարող սուբյեկտների դուրս գալը քաղաքացիաիրավական շրջանառությունից կրերի տնտեսության առողջացման և իրական պատկերի:

Հատկանշական է, որ մեկնաբանվող օրենքը ի տարբերություն այլ պետական մարմինների դատարան դիմելու դեպքերի, ԴԱՀԿ ծառայողի դատարան դիմելու դեպքում պարտավորության չափ չի սահմանում: ԴԱՀԿ ծառայողի համար հայցադիմում ներկայացնելու միակ հիմքը դա այն է, երբ տնտեսավարող սուբյեկտի կատարողական վարույթներով պարտատիրոջ (պարտատերերի) պահանջի բավարարումը կհանգեցնի այլ կատարողական վարույթներով պարտատիրոջ (պարտատերերի) հանդեպ պարտավորության կատարման անհնարինությանը՝ գույքի անբավարարության հետևանքով: Օրենսդրի այս ձևակերպումը վերլուծելիս ակնհայտ է, որ սնանկության հայցով դատարան դիմելու և նման դեպքի համար անհրաժեշտ է ամենաքիչը երկու կատարողական վարույթ: Այսինքն՝ օրենքի նման կարգավորումից դուրս է մնացել այն հանգամանքը, որ մեկ կատարողական վարույթի շրջանակներում կարող են առկա լինել միանգամից երկու պարտատերեր, սակայն այս իրավիճակում պարտապանի գույքի անբավարարության դեպքում պարտատերերից մեկի պահանջը չբավարարելու դեպքում հարկադիր կատարողի մոտ սնանկության հայցադիմում ներկայացնելու պարտավորություն չի առաջանում:

Օրենսդիրը բացառել է նաև կատարողական վարույթները մեկ ԴԱՀԿ կատարողի մոտ լինելու հանգամանքը, ինչը ենթադրյալ հասկացվում է, որ ոչ թե հարկադիր կատարողի պարտավորությունն է վերը նկարագրված դեպքը վրա հասնելու պահից սնանկության հայցով դատարան դիմելը, այլ ԴԱՀԿ ծառայության:

3. Օրենքը սահմանում է նաև, որ պետական մարմինների կողմից սահմանված ժամկետում սնանկության հայցադիմում չներկայացնելու դեպքում դրանք ներկայացնում են դատախազության մարմինները: Սակայն այս դրույթը պրակտիկայում չգործող է դարձել, քանի որ ՀՀ դատախազության մարմինները օժտված չեն նման հայցադիմումներ ներկայացնելու լիազորությամբ: Դատախազության մարմինների լիազորությունները սահմանված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես 4-րդ հոդվածով, ըստ որի 2-րդ պարբերությամբ սահմանված է, որ դատախազության մարմինների վրա չեն կարող դրվել պարտականություններ, որոնք չեն բխում ՀՀ Սահմանադրությունից և «Դատախազության մասին» ՀՀ օրենքից: Տվյալ դեպքում «Դատախազության մասին» ՀՀ օրենքով դատախազությունը նման լիազորություններ կամ պարտականություններ չունի:

4. Պարտատերերի պահանջների մասնակի կատարումը դեռևս հայցից հրաժարվելու հիմք չէ պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար: Օրենքը համապատասխան մարմիններին թույլատրում է հրաժարվել հայցից միայն այն դեպքում, երբ պարտավորության կատարման հետևանքով դրա չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից: Այսինքն, երբ պարտապանի մոտ վերանում է սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հատկանիշը: Սակայն նման նվազման դեպքը չի կարող վերաբերվել հարկային և սոցիալական ապահովագրության պետական մարմիններին, քանի որ նրանց նման լիազորությունը սահմանափակված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերությամբ: Նշված հոդվածների դրույթների համաձայն այդ մարմինները չեն կարող սնանկ ճանաչելու մասին հայցից հրաժարվել, քանի դեռ պարտապանի պարտավորությունները այդ մարմինների նկատմամբ մարված չեն:

Հոդված 7. Անձնական գույքային պատասխանատվությունը դատարան դիմելու պարտականությունը չկատարելու համար

1. Պարտապանի սնանկությունը ճանաչելու հայցադիմումը սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված անձանց կողմից նույն հոդվածում սահմանված դեպքերում և ժամկետում չներկայացնելու դեպքում, հայցադիմում ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պարտատերերի առջև սուբսիդիար պատասխանատվություն են կրում պարտապանի այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ժամկետը լրանալուց հետո: Նույն պատասխանատվությունն առաջանում է նաև հարկադիր կատարողի համար՝ սույն օրենքի 6-րդ հոդվածում վերջինիս համար սահմանված պարտականությունը չկատարելու դեպքում:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձինք նույն հոդվածում նախատեսված դեպքերում և ժամկետում պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում չներկայացնելու դեպքում անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար:

1. Այս հոդվածում սահմանված են պարտապանի պատասխանատվության կանոնները սույն օրենքի պահանջները չկատարելու, մասնավորապես, օրենքով սահմանված դեպքերում և կարգով սնանկ ճանաչելու մասին հայցադիմում դատարան չներկայացնելու համար:

Պարտապանի կողմից սնանկության մասին հայցադիմում դատարան չներկայացնելն առաջացնում է քաղաքացիաիրավական հետևանքներ: Այն է՝ այն անձինք, ում վրա օրենքով սահմանված կարգով դրված է այդպիսի պարտականություն և այն չի կատարվում օրենքով սահմանված դեպքերում և ժամկետում, կրում են անձնական գույքային և սուբսիդիար պատասխանատվություն պարտապանի պարտավորությունների համար: Սուբսիդիար պատասխանատվություն են կրում սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք և հարկադիր կատարողն օրենքով սահմանված պարտականությունը չկատարելու դեպքում:

Պարտատերերի կողմից սուբսիդիար պատասխանատվության հետ կապված պահանջի ներկայացման կարգը սահմանված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 415-րդ հոդվածում, համաձայն որի՝ «մինչև պահանջներն այն անձին ներկայացնելը, ով օրենքին, այլ իրավական ակտերին կամ պարտավորության պայմաններին համապատասխան կրում է հիմնական պարտապանի պատասխանատվությանը լրացուցիչ պատասխանատվություն (սուբսիդիար պատասխանատվություն), պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապանին: Եթե հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին»:

Հայցերը, որոնցով անձինք ենթարկվում են սուբսիդիար պատասխանատվության, ներկայացվում են ոչ թե սնանկության գործով վարույթի շրջանակներում, այլ ընդհանուր հայցային վարույթի կարգով: Այդպիսի հայցվորի պահանջի չափը որոշվում է էլնելով պարտապանի ընդհանուր պարտքի գումարի և սնանկության գործի քննության արդյունքում մարված գումարի տարբերությունից:

Պարտապանի ղեկավարի և հարկադիր կատարողի համար նման պարտականություն և պատասխանատվություն սահմանելով՝ օրենսդիրը պաշտպանում է պարտատերերի շահերը: Միաժամանակ, օրենսդիրը հնարավորություն է ընձեռում պարտատերերին սույն օրենքով սահմանված դեպքում վնասներ կրելու պարագայում դիմելու դատարան՝ իրենց պարտականությունը չկատարած մեղավոր անձանց սուբսիդիար պատասխանատվության ենթարկելու պահանջով:

2. Մեկնաբանվող օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված իրավասու պետական պաշտոնատար անձինք նույն հոդվածով նախատեսված դեպքերում և ժամկետում հայցադիմում չներկայացնելու համար անձնական գույքային պատասխանատվություն են կրում դրա հետևանքով Հայաստանի Հանրապետությանը և համայնքին պատճառված վնասի համար՝ այդ վնասի չափով:

Նախորդ հոդվածով օրենսդիրը պարտավորեցնում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, մասնավորապես՝ հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններին և համայնքների ղեկավարներին սույն օրենքով նախատեսված դեպքերում և ժամկետներում սնանկության հայցադիմում ներկայացնել պարտապանների նկատմամբ: Օրենսդիրը նման պարտականություն է սահմանում և այդ պարտականությունը չկատարելու համար գույքային պատասխանատվություն է նախատեսում իրավասու պետական պաշտոնատար անձանց համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ անձինք գործում են պետության և համայնքի անունից, և նրանց նման անգործության դեպքում վնասներ կհասցվեն պետությանը և համայնքին: Սրանով օրենսդիրը սահմանել է նորմեր, որոնք կնվազեցնեն պետությանը և համայնքին վնասներ պատճառելու հավանականությունը: Այնուամենայնիվ, նման վնասներ առաջանալու դեպքում դրանք կհատուցվեն մեղավոր պաշտոնատար անձանց կողմից, վերջիններիս գույքի հաշվին:

Հոդված 8 Կեղծ և կանխամտածված սնանկություն

1. Եթե պարտապանն իր սնանկությունը ճանաչելու հայցադիմում է ներկայացնում դատարան՝ ակնհայտորեն հնարավորություն ունենալով ամբողջությամբ բավարարել պարտատերերի պահանջները (կեղծ սնանկություն), ապա դատավորի կողմից հայցադիմումը մերժվելու դեպքում պարտապանը պատասխանատվություն է կրում հայցադիմումը ներկայացնելու հետևանքով պարտատերերին պատճառված վնասների համար:

2. Այն դեպքում, երբ պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում պարտապանի ղեկավարի մեղքով /ուղղակի կամ անուղղակի գործողություններով (անգործությամբ) պարտապանի գործունեությունը ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ապա պարտապան-իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ այլ անձինք կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

1. Սնանկության մասին նոր օրենքով հստակեցվել են կեղծ սնանկություն և կանխամտածված սնանկություն հասկացությունները:

Կեղծ սնանկություն ասելով հասկանում ենք, երբ պարտապանն իր սնանկությունը ճանաչելու հայցադիմում է ներկայացնում դատարան, այն դեպքում, երբ բացակայում են սնանկության հատկանիշները, այլ կերպ ասած, ունենալով

բավարար գույք (ակտիվ) բոլոր պարտատերերի պահանջները լրիվ ծավալով բավարարելու համար, այնուամենայնիվ պարտապանը սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում է ներկայացնում դատարան: Կեղծ սնանկության փաստը հաստատվելու դեպքում, պարտապանը պատասխանատվություն է կրում սնանկության վարույթը սկսելու հետևանքով պարտատերերին պատճառված վնասների համար: Իսկ այդպիսի վնասներ կարող են առաջանալ, քանի որ պարտապանի սնանկության վարույթը սկսելու հետ կապված դադարում են պարտապանի այն պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց կատարման ժամկետները դեռ ավարտված չեն, կասեցվում են կատարողական վարույթների ընթացքը, այլ դատական ակտերի, այլ կատարողական փաստաթղթերի, պայմանագրային պարտավորությունների կատարումը և այլն: Տվյալ պարագայում՝ դատավորի կողմից սնանկության հայցադիմումը մերժվելու դեպքում պարտատիրոջ (պարտատերերի) կրած վնասները և լրացուցիչ ծախսերն ենթակա են հատուցման պարտապանի կողմից:

Ակնհայտ անհիմն հայց ներկայացնելու հետևանքով պատճառված վնասների հատուցման իրավունք ձեռք է բերում նաև ընդհանուր իրավասության վարույթներում քաղաքացիական գործով պատասխանողը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի ուժով, ըստ որի «ակնհայտ ամհիմն հայցը դատարանի կողմից մերժվելու դեպքում պատասխանողն իրավունք ունի ընդդեմ հայցվորի հայց հարուցել նույն դատարան՝ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով»: Ավելացնենք նաև, որ հայցի ակնհայտ լինելու հանգամանքը պետք է դատարանի կողմից այդպիսին որոկված կամ հաստատված լինի:

Մեկնաբանվող հոդվածից ակնհայտ երևում է, որ պարտապանի սնանկությունը կեղծ որակելու համար օրենսդիրը պարտադիր պայման է համարում, որպեսզի դատարանը մերժի պարտապանի ներկայացրած հայցադիմումը: Ընդ որում, սույն մասում «դատավորի կողմից հայցադիմումը մերժելը» օրենսդիրը ի նկատի չի ունենում հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու դեպքերը (սույն օրենքի հոդված 15), այստեղ խոսքը գնում է գործի քննության արդյունքում դատարանի վճռով հայցը մերժելու մասին: Դատարանն ամեն դեպքում սույն օրենքի պահանջներին համապատասխանող հայցադիմումը վարույթ է ընդունում, այնուհետև վճռով լուծում է պարտապանի հայցը մերժելու կամ բավարարելու հարցը:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում սահմանված է պարտապան-իրավաբանական անձի ղեկավարների, նրա հիմնադիրների և այլ անձանց պատասխանատվությունը, որոնց մեղքով պարտապանը դարձել է անվճարունակ, այսինքն տեղի է ունեցել կանխամտածված սնանկություն: Պարտապանի սնանկությունը համարվում է կանխամտածված, պարտապանի կանոնադրական կապիտալին տիրապետող կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում պարտապանի ղեկավարի մեղքով, որոնք իրավունք ունեն ուղղակի կամ

անուղղակի գործողություններով ուղղորդել պարտապանի գործունեությունը: Կանխամտածված սնանկության քաղաքացիական հետևանքն այն է, որ մեղավորները կրում են համապարտ պատասխանատվություն պարտապանի պարտավորություններով՝ վերջինիս գույքի անբավարարության դեպքում:

Ինչպես կեղծ, այնպես էլ կանխամտածված սնանկությունը Հայաստանի Հանրապետությունում քրեորեն հետապնդելի է: Այսպես, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի՝

«Կանխամտածված սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի՝

«Կեղծ սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում սեփական սնանկության ճանաչման մասին հայցադիմում ներկայացնելը՝ պարտատերերին մոլորեցնելու և նրանց պահանջների բավարարման հետաձգում, տարաժամկետում, նվազեցում, սառեցում կամ մորատորիում ստանալու, հավասարապես նաև պարտքերի չվճարման նպատակով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:»

Հոդված 9 Շահագրգիռ անձինք

1. Պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձինք են համարվում՝

ա) պարտապանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձինք.

բ) պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամները, պարտապանի կոլեգիալ գործադիր մարմնի անդամները,

գլխավոր հաշվապահը (հաշվապահը), այդ թվում՝ սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձինք.

զ) պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսին տիրապետող անձը (անձինք).

դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամները:

Պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձ է համարվում նաև այն անձը, որը սույն կետում նշված անձանց հետ գտնվում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված հարաբերությունների մեջ:

2. Ֆիզիկական անձի նկատմամբ շահագրգիռ է համարվում նրա ամուսինը, նրա հետ ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

3. Սույն օրենքով նախատեսված դեպքերում կառավարչի և պարտատերերի նկատմամբ շահագրգիռ անձինք որոշվում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգով:

1. Օրենքով սահմանված շահագրգիռ անձանց շրջանակը բաժանվում է երկու խմբի՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Շահագրգիռ իրավաբանական անձանց թվին են դասվում պարտապանի նկատմամբ հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձինք, որոնց կարգավիճակը սահմանված է ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ և 76-րդ հոդվածների համաձայն՝

«Ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

Ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը»:

Շահագրգիռ ֆիզիկական անձանց թվին սույն օրենքը առաջին հերթին դասում է պարտապանի ղեկավարին, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամներին, պարտապանի կոլեգիալ գործադիր մարմնի անդամներին, գլխավոր հաշվապահին (հաշվապահին): Վերջիններիս սույն օրենքը շահագրգիռ է համարում, նաև այն դեպքում, երբ նրանք չեն զբաղեցնում նշված պաշտոնները, պայմանով, որ պաշտոններից ազատված են եղել սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում: Մեկնաբանվող օրենքը շահագրգիռ ֆիզիկական անձանց թվին է դասում նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսին տիրապետող անձին (անձանց), պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձանց կամ մարմնի անդամներին: Նման դրույթներ պարունակում են նաև այլ իրավական ակտերը, որոնք կարգավորում են կոնկրետ իրավահարաբերություններ (Օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված):

Հսկողություն իրականացնելու նպատակով սույն հոդվածով օրենսդիրը սահմանել է այն անձանց շրջանակը, ովքեր որոշակի շահագրգռվածություն կարող են ունենալ պարտապանի գործարքներում: Այդ հսկողությունը հնարավորություն է տալիս զերծ մնալ սնանկության գործընթացում պարտապանի և շահագրգիռ անձանց միջև կնքված պարտատերերի համար ոչ շահավետ գործարքներից:

Օրինակ՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով սահմանված է «Կառավարչի պաշտոնում չի կարող նշանակվել, իսկ նշանակված լինելու դեպքում ենթակա է ազատման այն անձը, որը շահագրգիռ է պարտատերերի կամ պարտապանի նկատմամբ»:

- 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու՝ պարտապանի կողմից կատարված անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում»:

- իսկ 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ շահագրգիռ անձին գույքի ուղղակի գործարքով վաճառքի դեպքում չի կարող տրվել որևէ արտոնություն այլ անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի» և այլն:

2. Պարտապանի նկատմամբ շահագրգիռ ֆիզիկական անձանց երկրորդ խումբը նախատեսված է մեկնաբանվող հոդվածի հաջորդ մասում: Դրանց թվին են դասվում շահագրգիռ անձի ամուսինը, նրա հետ ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց

ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը: Պարտապանի նկատմամբ շահագրգիռ է համարվում նաև այն անձը, որը սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց հետ գտնվում է թվարկված հարաբերությունների մեջ:

3. Կառավարչի և պարտատերերի նկատմամբ շահագրգիռ անձինք որոշվում են նույն սկզբունքներին համաձայն, երբ սնանկության մասին օրենքը տվյալ հանգամանքին իրավական նշանակություն է տալիս: Այս դեպքում գործարքը, որի կնքումը տեղի է ունեցել շահագրգռվածությունից ելնելով, համարվում է այդպիսին, երբ նրա մասնակիցները կառավարչի և պարտատերերի նկատմամբ շահագրգիռ անձինք են:

Գ Լ ՈՒ Խ 2.

Մ Ա Ն Կ ՈՒ Թ Յ Ա Ն Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

Հ Ա Յ Ց Ի Հ Ա Ր ՈՒ Ց ՈՒ Մ Ը

Հոդված 10. Սնանկության վերաբերյալ հայցի հարուցումը

1. Սնանկության վերաբերյալ հայցը հարուցվում է պարտատիրոջ (պարտատերերի), պարտապանի կամ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և 6-րդ հոդվածով նախատեսված անձանց կողմից:

2. Դատավորը հայցադիմումը վարույթ է ընդունում և գործը քննում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է սնանկության վերաբերյալ հայց հարուցելու լիազորություն ունեցող անձանց շրջանակը, որոնց մասին արդեն նախորդ հոդվածների մեկնաբանություններում մանրամասն ներկայացվել է: Դրանք են՝ պարտատերը, պարտապանը, լուծարման հանձնաժողովը (լուծարողը), իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (հարկային պետական ծառայության մարմինները, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը, համայնքի ղեկավարը, այլ իրավասու պետական մարմինները, այդ թվում՝ դատախազը և հարկադիր կատարողը):

Սույն օրենքի համաձայն և օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և համայնքային բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի և պարտադիր այլ

վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դիմել դատարան:

Օրենքը սահմանում է նաև հարկադիր կատարողի պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան դիմելու պարտականությունը: (Տես՝ 5-րդ և 6-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Քաղաքացիական իրավունքից մեզ հայտնի է, որ պարտատերը քաղաքացիաիրավական պարտավորության կողմ է հանդիսանում, և որն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Սույն օրենքում «պարտատեր» տերմինն օգտագործվում է ավելի լայն իմաստով, նրանում ընդգրկվում են հանրային-իրավական հարաբերությունների սուբյեկտներ, մասնավորապես՝ պետությունը, ի դեմս պետական իրավասու մարմինների՝ պարտադիր վճարումների գծով պահանջի իրավունքով, համայնքները՝ տեղական տուրքերի ու գույքահարկի գծով պահանջի իրավունքով, և այլն:

Ի տարբերություն քաղաքացիական իրավունքի այլ ինստիտուտներում սահմանված «պարտապան» հասկացության բովանդակության, սույն օրենքում «պարտապան» հասկացությունն ունի որոշակի առանձնահատկություն: Ինչպես հայտնի է, պարտապանը ցանկացած քաղաքացիաիրավական պարտավորության կողմ է հանդիսանում, որը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարելու որոշակի գործողություններ. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն (ՀՀ ՔՕ 345-րդ հոդված): Պարտապանի վերը թվարկված պարտավորությունները սնանկության գործընթացում վերածվում են միայն դրամական վճարային պարտականության: Այս սկզբունքից հետևում է, որ սնանկության վարույթում անթույլատրելի է որևէ պարտատիրոջ պահանջի բավարարում բնաիրային (բնեղենի) տեսքով, այդ թվում հանդիպակաց դրամային հաշվանցի կատարում:

Մյուս կողմից, սնանկության մասին սույն օրենքը պարտապանի մասին խոսելիս չի սահմանափակվում միայն քաղաքացիաիրավական պարտավորություններով, ի նկատի ունենալով, որ դրանում տեղ են գտել նաև հարկային, բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերին այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտավորությունները, այսինքն՝ համապատասխան անձի հանրային-իրավական պարտավորությունը: Այս կապակցությամբ, սույն օրենքի իմաստից ելնելով, որպես պարտապան կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական պարտավորության կողմ չհանդիսացող, բայց հանրային իրավունքի նորմերով սահմանված կարգով հարկատու անձը:

Ե՛վ առաջին, և՛ երկրորդ դեպքերում պարտապան է համարվում այն անձը (անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ), ով համապատասխան

քաղաքացիաիրավական պարտավորության և վճարային պարտավորությունների կատարման կետանց է թույլ տվել:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը նախատեսում է սնանկության հայցադիմումի վարույթ ընդունելու և սնանկության գործի քննության կարգը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված նորմերով: Միաժամանակ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը լուծում է վերջիններիս նորմերի հարաբերակցության հարցը, այն է՝ անվճարունակության (սնանկության) գործերի քննության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Սնանկության գործերի քննության կարգը դատավարության ինքնուրույն տարատեսակ է, որն իր կարգավորումն է գտել սույն օրենքում: Հաշվի առնելով սնանկության ինստիտուտի առանձնահատկությունները, սույն օրենքը բովանդակում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական նորմեր, որոնք թույլ են տալիս կարգավորել սնանկության գործերի քննության առանձնահատկությունները: Սնանկության գործեր քննող դատավորները սնանկության գործը քննելիս առաջնորդվում են նախ սույն օրենքով նախատեսված դատավարական նորմերով, իսկ այն դատավարական գործողությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքով:

Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված հայցն առանց քննության թողնելու, 105-106-րդ հոդվածներով՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերը սույն օրենքով նախատեսված չեն: Ուստի սնանկության գործեր քննող դատավորները նման հիմքերի առկայության դեպքերում կիրառում են վերը նշված հոդվածները, ու լավ էլ առանց քննության են թողնում կամ կասեցնում են:

Հոդված 11. Հայցադիմում ներկայացնելը և հետ վերցնելը

1. Պարտապանին սնանկ ճանաչելու նպատակով դատարան հայցադիմում կարող են ներկայացնել՝

ա) պարտապանը՝ սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով.

բ) մեկ կամ մի քանի պարտատերերը համատեղ.

գ) դատական ակտերի հարկադիր կատարողը՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում:

2. Սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնելու և այն հետ վերցնելու իրավունք ունեն՝

ա) իրավաբանական անձանց անունից՝ օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում գործող նրանց մարմինները կամ ներկայացուցիչները (այսուհետ՝ պարտապանի ղեկավար)։

բ) անհատ ձեռնարկատիրոջ անունից՝ անհատ ձեռնարկատերը կամ նրա ներկայացուցիչը։

3. Մեկից ավելի պարտատերերի ներկայացրած հայցադիմումը կարող է հետ վերցվել միայն բոլոր դիմած պարտատերերի գրավոր համաձայնությամբ։

4. Հայցադիմումը կարող է հետ վերցվել միայն մինչև հայցադիմումը վարույթ ընդունելը։

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնք կարող են պարտապանին սնանկ ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնել դատարան։ Այդ անձանց իրավունքները և պարտավորությունները սահմանված են սույն օրենքով, որոնց մասին մենք խոսել ենք նախորդ հոդվածներում (տես՝ 5-րդ և 6-րդ հոդվածների մեկնաբանությունները)։

2. Օրենսդիրը սահմանում է, թե ովքեր իրավունք ունեն պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնել և այն հետ վերցնել։ Դրանք իրավաբանական անձանց անունից՝ օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում գործող նրանց մարմիններն են կամ ներկայացուցիչները, և անհատ ձեռնարկատիրոջ անունից՝ անհատ ձեռնարկատերը կամ նրա ներկայացուցիչը։ Այս հոդվածում օրենսդիրը օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ ունեցող պարտապանի մարմիններին (ընկերության ընդհանուր ժողով, խորհուրդ, տնօրենների խորհուրդ, տնօրեն, գլխավոր տնօրեն, օրենքով նախատեսված այլ գործադիր մարմին և այլն) անվանում է պարտապանի ղեկավար։

Ներկայացուցչության հասկացությունը քաղաքացիական իրավունքում սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ գլխի նորմերով։ Իրավաբանական անձի անունից հանդես եկող պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատիրոջ իրավասությունները հաստատվում են նրանց պաշտոնը հավաստող փաստաթղթերով, ինչպես նաև կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով։ Այլ ներկայացուցիչների կողմից սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնելու լիազորությունները պետք է հավաստվեն լիազորագրով։ Ներկայացուցիչներին լիազորագիր կարող է տրվել և՛ որոշակի դատավարական գործողություններ կատարելու, և՛ լրիվ ներկայացուցչություն իրականացնելու համար։ Լիազորագրի տրման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (ՔՕ, հոդված 321), իսկ

դատավարական գործողություններ կատարելու մասին լիազորագրի ձևը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ, հոդված 42):

3. Եթե հայցադիմումը ներկայացրել են մեկից ավելի պարտատերեր, իսկ դա հնարավոր է, օրինակ՝ պարտապանի աշխատավորական կոլեկտիվի կողմից սնանկության հայցադիմում ներկայացնելիս, ապա այս դեպքում հայցադիմումը հետ վերցնելու համար անհրաժեշտ է բոլոր դիմած պարտատերերի գրավոր համաձայնությունը: Պարտապանի մի քանի պարտատերեր նույնպես կարող են միավորվել և սնանկության հայցադիմում ներկայացնել, սակայն, մեկ պարտատիրոջ կողմից չի կարող այդ հայցադիմումը հետ վերցվել, նման պարտատերը հետագայում կարող է հրաժարվել հայցադիմումից՝ կորցնելով վճարված պետական տուրքի իր մասը:

4. Սույն օրենքը նախատեսում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու նպատակով դատարան ներկայացրած հայցադիմումը կարող է հետ վերցվել, սակայն, միայն մինչև դատարանի կողմից այն վարույթ ընդունելը: Այս դրույթը համանման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով սահմանված դրույթին, սակայն, ի տարբերություն վերջինի սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատավորը սնանկության հայցադիմումը վարույթ է ընդունում այն ստանալու հաջորդ օրը, և հայցվորը պրակտիկորեն ժամանակ չի ունենա հետ վերցնել հայցադիմումը, եթե նման իրավունքը չիրականացնի հայցադիմում ներկայացնելու օրը:

Հոդված 12. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը

1. Հայցադիմումը դատարան է ներկայացվում գրավոր:

2. Հայցադիմումում պետք է նշվեն՝

ա) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.

բ) իրավաբանական անձ-հայցվորի անվանումը, գտնվելու վայրը և պետական գրանցման տվյալները, ղեկավար անձանց տվյալները, անհատ ձեռնարկատեր-հայցվորի անունը, ազգանունը և բնակության վայրը.

գ) պարտապանի անվանումը (անունը), գտնվելու (բնակության) վայրը և պետական գրանցման տվյալները.

դ) պարտատիրոջ դրամական պահանջի չափը՝ նշելով պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով.

ե) պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետը.

զ) հանգամանքները, որոնց վրա հիմնվում է պահանջը.

է) հայցապահանջի հիմքերը հաստատող ապացույցները.

ը) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

3. Հայցադիմումին կցվում են փաստաթղթեր, որոնք հավաստում են օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը և հայցապահանջը հիմնավորող հանգամանքները:

4. Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինությունը պետք է հիմնավորվի հայցվորի կողմից:

5. Պարտատիրոջ հայցադիմումը կարող է հիմնվել տարբեր պարտավորություններով միավորված պահանջների վրա:

6. Պարտատերերը կարող են միավորել իրենց պահանջները պարտապանի նկատմամբ և մեկ հայցադիմումով դիմել դատարան: Նման հայցադիմումը ստորագրում են պահանջները միավորած բոլոր պարտատերերը:

1. Մեկնաբանվող հոդվածը բովանդակում է նորմեր, որոնք սահմանում են հայցադիմումի ձևը և բովանդակությունը: սույն օրենքով նախատեսված հայցադիմումին ներկայացվող պահանջների պահպանումը պարտադիր է: Անհրաժեշտ է նկատել, որ հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների չափապանումը հիմք է հանդիսանում սնանկության վերաբերյալ հայցադիմումը վերադարձնելու համար (սույն օրենքի 16-րդ հոդված):

Հայցադիմումը դատարան է ներկայացվում գրավոր: Իրավաբանական անձ-հայցվորի հայցը ստորագրում է նրա ղեկավարը կամ նրա հիմնադիր փաստաթղթերին համապատասխան՝ լիազորված անձը: Եթե հայցը հարուցվում է ներկայացուցչի կողմից, ապա նա իրավունք ունի ստորագրել այն, եթե լիազորագրով հայց հարուցելու լիազորություն ունի (ՀՀ ՔՕ, հոդվածներ 321-325 և ՀՀ ՔԴՕ, հոդվածներ 41, 42): Անհրաժեշտ է փաստել, որ ներկայացուցչի կողմից լիազորագրի հիման վրա հայցը ստորագրելու դեպքում, լիազորագիրը կամ դրա պատշաճ վավերացված պատճենը պետք է կցվի հայցին: Լիազորագրի բացակայությունը հիմք է ներկայացուցչի կողմից ստորագրված հայցադիմումը վերադարձնելու համար (սույն օրենքի 16-րդ հոդված):

2. Հայցադիմումում պարտադիր պետք է նշվեն սույն հոդվածի երկրորդ մասում թվարկված տվյալները.

- *դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.*
- *հայցվորի լրիվ անվանումը.*

Եթե հայցվորը իրավաբանական անձ է, հայցադիմումում նրանց անվանումները պետք է տրվեն նրանց հիմնադիր փաստաթղթերում նշված անվանումներին խիստ համապատասխան: Նշվում են նաև վերջինիս կազմակերպաիրավական ձևը, գտնվելու վայրը, պետական գրանցման տվյալները, ղեկավար անձանց և ներկայացուցչի տվյալները: Եթե հայցվորը անհատ ձեռնարկատեր է՝ նրա անունը, ազգանունը և բնակության վայրը:

- *պարտապանի անվանումը (անունը), գտնվելու (բնակության) վայրը և պետական գրանցման տվյալները.*

Այս կետով օրենսդիրը պահանջում է, որպեսզի հայցվորը բացի պարտապանի անվանումից և գտնվելու (բնակության) վայրից հայցադիմումում տեղեկություններ նշի պարտապանի գրանցման տվյալների մասին, ինչը լրացուցիչ աշխատանք է հայցվորի համար: Սակայն, հաշվի առնելով այն հանագամանքը, որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում եղած տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար, ապա նման տեղեկությունները իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ ստանալը իրենից առանձնապես դժվարություններ չի ներկայացնում:

Պարտապանի վերաբերյալ նման տեղեկությունների բացակայության դեպքում հնարավոր է, որ նման անվանումով, կազմակերպաիրավական տեսակով կամ գտնվելու (բնակության) վայրով գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր չլինի (ինչը հաճախ է հանդիպում դատական պրակտիկայում), քանի որ այդ անձանց գրանցման օրվանից մինչև հայցադիմում ներկայացնելու օրը պարտապան իրավաբանական անձի անվանման, գտնվելու վայրի և (կամ) կազմակերպաիրավական տեսակի, իսկ անհատ ձեռնարկատիրոջ բնակության և (կամ) գործունեության վայրի փոփոխություններ կատարված լինեն:

- *պարտատիրոջ դրամական պահանջի չափը՝ նշելով պարտքի, վնասների, տուժանքի չափերը, ինչպես նաև համապատասխան հաշվարկների իրականացման կարգը:*
- *պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետը:*

Հայցադիմումում պետք է առանձին նշվեն պարտատերերի պահանջի չափը, որը պետք է ներառի պարտքի, վնասների, տուժանքի չափերը: Օրինակ՝ եթե պարտավորության ընդհանուր չափը կազմում է 500.000 ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է 300.000 ՀՀ դրամ հիմնական պարտքի գումար, 100.000 ՀՀ դրամ տուժանք, և 100.000 ՀՀ

դրամ վնասներ, ապա հայցադիմումում նշվում են ընդհանուր պարտավորության չափը՝ առանձնացնելով վնասների և տուժանքի չափերը: Պահանջի չափը հայցադիմումում գրվում է հաշվարկի ձևով, մասնավորապես, պարտավորության առաջացման ժամկետի սկիզբը և վերջը, վնասների, տույժերի, տուգանքների հաշվարկման համար հիմք ծառայած չափը (տոկոսը) և հաշվարկման ժամկետը (օրերը): Եթե պարտավորությունը պետք է կատարվի մաս առ մաս, ապա նշվում է նրանցից ամեն մեկի կատարման ժամկետները, պարտավորության չափը առանձին:

- հանգամանքները, որոնց վրա հիմնվում է պահանջը:

Սովորաբար, սրանք այն հանգամանքներն են, որոնք վկայում են պարտապանի պարտավորությունների առկայությունը պարտատիրոջ հանդեպ, օրինակ՝ պարտապանի և պարտատիրոջ միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրից բխող կետանցված պարտավորությունները, պարտապանի հարկային կամ սոցիալական ապահովագրական պարտադիր վճարումները հավաստող հանգամանքները: Նման հանգամանքներ կարող են հանդիսանալ պարտապանի հաշվետվություններում արտացոլված գույքային շրջանառության և (կամ) գործունեության արդյունքները, դրանց հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առաջացող հարկային կամ այլ պարտադիր վճարների պարտավորությունները:

- հայցապահանջի հիմքերը հաստատող ապացույցները:

Հայցապահանջի հիմքերը հաստատող ապացույցներ են՝ պարտապանի հանդեպ եղած պարտատիրոջ պահանջի վերաբերյալ փոխադարձ հաշվարկների ակտը, գործարքները և (կամ) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները, ինչպես նաև կատարողական և այլ փաստաթղթերը:

- հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հայցադիմումում պետք է նշվեն այն փաստաթղթերի ցանկը, որոնք հայցվորը որպես իր հայցապահանջը հաստատող գրավոր ապացույցներ կցում է հայցադիմումին:

3. Օրենսդիրը առնձնահատուկ անդրադառնում է նաև այն պարտադիր կցվող փաստաթղթերին, որոնք հավաստում են օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը և հայցապահանջը հիմնավորող հանգամանքները:

Մասնկ ճանաչելու պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով (հոդված 9):

Տեղեկություններն այն հանգամանքների մասին, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, ինչպես նաև ապացույցները, որոնք հաստատում են հայցապահանջի հիմքերը, հնարավորություն են տալիս պարզել հայցվորի պահանջների օրինականությունը և հիմնավորվածությունը: Դատարանին հաղորդվող

տեղեկությունների լրիվությունն ու ճշտությունը հայտնի չափով կանխորոշում են նաև գործի ելքը: Այս կարգի սպառիչ տեղեկությունների հավաքագրման հիման վրա օրենսդիրը հաջորդ հոդվածներում հնարավորություն է տալիս սնանկության գործեր քննող դատավորին առանց դատական նիստ հրավիրելու վճիռ կայացնել պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ, եթե վերջինս սույն օրենքով սահմանված ժամկետում չի վիճարկում իր սնանկությունը (սույն օրենքի հոդվածներ 18 և 19):

4. Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինությունը պետք է հիմնավորվի հայցվորի կողմից: Հայցվորը պետք է նշի բնօրինակի գտնվելու վայրը, որտեղից անհնարին է եղել ստանալ այդ բնօրինակը: Բերել օրինակ

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի (գրավոր ապացույցներ) 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ «Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջով»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Դատարանը կարող է գործին մասնակցող անձանցից պահանջել գրավոր ապացույցների բնագրերի հայերեն թարգմանությունը՝ վավերացված օրենքով սահմանված կարգով»:

5. Հնարավոր է, որ պարտապանը պարտատիրոջ հանդեպ ունենա մի քանի պարտավորություններ՝ ելնելով նրանց միջև կնքված երկու և ավելի պայմանագրերից, և որոնցով պարտատիրոջ պարտքը մարված չէ: Եթե այդ պայմանագրերից բխող պարտքի չափերն առանձին-առանձին վերցրած պակաս են, քան նախատեսված է սնանկության գործ հարուցելու համար սույն օրենքով սահմանված չափից (նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումար), պարտատերը կարող է տարբեր պարտավորություններով պահանջները միավորել, եթե միավորված պարտավորությունների ընդհանուր գումարը բավարարում է սույն օրենքով նախատեսված վճարային պարտավորությունների չափը և դրանց հիման վրա հայցադիմում ներկայացնել դատարան:

6. Մեկնաբանվող հոդվածի 6-րդ մասով օրենսդիրը չի բացառում նաև այն դեպքերը, երբ մի քանի պարտատերեր միավորում են իրենց պահանջները մեկ հայցադիմումում: Մասնավորապես, երբ նրանցից ամեն մեկի պահանջի չափն

առանձին վերցրած բավարար չէ օրենքով նախատեսված սնանկության հայցադիմում դատարան ներկայացնելու համար, իսկ պարտատերերի պահանջները միավորելու դեպքում այն կհամապատասխանի սույն օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին: Այս դեպքում, պարտատերերը կարող են միավորել իրենց պահանջները պարտապանի նկատմամբ և մեկ հայցադիմումով դիմել դատարան: Նման հայցադիմումը ստորագրում են պահանջները միավորած բոլոր պարտատերերը:

Հոդված 13. Պարտապանի կողմից ներկայացվող փաստաթղթերը

1. Պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնելու դեպքում հայցադիմումին կից ներկայացվում են (իսկ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված դեպքերում պարտապանը պարտավոր է ներկայացնել) հետևյալ փաստաթղթերը՝

ա) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկը՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (դրա առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները.

բ) պարտապանի պարտատերերի և պարտապանների ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորություններ.

գ) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները.

դ) եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է՝ լիակատար անդամների անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները.

ե) պարտապանի հայտարարությունը ֆինանսական առողջացման մտադրության մասին.

զ) տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին:

2. Եթե պարտապանը մտադիր է ֆինանսական առողջացման ենթարկվել, ապա նա կարող է հայցադիմումին կից ներկայացնել նաև սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիր:

3. Սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում պարտապանը պարտավոր է դրա վերաբերյալ պատճառաբանված հիմնավորում ներկայացնել դատարան:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է պարտապանի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը սույն օրենքով սահմանված դեպքերում: Դրանք երկուսն են՝

ա) երբ պարտապանը սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում է ներկայացնում դատարան (սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս և 5-րդ հոդված):

բ) երբ պարտատիրոջ կամ հարկադիր կատարողի հայցադիմումի հիման վրա սնանկ ճանաչված պարտապանին դատարանը պարտավորեցնում է կառավարչին ներկայացնել սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը (սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ):

Առաջին դեպքում այս փաստաթղթերը պարտապանի հայցապահանջի հիմքերը հաստատող ապացույցներն են, մասնավորապես՝ պարտապանի առկա ակտիվների և պասիվների առկայության մասին, ինչպես նաև պարտապանի կողմից պարտատիրոջ և (կամ) բոլոր պարտատերերի պահանջները բավարարելու անհնարինությունը հաստատող այլ փաստաթղթեր:

Երկրորդ դեպքը դա այն է, երբ պարտապանը սնանկ է ճանաչվում պարտատիրոջ (պարտատերերի) կամ հարկադիր կատարողի հայցադիմումի հիման վրա, որից հետո դատավորն իր առանձին որոշմամբ պարտապանին պարտավորեցնում է տասնօրյա ժամկետում կառավարչին ներկայացնել մեկնաբանվող հոդվածում նշված փաստաթղթերը (սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ):

Հիշատակված փաստաթղթերը դատարան պետք է ներկայացվեն բնօրինակով կամ դրանց պատշաճ վավերացված պատճենի տեսքով: Դրանք են՝

- պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկը՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (դրա առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու

միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները:Ջիվան

Պարտապանը պետք նշի նաև իրեն սպասարկող բանկերում և վարկային կազմակերպություններում եղած հաշիվների համարները (բանկերի և վարկային կազմակերպությունների հասցեները նշելով): Այս տվյալները անհրաժեշտ են պարտապանի ֆինանսական դրությունը որոշելու համար:

- պարտապանը պարտավոր է ներկայացնել նաև պարտատերերի և պարտապանների ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը, եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է՝ լիակատար անդամների անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները, և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները:

Այս տվյալների օգնությամբ կառավարչին կհաջողվի առավելագույնս հավաքագրել պարտապանի ակտիվները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համագործակցել դեռևս պահանաջատեր չգրանցված պարտատերերի հետ: Պարտապանի կողմից պարտատերերի ցուցակը ներկայացնելը հատկապես կարևորվում է այն դեպքում, երբ սեփական սնանկության հայցադիմում է ներկայացրել պարտապանի լուծարման հանձնաժողովը սույն օրենքով սահմանված կարգով, քանի որ սույն օրենքի 92-րդ հոդվածի համաձայն.

«Եթե լուծարման հանձնաժողովն իրականացրել է օրենքով սահմանված բոլոր միջոցառումները պարտատերերի հայտնաբերման ուղղությամբ, ապա նրա ներկայացրած պարտատերերի ցուցակը հիմք է դատավորի կողմից պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար»:

Այս առումով պարտապանի (լուծարման հանձնաժողովի) ներկայացրած պարտատերերի ցուցակը կարևոր դեր ունի սնանկության հետագա գործընթացները իրականացնելիս (պահանջների վերջնական ցուցակի հաստատում, պարտատերերի ձայնի իրավունք, պահանջների բավարարում և այլն):

Եթե պարտապանի կառավարման բարձրագույն մարմինը որոշում է ընդունել պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան դիմելու մասին, ապա պարտապանը հայցապահանջին պետք է կցի նաև այդ որոշումը: Հայցապահանջին պետք է կցվեն նաև պարտապանի իրավական վիճակը հավաստող փաստաթղթեր՝ իրավաբանական անձ-պարտապանի հիմնադիր փաստաթղթերը և պարտապանի

պետական գրանցման վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին:

- Որպեսզի հստակեցվի պարտապանի ֆինանսական դրությունը, սույն օրենքը պահանջում է նաև պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները: Դրանք կառավարչին հնարավորություն են տալիս նաև ստուգել ներկայացված պահանջների չափը և հիմնավորվածությունները:

- Եթե պարտապանը ֆինանսական առողջացման մտադրություն ունի, ապա այդ մասին հայտարարությունը ևս պետք է ներկայացնի դատարան:

2. Սեփական անվճարունակությունը ճանաչելու հայցադիմում ներկայացնելիս պարտապանը կարող է հայցադիմումին կից ներկայացնել նաև սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիր: Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում (սույն օրենքի 8-րդ գլուխ):

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածով սահմանված փաստաթղթերը ներկայացնելը անհնար է, պարտապանը պարտավոր է դրա վերաբերյալ պատճառաբանված հիմնավորում ներկայացնել դատարան:

Պետք է ավելացնենք նաև, որ համանման պարզավորություն սահմանված է նաև սույն օրենքի 48-րդ հոդվածով, ըստ որի՝ «Մինչև պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելը պարտապանի ղեկավար մարմինները պարտավոր են համագործակցել կառավարչի հետ և նրան տրամադրել պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հավաստի տեղեկությունները, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած երեք տարվա ընթացքում պարտապանի գույքի օտարման կամ ակտիվների այլ ձևով նվազեցման մասին:

Նշված պահանջը չկատարելու դեպքում համապատասխան անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Այն դեպքում, երբ պարտապանը խուսափում է կատարել դատարանի որոշումը վերոշարադրյալ փաստաթղթերը ներկայացնելու մասին, ապա կառավարչի դիմումի հիման վրա դատարանի կողմից տրված կատարողական թերթով պարտապանի այս պարտականությունը ի կատար է ածվում հարկադիր կարգով՝ ԴԱՀԿ ծառայության միջոցով: Իսկ այն դեպքում, երբ պարտապանը սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը թաքցնելու նպատակով չի ներկայացնում կառավարչին և խոչընդոտում է սնանկության գործընթացին, ապա նա կարող է քրեական պատասխանատվության

ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասով և 353-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 14. Մնանկության վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելը

1. Սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը դատավորն ընդունում է վարույթ՝ հայցադիմումն ստանալու հաջորդ օրը:

Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին այն վերանայելու պահանջով: Դիմումը ստանալու հաջորդ օրն այն քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր:

Դիմումի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատավորը կայացնում է որոշում: Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատավորը նշանակում է սնանկության ժամանակավոր կառավարիչ:

3. Դատավորը սնանկության վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկում է՝

ա) պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմին.

բ) անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններ.

գ) այն հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններ, որտեղ պարտապանը հաշվառված է.

դ) մաքսային պետական մարմիններ.

ե) ՀՀ Կենտրոնական բանկ.

զ) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

4. Ժամանակավոր կառավարչի միջնորդությամբ դատավորը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել հայցի ապահովման միջոցներ, եթե պարտապանի և նրա հետ առնչվող գործողությունների կամ

գործարքների կատարումը կարող է էապես նվազեցնել նրա ակտիվները (միջոցները) կամ ավելացնել պարտավորությունները:

5. Սնանկության հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատավորի որոշումն ստանալու պահից դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կասեցնում է պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները:

1-2. Սույն հոդվածը սահմանում է սնանկության վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու կարգը և հետևանքները: Հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը դատավորը լուծում է միանձնյա: Հայցադիմումը վարույթ ընդունվելու համար օրենսդիրը պահանջում է, որպեսզի պահպանված լինեն սույն օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված պահանջները: Քանի որ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատավորը հայցադիմումը վարույթ է ընդունում և գործը քննում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, հետևաբար պետք է պահպանված լինեն նաև ՔԴՕ-ի 87-րդ և 88-րդ հոդվածների պահանջները: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի, որտեղ սահմանված է հայցադիմումը վարույթ ընդունելու եռօրյա ժամկետ, սույն օրենքով դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է հայցադիմումը ստանալու հաջորդ օրը: Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատավորը նույն որոշմամբ նշանակում է սնանկության ժամանակավոր կառավարիչ և սահմանում է վերջինիս վարձատրության չափը: Ժամանակավոր կառավարչի լիազորությունները սահմանված են սույն օրենքի 23-րդ հոդվածում:

Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին այն վերանայելու պահանջով: Դիմումը ստանալու հաջորդ օրն այն քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր:

Դիմումի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

Այս նորմը նույնպես տարբերվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին համամասպատասխան նորմից (ՔԴՕ հոդված 90), որտեղ նշված որոշման վերանայման կամ բողոքարկման հնարավորություն հայցվորի կամ պատասխանողի համար սահմանված չէ: Սույն օրենքի նման կարգավորումը ելնում է սնանկության գործերի առանձնահատկություններից: Օրինակ՝ երբ սնանկության հայցադիմումը վարույթ է ընդունվել այնպիսի պարտապանի նկատմամբ, որն ընդգրկված է պետական գույքի

մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում, և չեն պահպանվել սույն օրենքի 98-րդ հոդվածով սահմանված նորմերը, ըստ որի դատավորը նման հայցադիմումը ոչ թե վարույթ է ընդունում այն ստանալու հաջորդ օրը, այլ հայցադիմումը գրանցվում է դատարանում, իսկ հայցադիմումի պատճենը ուղարկվում է ՀՀ կառավարություն: Այնուհետև հայցադիմումը վարույթ է ընդունվում դատավորի կողմից 98-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում և ժամկետներում:

3. Դատավորը սնանկության վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկում է՝ պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմին, անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններ, այն հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններ, որտեղ պարտապանը հաշվառված է, մաքսային պետական մարմիններ, ՀՀ Կենտրոնական բանկ, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

Նման ծանուցումները նպատակ են հետապնդում ապահովել պարտապանի ակտիվների չնվազեցումը, միաժամանակ զգուշացնել սույն հոդվածում նշված մարմիններին, այն մասին, որ պարտապանը սնանկության նախաշեմին է և սնանկ ճանաչվելու դեպքում նրա հետ կնքված պարտապանի համար ոչ շահավետ գործարքները կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել, քանի որ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած 90 օրվա ընթացքում կատարված ցանկացած փոխանցում (այդ թվում՝ ոչ դրամային)»: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն «Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կառավարիչը կարող է դիմել դատարաններ՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կնքված այն գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով, որոնք ակնհայտորեն անշահավետ են եղել պարտապանի համար և(կամ) էականորեն նվազեցրել են պարտապանի ակտիվները»: Բացի այդ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծանուցումը հնարավորություն է տալիս այդ մարմիններին կատարելու «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված բոլոր կատարողական վարույթները կասեցնելու պարտականությունը:

4. Սույն օրենքը նախատեսում է ժամանակավոր կառավարչի տարբեր միջնորդություններով դատարան դիմելու հնարավորություն: Այսպես, ժամանակավոր կառավարիչը դատարան կարող է դիմել հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ, այն դեպքում, երբ պարտապանի և նրա հետ առնչվող գործողությունների կամ գործարքների կատարումը կարող է էապես նվազեցնել պարտապանի ակտիվները (միջոցները) կամ ավելացնել պարտավորությունները: Հայցի

ապահովման միջոցների կիրառման դատավարական կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (գլուխ 14), ինչը կիրառվում է դատարանի կողմից: Մակայն այստեղ առկա է մի այլ առանձնահատկություն: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի, սույն հոդվածով նախատեսված հայցի ապահովման հիմք կարող է հանդիսանալ պարտապանի և նրա հետ առնչվող գործողությունների կամ գործարքների կատարումը, որոնք կարող են էապես նվազեցնել նրա ակտիվները:

5. Մնանկության մասին հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատավորի որոշման հետևանքներից առավել կարևորը այն է, որ դատավորի որոշումն ստանալու պահից դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կասեցնում է պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները: Արդեն հասկանալի է այս նորմի կարևորությունը՝ հաշվի առնելով սնանկության գործընթացում պարտատերերի պահանջների բավարարման համամասնության սկզբունքը:

Հոդված 15. Սնանկության վերաբերյալ հայցադիմումի ընդունումը մերժելը

1. Դատավորը մերժում է սնանկության վերաբերյալ հայցադիմումի վարույթ ընդունելը, եթե պարտապանի նկատմամբ սնանկության գործ կա դատարանի վարույթում, ինչպես նաև սույն օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում:

2. Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին դատավորը կայացնում է որոշում այն ստանալու հաջորդ օրը:

3. Դատավորի որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկվում են հայցվորին:

4. Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին՝ այն վերանայելու պահանջով:

Դիմումն ստանալու հաջորդ օրը այն քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր:

Դիմումի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

5. Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված՝ այդ որոշման ընդունման օրը:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է սնանկության վերաբերյալ հայցադիմումի վարույթ ընդունելը մերժելու հիմքերը: Եթե դատավորն օրենքում նշված հիմքերով մերժում է հայցադիմումի ընդունումը, ապա նույն հայցադիմումը հետագայում նորից ներկայացվել չի կարող, բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի, համաձայն որի «Սնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ հայցի մերժումը չի արգելում նույն անձին նույն հայցով դիմել դատարան՝ սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումի վարույթ ընդունելը մերժելու հիմքերը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածով, ուստի սույն օրենքը սահմանում է միայն այն հիմքերը, որոնք առանձնահատուկ են սնանկության գործերին:

Այսպես, դատավորը մերժում է սնանկության վերաբերյալ հայցադիմումի վարույթ ընդունելը, եթե պարտապանի նկատմամբ սնանկության գործ կա դատարանի վարույթում: Այն դեպքում, երբ դատարանի վարույթում նույն պարտապանի նկատմամբ սնանկության գործ կա, սակայն դեռ պարտապանը սնանկ չի ճանաչվել, դիմումատուն իրավունք ունի որպես հայցվորի կողմից ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ մասնակից դառնալ գործի քննությանը: Իսկ պարտապանին սնանկ ճանաչելու վճռի առկայության պայմաններում, նման դիմումատուի պահանջները՝ դրանք ներկայացվելու դեպքում ենթակա են գրանցման պարտապանի պահանջների գրանցամատյանում:

Դատավորը մերժում է սնանկության վերաբերյալ հայցադիմումի վարույթ ընդունելը նաև այն դեպքում, երբ սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում են ներկայացրել պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված կազմակերպությունները (սույն օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մաս): Նման սահմանափակումը բխում է Հայաստանի Հանրապետության մասնավորեցման գործընթացի առանձնահատկություններից...., սակայն այս դրույթը չի կարող տարածվել այն լուծարվող կազմակերպությունների վրա, որոնք չնայած ընդգրկված են պետական գույքի մասնավորեցման ծրագրերում, սակայն գտնվելով լուծարման գործընթացում, պարզվել է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները ամբողջովին բավարարելու համար: Նման դեպքերում, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի և սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, լուծարման հանձնաժողովը պարտավոր է պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու հայցադիմում ներկայացնել դատարան: Սա նշանակում է, որ սույն օրենքը, սահմանելով հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու հիմքերը և արգելելով պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված կազմակերպություններին սեփական սնանկության հայցադիմումներ ներկայացնելը, պետք է բացառություն սահմաներ լուծարման գործընթացում գտնվող կազմակերպությունների համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

- 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության.
- 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ (բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի).
- 3) այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.
- 4) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու, ինչպես նաև «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով միջնորդ դատարանի վճիռը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վերանայելու դեպքերի:

Հայցադիմումի ընդունումը մերժելու օրենքով սահմանված հիմքերը սպառիչ են: Օրենքով չնախատեսված այլ հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժելը հավասարագոր է արդարադատության մերժման, ուստի և անթույլատրելի է:

Սնանկության վերաբերյալ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին դատավորը կայացնում է որոշում այն ստանալու հաջորդ օրը, որի պատճենը՝ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ միասին, ուղարկվում են հայցվորին: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի, ըստ որի հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու որոշումը պետք է կայացվի եռօրյա ժամկետում և այդ որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով, մեկնաբանվող հոդվածի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու հարցը դատավորը լուծում է հայցադիմումը ստանալու հաջորդ օրը, իսկ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այն վերանայելու պահանջով դիմել դատարանի նախագահին՝ այդ որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Դիմումը ստանալու հաջորդ օրն այն քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր: Քննարկման արդյունքներով կայացվում է որոշում: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված՝ այդ որոշման ընդունման օրը:

Հոդված 16. Սնանկության վերաբերյալ հայցադիմումը վերադարձնելը

1. Դատավորը վերադարձնում է սնանկության վերաբերյալ հայցադիմումը, եթե՝

ա) չեն պահպանվել սույն օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածների պահանջները, և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը.

բ) հայցադիմումը ստորագրված չէ կամ ստորագրված է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձի կամ այնպիսի անձի կողմից, որի պաշտոնական կարգավիճակը նշված չէ.

գ) չեն ներկայացվել օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է.

դ) մեկ հայցադիմումում միացված են մի քանի պարտապաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ պահանջներ.

ե) մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու միջնորդությամբ:

2. Հայցադիմումը վերադարձնելու մասին դատավորը որոշում է կայացնում այն ստանալու հաջորդ օրը:

3. Հայցադիմումը վերադարձնելն արգելք չէ թույլ տված խախտումները վերացնելուց հետո կրկին դատարան դիմելու համար:

4. Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին՝ այն վերանայելու պահանջով:

Դիմումը ստանալու հաջորդ օրը դիմումը քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր:

Դիմումի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

5. Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված՝ այդ որոշման կայացման օրը:

Մեկնաբանվող հոդվածը սպառիչ թվարկում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում սնանկության վերաբերյալ հայցադիմումը վերադարձվում է: Այսպես, դատավորը վերադարձնում է սնանկության վերաբերյալ հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածների պահանջները, և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը, հայցադիմումը ստորագրված չէ կամ ստորագրված է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձի կամ այնպիսի անձի կողմից, որի

պաշտոնեական կարգավիճակը նշված չէ, չեն ներկայացվել օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է, մեկ հայցադիմումում միացված են մի քանի պարտապաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ պահանջներ, մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու միջնորդությամբ:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել հայցադիմումը վերադարձնելու այն հիմքը, երբ մեկ հայցադիմումում միացված են մի քանի պարտապաններին սնանկ ճանաչելու վերաբերյալ պահանջներ: Սա սնանկության վարույթի առանձնահատկություններից մեկն է, քանի որ չի կարող մեկ վարույթով սնանկության գործ հարուցվել մի քանի պարտապանների նկատմամբ, ի տարբերություն սովորական հայցային վարույթների, որտեղ օրենսդիրը չի արգելում հայցի հարուցումը ընդդեմ մի քանի պատասխանողների (ՔԴՕ հոդված 30):

Հայցադիմումը վերադարձնելու բոլոր դեպքերում դատավորն այդ մասին պատճառաբանված որոշում է կայացնում այն ստանալու հաջորդ օրը:

Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին՝ այն վերանայելու պահանջով: Դիմումն ստանալու հաջորդ օրը դիմումը քննարկում է դատարանի նախագահը, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավոր: Դիմումի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում: Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված՝ այդ որոշման կայացման օրը:

Հայցադիմումը վերադարձնելու հիմքերը հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու հիմքերից տարբերվում է նրանով, որ առաջին դեպքում հայցադիմում ներկայացնելիս օրենքով նախատեսված պահանջները չպահպանելը չի արգելում հայցվորին թույլ տված խախտումները վերացնելուց հետո կրկին դիմել դատարան՝ նույն հայցապահանջով: Այդ խախտումներն ու թերություններն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանք հնարավոր է վերացնել, իսկ երկրորդ դեպքում՝ այն հիմքերը, որոնց առկայության դեպքում հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, հնարավոր չէ վերացնել: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

Մեկնաբանվող հոդվածը կրկին տարբերվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածից որոշում կայացնելու ժամկետի և այդ որոշման վերանայման (բողոքարկման) առումներով: Հայցադիմումը վարույթ ընդունելու, վարույթ ընդունելը մերժելու և վերադարձնելու հարցերը լուծելիս դատարանը ղեկավարվում է սույն օրենքի համապատասխան հոդվածներով՝ հիմք ընդունելով սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 10-րդ հոդվածի 2-րդ մասը:

Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի և 92-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի ընդունումը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումները կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ հայցվորի կողմից ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Սակայն սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածների 4-րդ մասերի համաձայն հիշատակված որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում հայցվորն իրավունք ունի այդ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմել դատարանի նախագահին՝ այն վերանայելու պահանջով:

Հոդված 17. Պետական տուրքը՝ սնանկության հայցադիմում ներկայացնելու դեպքում

Սնանկության հայցադիմում ներկայացնելու դեպքում վճարվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Պետական տուրքի գծով արտոնություններ կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

1. Պետական տուրքն օրենքով սահմանված և դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար ՀՀ պետական բյուջե մուծվող պարտադիր գանձույթ է:

Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու վերաբերյալ դատարան ներկայացվող հայցադիմումների համար սահմանված է պետական տուրքի վճարում հինգ հարյուր հազար դրամի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերին սնանկ ճանաչելու հայցադիմումների համար՝ հարյուր հազար դրամի չափով:

Պետական տուրքը վճարվում է մինչև հայցադիմումը դատարանին հանձնելը: Տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը՝ վճարման հանձնարարագիրը կցվում է հայցադիմումին:

2. Սույն օրենքը նախատեսում է, որ պետական տուրքի գծով արտոնություններ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (70-րդ հոդվածի 3-րդ մաս) եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով (հոդված 21) նախատեսված դեպքերում եւ կարգով: Միջնորդությանը պետք է կցվեն տվյալ խնդրանքը հիմնավորող փաստաթղթեր, որոնք արտացոլում են դիմումատուի գույքային դրությունը, և որոնց ուսումնասիրության արդյունքում դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում՝ այն մերժելու կամ բավարարելու մասին:

Դատավորը վերադարձնում է սնանկության վերաբերյալ հայցադիմումը, եթե չեն ներկայացվել օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր կամ բացակայում է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարումից չեն կարող ազատվել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները:

Դատական պրակտիկայից հայտնի է, որ սնանկության վարույթներով պետական տուրքի գծով արտոնություններից դիմողները հաճախ օգտվում են պետական տուրքի վճարումը հետաձգելու տեսակից: Նման միջնորդություններով հիմնականում դիմում են ԴԱՀԿ ծառայությունը և պարտապանը՝ սեփական անվճարունակությունը ճանաչելու մասին հայցադիմումներ ներկայացնելիս:

ԳԼՈՒԽ 3.

ՄՆԱՆԿ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԶԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 18. Պարտապանին սնանկ ճանաչելը պարտապանի հայցադիմումի հիման վրա

1. Սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտապանի հայցադիմումը վարույթ ընդունելու պահից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում, դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե առկա է սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքը (հիմքերը):

2. Եթե սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքի (հիմքերի) առկայությունը վիճելի է, ակնհայտ չէ, ապա դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում նշանակում է դատական նիստ, որին հրավիրվում են պարտապանը և հայցադիմումում նշված պարտատերերը:

Պատշաճ ծանուցված պարտատերերի և պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

3. Դատական նիստում հայցադիմումի քննարկման արդյունքներով դատավորը կայացնում է վճիռ՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ հայցը մերժելու մասին:

4. Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում՝ կայացման, իսկ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերում՝ դատական նիստում հրապարակման պահից 15 օր հետո:

Քաղաքացիական դատավարության մեջ առաջին անգամ սույն օրենքը նախատեսում է վճռի կայացում առանց դատական նիստ հրավիրելու, որի ժամանակ դատավորը, ուսումնասիրելով միայն գրավոր ապացույցները, կայացնում է վճիռ (սույն օրենքի հոդվածներ 18, 19, 96):

Սույն օրենքը պարտապանին սեփական սնանկության ճանաչման հայցադիմումի հիման վրա վճռի կայացման երկու տարբերակ է նախատեսում՝ առանց դատական նիստ հրավիրելու և դատական նիստում հայցադիմումի քննության արդյունքներով:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը սահմանում է առանց դատական նիստ հրավիրելու պարտապանի հայցադիմումի հիման վրա վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու կարգը: Այն է՝ երբ վճռի կայացման պահին պարտապանն ի վիճակի չէ կատարել իր դրամական պարտավորությունը (պարտավորությունները) կամ եթե նրա գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, և եթե այս հիմքերի առակայությունն ակնհայտ է: Օրենսդիրը վճռի կայացման համար սահմանում է եռօրյա ժամկետ, որը սկսվում է սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտապանի հայցադիմումը վարույթ ընդունելու պահից: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն կայացնելու պահից 15 օր հետո:

Եթե վերը նշված հիմքի (հիմքերի) առկայությունը վիճելի է, ակնհայտ չէ (տես 20-րդ հոդվածի մեկնաբանությունները), ապա դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում նշանակում է դատական նիստ, որին հրավիրվում են պարտապանը և հայցադիմումում նշված պարտատերերը: Մակայն պատշաճ ծանուցված պարտատերերի և պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Դատական նիստում հայցադիմումի քննարկման արդյունքներով դատավորը կայացնում է վճիռ պարտապանին սնանկ ճանաչելու կամ հայցը մերժելու մասին, որն այս դեպքում ուժի մեջ է մտնում դատական նիստում հրապարակելու պահից 15 օր հետո:

Քաղաքացիական դատավարության մեջ նորամուծություն է նաև պարտապանի պարտատերերին դատավարության մասնակիցներ դարձնելը: Ընդ որում, նման դատավարությանը մասնակից դարձված պարտատերերը ո՛չ հայցվորներ են, ո՛չ պատասխանողներ և ո՛չ էլ հայցվորի կամ պատասխանողի կողմից հանդես եկող երրորդ անձինք: Օրենքի նման կարգավորումից եզրակացնում ենք, որ դատարանը պարտապանի պարտատերերին մասնակից է դարձնում գործի քննությանը, որպեսզի նրանց բացատրությունների և ներկայացրած պահանջների միջոցով հիմնավորվի կամ հերքվի պարտապանի սնանկությունը: Այլ կերպ ասած, պարտատերերի նման մասնակցությունը նման է քաղաքացիական դատավարության մեջ հայցվորի կողմից ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց և վկաների ներգրավմանը, որոնց բացատրությունները համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի դասվում են ապացույցների շարքին:

Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի կարգավորումը, ինչպես նաև ելնելով սնանկության գործերի արագ քննելու սկզբունքից՝ սույն օրենքը սահմանում է, որ պատշաճ ծանուցված պարտատերերի և պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Մատնանշենք նաև, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի սույն օրենքը սահմանում է, որ գործի քննության համար արգելք չէ ոչ միայն պարտապանի չներկայանալը, այլև պարտատերերի:

Հոդված 19. Պարտապանին սնանկ ճանաչելը պարտատիրոջ (պարտատերերի)

հայցադիմումի հիման վրա

1. Դատավորը պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը պարտապանին է

ուղարկում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով հայցադիմումի պատճենը:

Եթե դատարանի որոշումն ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա ութերորդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին:

2. Եթե դատարանի որոշումն ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը վիճարկում է իր սնանկությունը՝ այդ մասին գրավոր առարկություններ ներկայացնելով դատավորին, ապա դատավորն առարկությունները ստանալու պահից 10 օրվա ընթացքում հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցվում են հայցադիմում ներկայացրած անձը (անձինք) և պարտապանը:

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Դատավորը ներկայացված ապացույցներով նույն օրը վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու կամ հայցը մերժելու մասին:

3. Եթե սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը վերանում են հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո, ապա հայցը մերժելու մասին վճռով դատավորը պարտավորեցնում է պարտապանին՝ փոխհատուցել դատական ծախսերը:

4. Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում՝ դրա կայացման, իսկ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերում՝ դատական նիստում հրապարակման պահից 15 օր հետո:

1-2. Մեկնաբանվող հոդվածը նույնպես նախատեսում է վճռի կայացում առանց դատական նիստ հրավիրելու: Այն դեպքում, երբ պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում է ներկայացրել պարտատերը, դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը պարտապանին է ուղարկում վերջինիս սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ դրան կցելով հայցադիմումի պատճենը և պարտապանի կողմից իր սնանկությունը յոթնօրյա ժամկետում վիճարկելու իրավունքի մասին ծանուցումը: Սնանկության մասին օրենքը հնարավորություն է տալիս պարտապանին վիճարկելու իր սնանկությունը:

Պարտապանի կողմից իր սնանկությունը վիճարկելը կամ չվիճարկելը առաջացնում է իրավաբանական հետևանքներ.

Եթե դատարանի որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա ութերորդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, որն օրինական ուժի մեջ է մտնում դրա կայացման պահից 15 օր հետո: Պարտապանի կողմից իր սնանկությունը չվիճարկելն օրենսդիրը համարում է որպես հայցապահանջի ընդունում և դատավորին հնարավորություն է տալիս առանց դատական նիստ հրավիրելու պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնել: Սակայն, մեկնաբանվող հոդվածը չի կարգավորել այն դեպքերը, երբ ակնհայտ անհիմն հայցապահանջը չի վիճարկվում պարտապանի կողմից, օրինակ՝ պարտապանի պարտավորությունը հայցվորի նկատմամբ պակաս է սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի չափից և (կամ) պարտավորության ժամկետը կետանցված չէ կամ կետանցի ժամկետը 30 օրից պակաս է:

Սնանկության մասին ՌԴ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն հայցվորի կողմից նմանօրինակ ներկայացրած հայցադիմումը վարույթ ընդունելը մերժվում է դատավորի կողմից: ՀՀ դատական պրակտիկայում նմանօրինակ հայցադիմումները մերժվում են դատավորի միանձնյա վճռով՝ հիմք ընդունելով սնանկության հատկանիշների բացակայությունը (սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս):

Եթե վերը նշված ժամկետի ընթացքում պարտապանը գրավոր առարկություններ է ներկայացնում դատավորին, ապա դատավորն առարկություններն ստանալու պահից 10 օրվա ընթացքում հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցվում են հայցադիմում ներկայացրած անձը (անձինք) և պարտապանը: Եթե պարտապանը վիճարկում է իր սնանկությունը, ապա ըստ էության պետք է հիմնավորի իր գրավոր առարկությունները՝ հղումներ անելով օրենքների դրույթներին: Պարտապանը կարող է ներկայացնել նաև այլ տեղեկություններ, որոնք կնպաստեն գործի ճիշտ և հանգամանալի քննությանը: Պարտապանն առարկություններին կարող է կցել նաև իր միջնորդությունները, եթե ունի այդպիսիք:

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պարտապանի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Ինչպես արդեն նշեցինք, նման կարգավորումը համանման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասին:

Դատավորը ներկայացված ապացույցներով նույն օրը վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու կամ հայցը մերժելու մասին, որն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստում հրապարակելու պահից 15 օր հետո:

Չնայած օրենսդրի նման կարգավորմանը, այնուամենայնիվ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հնարավոր դեպքերը, երբ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը: Դրանցից են՝ գործի քննության անհնարինությունը գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայության պատճառով և (կամ) լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիշատակված հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետը չի կարող հիմք հանդիսանալ սնանկության վերաբերյալ գործի քննության հետաձգման համար, քանի որ այն վերաբերվում է միայն գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումներին:

3. Հնարավոր է, որ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը վերանան, օրինակ՝ պատասխանողը մինչև վճռի կայացումը բավարարի հայցվորի (հայցվորների) պահանջները, որի արդյունքում կվերանան սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սնանկության հատկանիշները: Այս դեպքում դատարանը հայցը մերժելու մասին վճիռ է կայացնում և պարտավորեցնում է պարտապանին փոխհատուցել դատական ծախսերը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Հոդված 20. Սնանկության անվիճելիությունը

1. Դատավորը պարտապանին ճանաչում է սնանկ, եթե սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքի (հիմքերի) առկայությունն ակնհայտ է: Անվճարունակության հիմքերի առկայությունն ակնհայտ է համարվում, մասնավորապես, եթե՝

ա) պարտատերն ունի դրամական պարտավորության բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ.

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա և չկա վեճ հանդիպակաց կողմի պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման վերաբերյալ.

գ) պարտապանը չի առարկում իրեն ներկայացված դրամական պահանջի դեմ:

2. Պարտապանի սնանկության հիմքը (հիմքերը) ակնհայտ չլինելու դեպքում դատավորը կայացնում է վճիռ հայցը մերժելու մասին:

3. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո հաշտության համաձայնություն չի կարող կնքվել:

1-2. Մեկնաբանվող հոդվածում օրենսդիրը սահմանում է պարտապանի սնանկության անվիճելիությունը: Այն է, երբ գործի քննության ընթացքում առկա են պարտապանի սնանկության սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, և այդ հիմքերի առկայությունն ակնհայտ է, սնանկության գործով դատավորը պարտապանին սնանկ է ճանաչում: Իսկ այն դեպքում, երբ պարտապանի սնանկության հիմքը (հիմքերը) ակնհայտ չէ, դատավորը կայացնում է վճիռ հայցը մերժելու մասին: Անհրաժեշտ է նշել, որ պարտապանի սնանկության անվիճելիությունը գնահատում է դատարանը, և պարտապանի անհիմն վիճարկումը թերևս հայցի մերժման հիմք չէ:

Օրենսդիրն սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ է համարում, երբ պարտատերն ունի դրամական պարտավորության բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ, պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա և չկա վեճ հանդիպակաց կողմի պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման վերաբերյալ, պարտապանը չի առարկում իրեն ներկայացված դրամական պահանջի դեմ: Հաշվի առնելով դատական պրակտիկան՝ օրենսդիրը սահմանել է սնանկության հիմքերի ակնհայտ առկայության հաճախ հանդիպող երեք դեպք, սակայն օրենսդիրը չի բացառում այլ դեպքեր, որոնց առկայության դեպքում պարտապանի սնանկության հիմքերն ակնհայտ են: Օրինակ՝ երբ առկա չեն մեկնաբանվող հոդվածում նշված դեպքերը, սակայն պարտապանի սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սնանկության հատկանիշներն ակնհայտ հիմնավորվում են այլ օրենքների ուժով: Այսպես, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող պարտապանը չի վճարել տրամադրված լիցենզիայի համար սահմանված տարեկան պետական տուրքի գումարները, և այդ պարտավորության չափը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, իսկ պարտավորության կատարման կետանցը 30 օրից ավելի է:

Անհրաժեշտ է նշել նաև, որ եթե մեկնաբանվող մասով նախատեսված առաջին երկու հիմքերի առկայությունը բավարար ապացույց կարող է հանդիսանալ պարտապանի դրամական պարտավորությունը ապացուցված համարելու համար, երրորդ դեպքում պարտապանի դրամական պարտավորության դեմ չառարկելը դեռ բավարար հիմք չէ պարտավորության չափը ապացուցված համարելու համար: Այսպես, դատական պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ հարկային մարմինների կողմից ներկայացված հաշվարկները կողմերի կողմից ընդունվում են (չի ներկայացվում առարկություններ դրանց դեմ) սակայն դատարանը ուսումնասիրելով սնանկության հիմքը հավաստող ապացույցները մերժել է նման հայցադիմումները հաշվարկի սխալ լինելու կամ իրավական ակտի ոչ ճիշտ կիրառման պատճառաբանությամբ:

Մնանկության հարցի լուծումը ինքնուրույն դատավարական վարույթի տեսակ է և այն մեկնաբանվող հոդվածի մասով նման է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի հատուկ վարույթի գործերի քննության կարգին, որոնք օժտված են անվիճելիության հատկանիշներով: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն դատարանը դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին: Հատուկ վարույթին վերաբերվում են այն գործերը որտեղ բացակայում է դատարանին ենթակա նյութաիրավական վեճը: Այս դրույթի կիրառումը դատական պրակտիկայում շատ նման է վերը նշված օրինակին: Այսպես, դատարանը սնանկության հարցը լուծելիս նույնպես հայցը վիճելի է համարում այն դեպքերում, երբ առկա է նյութաիրավական վեճ:

3. Ի տարբերություն մի շարք այլ պետություններում (օրինակ ՌԴ) սնանկության իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունների՝ սույն օրենքը բացառում է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո հաշտության համաձայնության կնքումը: Սա բացատրվում է նրանով, որ սնանկության գործընթացն իր մեջ պարունակում է հաշտության համաձայնության գործընթացին բնորոշ տարրեր, այն իմաստով, որ այդ գործընթացում սատեցվում են բոլոր պարտատերերի պահանջների բավարարումը, սկսվում է պարտապանի ակտիվների ակտիվ հավաքագրում, որը տնօրինվում և կառավարվում է պարտատերերի կողմից (պարտատերերի ժողովների միջոցով) և դատարանի կողմից հաստատված բաշխման ծրագրերով բաշխվում է պարտատերերին՝ ելնելով ակտիվների հավաքագրման արդյունքներից: Ըստ էության հաշտության համաձայնությունը նույնպես մի գործընթաց է, որի արդյունքում պարտատերը և պարտապանը համաձայնության են գալիս պարտավորությունների կատարման շուրջ:

Սակայն, հաշտության համաձայնության կնքման արգելքը չի տարածվում հայցվոր պարտատիրոջ և պատասխանող-պարտապանի վրա, նրանք կարող են հաշտության համաձայնություն կնքել մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածով:

Հոդված 21. Պարտապանին սնանկ ճանաչելու և հայցը մերժելու հետևանքները

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատավորը՝

ա) սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ (այսուհետ՝ կառավարիչ)։

բ) անհապաղ նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը: Պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում.

գ) պարտապանին սնանկ ճանաչելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

- պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին,

- անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին,

- այն հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններին, որտեղ պարտապանը հաշվառված է,

- մաքսային պետական մարմիններին,

- Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր բանկերին և այլ վարկային կազմակերպություններին ծանուցելու համար,

- դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը,

- Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար.

դ) կառավարչին պարտավորեցնում է ոչ ուշ, քան համապատասխան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում.

ե) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ կառավարչի, պարտատերերի խորհրդի, պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ հրավիրում է դատական նիստ.

զ) պարտապանին պարտավորեցնում է 10 օրվա ընթացքում կառավարչին ներկայացնել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, եթե հայցադիմումը ներկայացրել է պարտատերը,

հարկադիր կատարողը, կամ պարտապանի կողմից հայցադիմում ներկայացնելու դեպքում դրանք ներկայացվել են թերի.

ե) պարտապանին լուծարելու պահից անհապաղ որոշում է կայացնում պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցնելու մասին, արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից առանց դատավորի թույլտվության արգելվում է պարտապանի մոտ որևէ ստուգում կամ ուսումնասիրություն, բացառությամբ ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարված պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պարտապանի լուծարումից հետո ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է:

3. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող անձանց և պարտապանի ղեկավարի՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունները:

4. Պարտապանին սնանկ ճանաչելու հայցը մերժելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված կասեցումները վերացնելու համար:

5. Սնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ հայցի մերժումը չի արգելում նույն անձին նույն հայցով դիմել դատարան սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում:

1. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը սահմանում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատավորի պարտադիր գործողությունները: Սնանկ ճանաչելու մասին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելն առաջ է բերում մի շարք իրավական և դատավարական հետևանքներ:

Սույն հոդվածը նախատեսում է դատարանի կողմից ձեռնարկվող այն միջոցառումների ցանկը, որը կիրառում է տնտեսական դատարանը սնանկության գործի վարույթում:

Դատավորը սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակում է սնանկության գործով կառավարիչ: Կառավարիչ կարող է նշանակվել ՀՀ կառավարության լիազորված մարմնի կողմից որպես սնանկության կառավարիչ լիցենզավորված և սնանկության կառավարչի համար օրենքով սահմանված պահանջները բավարարող անձ:

Դատավորը նշանակում է նաև պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը: Պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում: ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլը դեռևս չի ստեղծվել, ինչի կապակցությամբ սույն օրենքի անցումային դրույթներում (հոդված 100) սահմանված է, որ մինչև իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի հրապարակումը սույն օրենքով սահմանված հրապարակումները և ծանուցումները հրապարակվում են առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցներով:

Այդ պարտականության կատարումը դատարանը դնում է կառավարչի վրա: Այսպես, կառավարիչը պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցներով և փակցնում է դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում համապատասխան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում: Սնանկության գործով տնտեսական դատարանի կողմից կայացված դատական ակտերի հրապարակումը մամուլում կարևոր նշանակություն ունի: Ի դեպ օրենքը չի նախատեսում հրապարակման ենթակա ակտի բովանդակությունը, ուստի հրապարակումը պետք է բովանդակի միայն տեղեկատվություն ընդունված ակտերի մասին:

Դատավորը պարտապանին սնանկ ճանաչելու մասին տեղեկացնում է մեկնաբանվող հոդվածում թվարկված պետական մարմիններին: Մասնավորապես.

- պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին, անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին (օրինակ՝ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովին, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություններին, ՀՀ ոստիկանության պետավտոտեսչությանը), մաքսային պետական մարմիններին, որպեսզի վերջիններս վերահսկեն սույն օրենքով նախատեսված գույքի օտարման և այլ սահմանափակումները (հոդված 41, 47);

- այն հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններին, որտեղ պարտապանը հաշվառված է, որպեսզի վերջիններս որպես պետական մարմիններ պատշաճ իրականացնեն պարտապանի նկատմամբ եղած իրենց իրավունքներն ու պարտականությունները:

- Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր բանկերին և այլ վարկային կազմակերպություններին ծանուցելու համար, որպեսզի վերջիններս վերահսկեն սույն օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումը;

- դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը, «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով նախատեսված պարտապանի վերաբերյալ բոլոր կատարողական վարույթների կարճման պարտականությունն իրականացնելու համար;

- Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար, որպեսզի վերջիններս կասեցնեն այն քաղաքացիական գործերի վարույթները, որոնք առնչվում են կամ ազդում են սնանկության վարույթին կամ դրա ընթացքի վրա, և որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ (սույն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մաս):

Դատավորը կարող է հրավիրել նաև դատական նիստ սնանկության մասին օրենքով նախատեսված դեպքերում, եթե կառավարիչը, պարտատերերի խորհուրդը, պարտատերը կամ պարտապանը միջնորդել են այդ մասին:

Պարտատիրոջ, հարկադիր կատարողի կամ պարտապանի կողմից հայցադիմում ներկայացնելու դեպքում, եթե վերջինիս կողմից դրանք ներկայացվել են թերի, դատարանը սահմանում է 10 օրյա ժամկետ և պարտավորեցնում է պարտապանին այդ ժամանակահատվածում կառավարչին ներկայացնել սնանկության մասին օրենքի 13-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը:

Պարտապանի նկատմամբ լուծարման գործընթաց սկսելու դեպքում (լուծարելու մասին որոշում կայացնելու դեպքում) դատարանն անհապաղ որոշում է կայացնում պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցնելու մասին, արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: Մրանք նյութաիրավական հետևանքներն են, որոնք առաջանում են դատարանի կողմից պարտապանի նկատմամբ լուծարելու մասին որոշում կայացնելու պահից: Մինչ այդ, սկսած պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն ուժի մեջ մտնելու պահից պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի վերահսկողության ներքո (հոդված 47, 1-ին մաս):

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է նաև առանց դատավորի թույլտվության պարտապանի մոտ որևէ ստուգում կամ ուսումնասիրություն՝ բացառությամբ ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարման գործընթացում գտնվող պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պարտապանի լուծարումից հետո ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է: Նման կարգավորումը բխում է այն հանգամանքից, որ ստուգվել կարող է պարտապանի

իրականացրած գործունեության ժամանակահատվածը, իսկ երբ պարտապանի գործունեությունը վերջինիս լուծարման կապակցությամբ կասեցվում է և գործունեություն այլևս չի ծավալվում, ապա տվյալ ժամանակահատվածի ստուգման օբյեկտը ինքըստինքյան վերանում է: որոշել լուծարման պահը

Դատավորի կողմից ստուգման կամ այլ ուսումնասիրության թույլտվությունը տրվում է գրավոր:

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող անձանց և պարտապանի ղեկավարի օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունները: Սակայն, պարտապանի ղեկավարի լիազորությունների կասեցման վերաբերյալ օրենքի նման կարգավորումը հակասում է մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի «է» ենթակետին և սույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի վերահսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքների իրականացումը՝ առանց կառավարչի համաձայնության»:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասությունների դեպքում գործում են այն մասերի դրույթները, որոնք բխում են տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի սկզբունքներից...»:

«Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի էությունից, մասնավորապես 47-րդ հոդվածից, ինչպես նաև սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրության սկզբունքներից բխում է, որ պարտապանի կանոնադրական կապիտալին տիրապետող անձանց և պարտապանի ղեկավարի լիազորությունները, այդ թվում՝ վերակազմակերպվելու, գույքը տնօրինելու և կառավարելու, կասեցվում են միայն պարտապանի նկատմամբ լուծարման գործընթաց սկսելու պահից դատարանի համապատասխան որոշմամբ, իսկ սնանկ ճանաչելու պահից մինչև լուծարման գործընթաց սկսելը այդ լիազորությունները (իրավասուբյեկտությունը) միայն սահմանափակվում են և պարտապանի ղեկավարը գործում է անվճարունակության գործով կառավարչի վերահսկողության ներքո (սույն օրենքի 47-րդ հոդված):

4. Այն դեպքում, երբ բացակայում են պարտապանին սույն օրենքով նախատեսված սնանկ ճանաչելու հիմքերը, դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու հայցը մերժելու մասին վճիռ է կայացնում: Այս վճռի օրինական ուժի մեջ մտնելն առաջացնում է որոշակի հետևանքներ: Վերջինս հիմք է սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արգելանքը և 5-րդ մասով նախատեսված կասեցումները վերացնելու համար: Եթե դատարանի կողմից սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո կասեցվել են այլ գործերով դատավարությունները, ապա վերջիններս շարունակվում են, ինչպես նաև ի կատար են ածվում կատարողական փաստաթղթերը և այլն:

5. Մնանկության առանձնահատկություններից մեկը կարգավորված է սույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասում, ըստ որի ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի «Մնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ հայցի մերժումը չի արգելում նույն անձին նույն հայցով դիմել դատարան՝ սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում»:

Հոդված 22. Սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը

1. Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու հայցը մերժելու մասին դատարանի վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու կամ հայցադիմումը մերժելու մասին դատարանի վճիռը կարող են բողոքարկել պարտապանը, պարտատերը (պարտատերերը) և հարկադիր կատարողը՝ վերջինիս կողմից հայցադիմում ներկայացնելու դեպքում:

3. Դատարանի վճռի բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև դատարանի կողմից նշանակված ժամանակավոր կառավարչի գործողությունները:

4. Դատարանի վճռի բեկանումից հետո գործը քննվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանում միանձնյա՝ այլ դատավորի կողմից:

5. Սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում՝ վճռաբեկության կարգով, միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում: Մնացած դեպքերում դատավորի կայացրած որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

1. Սնանկության գործի քննության արդյունքում դատավորը կայացնում է վճիռ՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու հայցը մերժելու մասին: Այս վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան: Օրենսդիրը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու ժամկետ, այն պետք է վճռաբեկ դատարան ներկայացվի մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Իսկ վճռի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանված են սույն օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների 4-րդ մասերով, ըստ որոնց՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում կայացման կամ դատական նիստում հրապարակման պահից 15 օր հետո: Հարկ է նշել նաև, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ, 219-րդ և 221.4-րդ

հողվածների՝ դատարանի վճիռները նույնպես օրինական ուժի մեջ են մտնում հրապարակվելուց 15 օր հետո:

2. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն մեկնաբանվող հողվածում թվարկված անձինք, այն է՝ պարտապանը, պարտատերը (պարտատերերը) և հարկադիր կատարողը՝ վերջինիս կողմից հայցադիմում ներկայացնելու դեպքում: Սա նշանակում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռը կարող է բողոքարկվել պատասխանող-պարտապանի և հայցվորի կողմից, ընդ որում հայցվորներ կարող են լինել սույն օրենքով նախատեսված սնանկության հայցադիմում ներկայացնելու իրավունք և (կամ) պարտականություն ունեցող անձինք (հողվածներ 6, 10): Սակայն, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն նաև այն անձիք ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ է կայացվել:

Անհրաժեշտ է նշել, որ վճռաբեկ բողոք բերելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հիմք և նոր երևան եկած հանգամանքներ: Նույն օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն նյութական իրավունքը համարվում է խախտված կամ սխալ կիրառված, երբ դատարանը չի կիրառել այն օրենքը որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառվեր և սխալ է մեկնաբանել օրենքը, իսկ դատավարական նորմի խախտումը իրենից ենթադրում է դատավարական իրավունքի, դատավարական նորմի կիրառման ցանկացած խախտում: Նոր երևան եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոք կարող են ներկայացվել դատարանի վճիռը կամ որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմքերը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածով:

3. Դատարանի վճռի բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև դատարանի կողմից նշանակված ժամանակավոր կառավարչի գործողությունները: Այդ ժամանակահատվածում դատավորը և անվճարունակության գործով ժամանակավոր կառավարիչը կաշկանդված չեն դատավարական որոշ գործողություններ կատարել, օրինակ՝ դատարանը կառավարչի միջնորդությամբ պարտապանի գույքի նկատմամբ հայցի ապահովման միջոցներ կարող է կիրառել, կամ կառավարչի կողմից կարող են պարտապանի ֆինանսատնտեսական վիճակի ուսումնասիրություններ կատարվել և օրենքով սահմանված այլ գործողություններ:

4. Մեկնաբանվող հողվածի 4-րդ մասի դրույթը նույնպես բնորոշ է միայն սնանկության վարույթի գործերին և հանդիսանում է սնանկության վարույթի առանձնահատկություններից մեկը: Ի տարբերություն ընդհանուր իրավասության դատական վարույթների, որտեղ վճռի բեկանումից հետո գործը քննվում է երեք

դատավորի կազմով, սնանկության վերաբերյալ վճռի բեկանումից հետո այն քննվում է միանձնյա՝ այլ դատավորի կողմից:

5. Սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները բաժանվում են երկու խմբի՝ բողոքարկման ենթակա որոշումներ և վերջնական որոշումներ, որոնք չեն կարող բողոքարկվել: Օրենսդիրը սահմանում է, որ բողոքարկման ենթակա որոշումները պետք նախատեսված լինեն սույն օրենքով (օրինակ՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը (46-րդ հոդվածի 9-րդ մաս)): Վերջիններս կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով, դրանց կայացման կամ դատական նիստում հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

Երկրորդ խումբ որոշումները, որոնք տնտեսական դատարանը կայացրել է սնանկության գործով, բողոքարկման ենթակա չեն, քանի որ օրենքը այդպիսի հնարավորություն չի նախատեսում: Դատավորի կայացրած նման որոշումները վերջնական են: Օրինակ՝ պարտապանի գույքի (ուղղակի կամ աճուրդային կարգով) օտարման, պահանջների բավարարման բաշխման ծրագիրը հաստատելու մասին որոշումները և այլն (հոդվածներ 75, 80):

Ընդհանուր իրավասության վարույթներում կայացված որոշումների բողոքարկումը համանման է սույն օրենքի կարգավորմանը և սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանների և տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած և վերաքննիչ տնտեսական դատարանների օրինական ուժի մեջ չմտած որոշումները կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: Իսկ նույն օրենսգրքի 144.1-րդ հոդվածի համաձայն դատավարության ընթացքում դատարանի՝ առանձին ակտի տեսքով չձևակերպված որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահին: Դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԼՈՒԽ 7.

Պարտապանի գույքը

Հոդված 47. Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը

1. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է

կառավարչի վերահսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքների իրականացումը՝ առանց կառավարչի համաձայնության:

2. Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարումից հետո իրականացնում է կառավարիչը՝ սույն օրենքով սահմանված կարգով: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո զրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից:

1. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո մինչև նրա վերաբերյալ դատարանի կողմից սույն օրենքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով լուծարելու մասին որոշում ընդունելը պարտապանի ղեկավարը չի ազատվում զբաղեցրած պաշտոնից և շարունակում է իր լիազորությունների իրականացումը՝ սույն օրենքով նախատեսված սահմանափակումների հաշվառմամբ: Սա նշանակում է, որ պարտապանի բնականոն գործունեությունը շարունակվում է (չի կասեցվում), ընդ որում գործարքները, որոնք կապված են պարտապանի բնականոն գործունեության հետ, կնքվում են պարտապանի տնօրենի կողմից՝ կառավարչի վերահսկողության ներքո: Սակայն նշված հանգամանքը չի բացառում, որ սնանկ ճանաչվելու կապակցությամբ պարտապանի ղեկավարի կողմից պարտապանի համար ոչ շահավետ գործարքներ կնքվեն (հոդված 54) կամ առանց դատարանի թույլտվության պահանջներ բավարարվեն (հոդված 41), որոնք կապված չեն պարտապանի բնականոն գործունեության հետ: Նման չարաշահումները բացառելու համար օրենսդիրը նախատեսել է կառավարչի վերահսկողության որոշակի ձևեր պարտապանի ղեկավարի գործողությունների նկատմամբ: Այդ վերահսկողությունն ուղղված է պարտապանի քաղաքացիական շրջանառությունում մասնակցելու նպատակահարմարության ստուգմանը: Որպես նման վերահսկողության իրավաբանական ձև հանդիսանում է պարտապանի ղեկավարի իրավունքների իրականացման վերաբերյալ կառավարչի տրված գրավոր համաձայնությունը:

Քանի որ, պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքների իրականացումն առանց կառավարչի համաձայնության և այս կանոնը սահմանված է օրենքով, ապա այս կանոնի խախտման դեպքում (պարտապանի ղեկավարի կողմից գործարքի կնքում առանց կառավարչի համաձայնության) նման գործողությունները (գործարքները) կարող են անվավեր ճանաչվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի կարգով և դրանց նկատմամբ կիրառվել սույն օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված հետևանքները:

Այնուամենայնիվ, մինչև պարտապանի լուծարումը և բնականոն գործունեության կասեցումը կառավարիչը բացի վերահսկողություն իրականացնելուց իրավունք ունի

դատարանի թույլտվությամբ ուղղակի գործարքով օտարել պարտապանի արագ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքը, ինչպես նաև այն դեպքում, երբ պարտապանի դրամական միջոցներն անբավարար են պարտապանի գույքի պահպանման համար (հոդված 55):

2. Պարտապանի գործունեությունը, այդ թվում՝ գույքը կառավարելու և տնօրինելու իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ՝ սույն օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարումից և գործունեությունը կասեցնելուց հետո իրականացվում է կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված կարգով: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո գրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու բոլոր իրավունքներից: Այս դրույթը համանման է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթին, համաձայն որի՝ իրավաբանական անձի լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովի նշանակման պահից, վերջինիս են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Սնանկության վորություն պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու դեպքում պարտապանի ղեկավարը դադարում է սնանկության հետագա գործընթացներին մասնակից լինել: Սակայն պարտապանի մասնակիցները (հիմնադիրները, բաժնետերերը, անդամները, գործընկերները) շարունակում են իրենց մասնակցությունը սնանկության հետագա գործընթացներում պարտատերերի (պարտատիրոջ) կարգավիճակով, վերջիններիս դրամային պահանջները (ներդրումները, այդ թվում՝ ոչ դրամային) դրանց ներկայացման դեպքում ենթակա են հաշվառման սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետով նախատեսված հերթում:

Պարտապանի լուծարման գործընթացում մինչև սնանկության գործի ավարտը պարտապանի գույքի տնօրինումը և կառավարումը կառավարիչն իրականացնում է սույն օրենքով սահմանված վերջինիս լիազորությունների և պարտականությունների շրջանակներում:

Հոդված 48. Պարտապանի՝ համագործակցելու պարտավորությունը

Մինչև պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելը պարտապանի ղեկավար մարմինները պարտավոր են համագործակցել կառավարչի հետ և նրան տրամադրել պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հավաստի տեղեկությունները, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած երեք տարվա ընթացքում պարտապանի գույքի օտարման կամ ակտիվների այլ ձևով նվազեցման մասին:

Նշված պահանջը չկատարելու դեպքում համապատասխան անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սնանկության ժամանակավոր կառավարչի, այնուհետև պարտապանին սնանկ ճանաչելուց հետո հիմնական կառավարչի կողմից ուսումնասիրվում է պարտապանի

Ֆինանսատնտեսական վիճակը, ինչպես նաև վերլուծվում է պարտապանի սնանկության պատճառները (սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետ, 23-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետ և 58-րդ հոդված): Այս կապակցությամբ, ինչպես նաև պարտապանի նախկինում ոչ շահավետ կնքված գործարքների հայտնաբերման և ակտիվների արդյունավետ հավաքագրման նպատակով օրենսդիրը պարտապանի ղեկավար մարմիններին պարտավորեցնում է համագործակցել կառավարչի հետ և նրան տրամադրել պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հավաստի տեղեկությունները, այդ թվում՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած երեք տարվա ընթացքում պարտապանի գույքի օտարման կամ ակտիվների այլ ձևով նվազեցման մասին:

Ունենալով անհրաժեշտ և հավաստի տեղեկություններ պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ՝ կառավարիչը հնարավորություն կունենա ճգրիտ վերլուծել իրավիճակը, գնահատել հետագա գործողությունները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ պարտապանի ակտիվներն առավելագույնս հավաքագրելու, ինչպես նաև պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար:

Այս պարտավորությունները պարտապանի ղեկավար մարմինները կրում են մինչև պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելը, քանի որ լուծարելու մասին որոշում կայացնելուց հետո պարտապանի գործադիր մարմինը դադարում է գործել:

Մեկնաբանվող հոդվածով սահմանված պարտականությունը չկատարելու դեպքում համապատասխան անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Այսինքն, վերը նշված պարտականությունը չկատարող անձինք, մեղքի առկայության դեպքում, համապատասխան գույքային պատասխանատվություն են կրում իրենց գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության սնանկության գործընթացում անօրինական գործողությունների համար, այդ թվում մեկնաբանվող հոդվածով սահմանված պարտականությունների չկատարման համար (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 192, մաս 1): Բացի այդ, պարտապանի ղեկավար մարմինները քրեական պատասխանատվություն են կրում, երբ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո առանց դատարանի որոշման առանձին պարտատիրոջ պահանջ են բավարարում՝ խախտելով մյուս պարտատերերի պահանջների բավարարման

համամասնության սկզբունքը, որով խոշոր վնաս է պատճառվում մյուս պարտատիրոջը (պարտատերերին) (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 192, մաս 2):

Պարտապանի ղեկավար մարմինների հիշատակված պարտավորությունների կատարումից խուսափելը կարող է հիմք հանդիսանալ պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքների վաղաժամկետ կասեցման համար՝ մինչև պարտապանի լուծարումը (հոդված 72, մաս 2):

Հոդված 49. Պարտապանի կոմունալ ծառայությունների դիմաց վճարումը

1. Պարտապանին կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, բնական գազ, ջուր, հեռախոսակապ և այլն) մատուցող կազմակերպությունները չեն կարող հրաժարվել, մերժել, դադարեցնել իրենց ծառայությունների մատուցումը պարտապանին դատարանի կողմից նրան սնանկ ճանաչելու պատճառով, եթե պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո ժամանակին կատարում է նշված ծառայությունների դիմաց ընթացիկ վճարումները:

2. Մինչև պարտապանին սնանկ ճանաչելն առաջացած պարտքի առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ կոմունալ ծառայությունների տրամադրման պայմանագրի լուծման կամ ծառայությունների դադարեցման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո օրենսդիրը սառեցնում է պարտապանի բոլոր տեսակի պահանջների բավարարումը (մորատորիում), որոնք առաջացել են մինչև սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը (հոդված 41)՝ մեկնաբանվող հոդվածը սահմանում է, որ այդ մորատորիումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ պարտապանի մինչև լուծարումն ընկած բնականոն գործունեություն ծավալելու, լուծարումից հետո պարտապանի վերսկսված գործունեությունը ծավալելու, ֆինանսական առողջացման ծրագիրն իրականացնելու, ինչպես նաև հետագայում կառավարչի կողմից իրականացվելիք գործողությունների համար: Մասնավորապես պարտապանը չի կարող զրկվել մատուցվող կոմունալ ծառայություններից, իսկ մորատորիումի հետևանքով չվճարված նախկին պարտավորությունները չեն կարող հիմք հանդիսանալ այդ կոմունալ ծառայությունների տրամադրման համար կնքված պայմանագրերի լուծման կամ ծառայությունների դադարեցման համար:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսում է, որ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո վերջինիս մատուցված ընթացիկ կոմունալ ծառայությունների համար

պետք է վճարում կատարվի, որն իրականացվում է դատարանի կողմից հաստատված պահանջների բաշխման ծրագրերով: Համաձայն սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի՝ հիշատակված պահանջները, որոնք առաջացել են կառավարչի լիազորությունների իրականացման կապակցությամբ համարվում են գույքի պահպանման և տնօրինման ծախսեր և բավարարվում են նույն հոդվածով նախատեսված «բ» հերթում, իսկ այն պահանջները, որոնք առաջացել են պարտապանի բնականոն և վերսկսված գործունեության հետ համարվում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնություններ և բավարարվում են նույն հոդվածով նախատեսված «ե» հերթում:

Սույն օրենքով սահմանված կոմունալ ծառայությունները դրանք պարտապանի օգտագործած (ծախսած) էլեկտրաէներգիան, բնական գազը, ջուրը, հեռախոսակապի և այլ ծառայություններն են, որոնք անհրաժեշտ են պարտապանի գույքի պահպանման, պարտապանի բնականոն կամ վերսկսված գործունեության ծավալման, ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման, ինչպես նաև ակտիվների հավաքագրման և գույքի օտարման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

Հոդված 50. Պարտապանի պայմանագրերը

1. Պարտապանի ակտիվներն առավելագույնս հավաքագրելու նպատակով, կառավարչի հայցով, դատական կարգով, կարող է լուծվել ցանկացած պայմանագիր, այդ թվում՝ վարկ տրամադրելու, վարձակալության կամ այլ երկարաժամկետ պայմանագրերը, եթե պայմանագրի մյուս կողմն ամբողջությամբ կամ մասամբ չի կատարել իր պարտավորությունները:

2. Եթե պարտապանի գույքը գնած անձը մինչև վաճառքի գումարի ամբողջական մարումն ստացել է այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, ապա կառավարչի պահանջն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, իր պարտավորության լրիվ կատարման դեպքում գործարքը համարվում է ավարտված, և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնը նրա վրա չի տարածվում:

3. Պարտապանի աշխատանքային պայմանագրերը լուծվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սնանկ ճանաչելուց հետո կառավարչի կողմից աշխատողներին համապատասխան ծանուցման պայմանով:

4. Պայմանագրի կողմը կարող է պահանջել պայմանագրի վաղաժամկետ լուծմամբ իրեն պատճառված իրական վնասի հատուցում՝ իր պահանջը ներկայացնելով սույն օրենքով սահմանված կարգով:

5. Եթե պայմանագրով նախատեսվում են պարբերական վճարումներ պարտապանի կողմից, ապա կառավարիչը կարող է դրանք կատարել միայն սույն օրենքով սահմանված պահանջների ցուցակը և դրանց բավարարման հերթականությունը դատավորի կողմից հաստատվելուց հետո:

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելն ինքնին չի դադարեցնում պարտապանի նախկինում կնքած պայմանագրերի գործողությունը: Դրա հետ մեկտեղ, պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով, մեկնաբանվող հողվածք կառավարչին պայմանագրերը լուծելու նախաձեռնության իրավունք է տալիս: Պարտապանի պայմանագրերը լուծելու նախաձեռնության իրավունք կառավարչին տալը պայմանավորված է նաև նրանով, որ կնքված պայմանագրերի կատարումը պարտապանի սնանկության պայմաններում կարող է աննպատակահարմար լինել պարտապանի ակտիվներն առավելագույնս հավաքագրելու և պարտատերերի պահանջները բավարարելու համար:

Պայմանագիրը լուծում է դատարանը՝ կառավարչի հայցով: Սույն օրենքը նախատեսում է ցանկացած պայմագրի լուծման հնարավորություն, այդ թվում՝ վարկ տրամադրելու, վարձակալության կամ այլ երկարաժամկետ պայմանագրերի, սակայն միայն այն դեպքում, երբ պայմանագիրը գտնվում է կատարման փուլում և պայմանագրի մյուս կողմն ամբողջությամբ կամ մասամբ չի կատարել իր պարտավորությունները:

2. Եթե պարտապանի գույքը գնած անձը մինչև վաճառքի գումարի ամբողջական մարումն ստացել է այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, ապա կառավարչի պահանջն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում իր պարտավորության լրիվ կատարման դեպքում գործարքը համարվում է ավարտված, և մեկնաբանվող հողվածի 1-ին մասով սահմանված կանոնը նրա վրա չի տարածվում: Հիշյալ պայմանը չպահպանելու դեպքում կառավարիչը կրկին իրավունք է ստանում առուվաճառքի պայմանագիրը լուծելու և օրենքով նախատեսված հետևանքները կիրառելու հայցով դիմել ընդհանուր իրավասության դատարաններ՝ օտարված գույքը հետ ստանալու նպատակով: Իսկ այն դեպքում, երբ գույքը գնած անձը կատարում է մեկնաբանվող դրույթով սահմանված պարտավորությունները, ապա այդ գործարքը կարող է վիճարկվել միայն սույն օրենքի 54-րդ հոդվածով (անշահավետ գործարքներ) կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անվավերության հիմքերի առկայության դեպքում (անվավեր և առջինչ գործարքներ):

3. Պարտապանի աշխատանքային պայմանագրերը լուծվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սնանկ ճանաչելուց հետո կառավարչի կողմից աշխատողներին համապատասխան ծանուցման պայմանով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն պարտապանի աշխատանքային պայմանագրերը մինչև դրանց ժամկետների ավարտվելը կարող են լուծվել ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ադմինիստրացիայի կողմից միայն ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության վերացման դեպքում: Նույն օրենսգրքի 42.2-րդ հոդվածի համաձայն առաջիկա ազատման մասին աշխատողներն անհատապես նախագրուշացվում են ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Աշխատանքային պայմանագրերի լուծման հետ կապված պահանջները, այդ թվում՝ վերջնահաշվարկը բավարարվում են սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով և 83-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսված կարգով՝ սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» և «թ» հերթերում՝ կախված դրանց առաջացման ժամանակահատվածից:

4. Մեկնաբանվող հոդվածի շրջանակներում պարտապանի պայմանագրերի լուծմամբ ապահովվում են անձանց լայն շրջանակի՝ պարտատերերի շահերը: Պայմանագրի մյուս կողմին դրա լուծման հետևանքով կարող է վնասներ պատճառվել: Ուստի պայմանագրի կողմը կարող է պահանջել պայմանագրի վաղաժամկետ լուծմամբ իրեն պատճառված իրական վնասի հատուցում: Վնասի հատուցման պահանջը կողմը կարող է ներկայացնել սույն օրենքով սահմանված կարգով, որը հաշվառվում է և կարող է բավարարվել սույն օրենքով սահմանված առաջնահերթությանը համապատասխան:

5. Եթե պայմանագրով նախատեսվում են պարբերական վճարումներ պարտապանի կողմից, օրինակ՝ այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար, ինչպես նաև պարտապան քաղաքացու անչափահաս երեխաների համար անհրաժեշտ ծախսերը (ալիմենտները), ապա կառավարիչը կարող է դրանք կատարել միայն սույն օրենքով սահմանված պահանջների ցուցակը և դրանց բավարարման հերթականությունը դատավորի կողմից հաստատվելուց հետո:

Հոդված 51. Տարանցման վիճակում գտնվող գույքը

1. Եթե պարտատիրոջ կողմից պարտապանին վաճառված գույքի նկատմամբ պահանջը գրանցելու պահին պարտապանը ձեռք չի բերել սեփականության իրավունք, ապա պարտատերը կարող է այն հետ ստանալ

կամ չհանձնել պարտապանին: Այդ դեպքում հետ ստանալու կամ չհանձնելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է պարտատերը՝ վերադարձնելով նաև պարտապանի կատարած վճարները:

2. Եթե պարտատերը, այնուամենայնիվ, հանձնում է գույքը պարտապանին կամ մինչև պահանջը գրանցելու պահը գույքը հետ ստանալու պահանջ չի ներկայացնում, ապա նրա դրամական պահանջը կարող է ընդգրկվել ընդհանուր պահանջների ցանկում:

1-2. Օրենսդիրը, տարանջման վիճակում գտնվող գույք սահմանելով, ի նկատի է ունենում այն գույքը, որոնց շրջանակը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ և 134-րդ հոդվածներով: Մեկնաբանվող հոդվածով կարգավորված է այն իրավիճակը պահը երբ պարտապանը սնանկ ճանաչվելուց առաջ գույք է ձեռք բերել, սակայն դրա նկատմամբ դեռևս սեփականության իրավունքը չի ծագել: Օրինակ՝ գույքի առուվաճառքի պայմանագրով նախատեսված գույքի հանձնում-ընդունումը տեղի չի ունեցել, պետական գրանցման ենթակա գույքի (շենք, շինություն, հողամաս, բաժնեմաս և այլն) առուվաճառքի պայմանագիրը կնքված է, սակայն դեռ պետական գրանցում չի ստացել և այլն: Նման պարագայում օրենսդիրը հնարավորություն է տալիս վաճառողին օտարվող գույքը հետ ստանալ պարտապանից կամ չհանձնել պարտապանին՝ կրելով այդ չհանձնման կամ հետ ստանալու հետ կապված ծախսերը և միաժամանակ վերադարձնել օտարած գույքի դիմաց ստացած վճարն ամբողջությամբ: Հոդվածի դրույթից ակնհայտ է, որ նման հնարավորությունը բացառվում է այն դեպքում, երբ պարտապանի այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է:

Եթե գույք օտարած անձը չի օգտվում մեկնաբանվող հոդվածում նախատեսված իրավունքից, ապա այդ անձն օտարած գույքի դիմաց չստացած գումարի կամ դրա մասի չափով ստանում է պահանջի իրավունք պարտապանի նկատմամբ: Այդ պահանջը դատարան ներկայացվելու դեպքում ենթակա է հաշվառման պարտապանի նկատմամբ եղած պահանջների ցուցակում համաձայն սույն օրենքի 46-րդ և 82-րդ հոդվածներով նախատեսված կարգով և առաջնահերթությամբ:

Մեկնաբանվող հոդվածով կարգավորված հարաբերություններում կողմերի միջև ծագած

վեճերը լուծվում են սնանկության գործը քննող դատավորի կողմից՝ սնանկության գործի

շրջանակներում, եթե պատասխանող կողմ է հանդիսանում սնանկ ճանաչված

պարտապանը, քանի որ սույն օրենքի 41-րդ հոդվածի համաձայն «Պարտապանին սնանկ

ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են սնանկության

վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող այն քաղաքացիական գործերի

վարույթները, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ»։ Իսկ երբ խախտված է պարտապանի իրավունքը, ապա պարտապանը կամ նրա անունից կառավարիչը պետք է դիմի ընդհանուր իրավասության դատարաններ գույքն ապօրինի տիրապետումից հետ ստանալու պահանջով։ Օրինակ՝ գնված գույքը, որի նկատմամբ պարտապանի սեփականության իրավունքը ծագել է և ապօրինաբար չի հանձնվել, ապա պարտապանը կամ նրա անունից կառավարիչը դիմում է ընդհանուր իրավասության դատարան գույքն ապօրինի տիրապետումից հետ ստանալու պահանջով։

Հոդված 52. Երրորդ անձանց պատկանող գույքի իրացումը

1. Եթե պարտապանն իրացնում է երրորդ անձին պատկանող գույքը, կամ այդ գույքը նրա մոտ է գտնվում այլ պայմանագրային հիմունքներով (այսուհետ՝ երրորդ անձանց պատկանող գույք), ապա պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երրորդ անձն իրավունք ունի պարտապանից հետ պահանջել իր գույքը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ։

2. Եթե պարտապանին սնանկ ճանաչելու պահին երրորդ անձանց պատկանող գույքի կամ դրա մի մասի վերադարձը հնարավոր չէ կամ վերադարձի արդյունքում դրա որակական հատկանիշները կարող են էապես վատանալ (արագ փչացող ապրանքներ և այլն), ապա այդ գույքի սեփականատիրոջ դիմումով այդ պահանջն ընդգրկվում է պահանջների գրանցամատյանում գույքի պայմանագրային արժեքով, իսկ վերջինիս որոշման անհնարինության դեպքում՝ դրա շուկայական արժեքով։

1. Ելնելով պարտապանի ծավալած գործունեության առանձնահատկությունից՝ օրենսդիրը կարգավորել է այն հարաբերությունները, որոնք կարող են առաջանալ երրորդ անձին պատկանող գույք իրացնող պարտապանին սնանկ ճանաչելուց հետո։ Այդպիսի պարտապան է, օրինակ՝ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագիր կնքած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (օգտագործողը), որը բացի իրավատիրոջը պատկանող

բացառիկ իրավունքների համալիրի օգտագործումից, նույն պայմանագրի շրջանակներում իրացնում է իրավատիրոջից ստացված ապրանքները (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 969): Մեկ այլ օրինակում պարտապանը, հանդիսանալով մեծածախ կամ մանրածախ առևտուր կազմակերպող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, պայմանագրային հիմունքներով իրացնում է երրորդ անձին պատկանող ապրանքները: Հիշատակված օրինակներում պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից ապրանք տրամադրված երրորդ անձն իրավունք ունի պարտապանից հետ պահանջել իր գույքը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Եթե պարտապանին սնանկ ճանաչելու պահին երրորդ անձանց պատկանող գույքի կամ դրա մի մասի վերադարձը հնարավոր չէ կամ վերադարձի արդյունքում դրա որակական հատկանիշները կարող են էապես վատանալ (արագ փչացող ապրանքներ և այլն), ապա այդ գույքի սեփականատիրոջ դիմումով այդ պահանջն ընդգրկվում է պահանջների գրանցամատյանում գույքի պայմանագրային արժեքով, իսկ վերջինիս որոշման անհնարինության դեպքում՝ դրա շուկայական արժեքով: Տվյալ դեպքում երրորդ անձի ներկայացրած պահանջները կհանդիսանան սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներ և կախված դրանց առաջնահերթությունից և ապահովվածությունից, ինչպես նաև ներկայացման ժամկետից կընդգրկվեն նույն հոդվածով սահմանված համապատասխան հերթերում:

Հոդված 53. Մասնագիտական ծառայությունների մատուցումը

1. Այն դեպքում, երբ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո պայմանագրի մյուս կողմը համաձայն է պարտապանի՝ ծառայություններ մատուցելու պայմանագրային պարտավորություններն ընդունել, ապա պարտապանը կարող է կառավարչի հսկողությամբ իրականացնել այդ ծառայությունները՝ մինչև պարտապանի լուծարումը:

2. Գույքն օտարելու պայմանագրային պարտավորությունները պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից չեն կարող կատարվել:

3. Եթե կառավարիչը գտնում է ոչ նպատակահարմար պարտապանի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրային պարտավորությունների կատարումը, ապա այդ պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են սույն օրենքով սահմանված կարգով:

1-3. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը կարգավորում է այնպիսի իրավաբանական անձի սնանկության գործընթացում հնարավոր պայմանագրային հարաբերությունները, որոնք իրենց գործունեության բնույթով ծառայություններ մատուցող կազմակերպություններ են: Այսպես, երբ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո պայմանագրի մյուս կողմը համաձայն է պարտապանի՝ ծառայություններ մատուցելու պայմանագրային պարտավորություններն ընդունել, ապա պարտապանը կարող է կառավարչի հսկողությամբ իրականացնել այդ ծառայությունները՝ մինչև պարտապանի լուծարումը: Սակայն, օրենսդրի նման կարգավորումը կարծես թե ավելորդ լինի, քանի որ սույն օրենքի 47-րդ հոդվածն արդեն իսկ կարգավորել է այս հարցը, այն իմաստով, որ պարտապանի բնականոն գործունեությունը մինչև վերջինիս լուծարումը չի կասեցվում և շարունակվում է կառավարչի հսկողության ներքո: Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում նույնպես ծառայությունների մատուցումը թույլատրվում է կառավարչի հսկողությամբ մինչև պարտապանի լուծարումը:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կարգավորումները ըստ էության բխում են սույն օրենքի 44-րդ հոդվածից, այն է.

«Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից նրա՝ կատարման ժամկետը չլրացած բոլոր պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են լրացած, իսկ դրանցից բխող պահանջները բավարարվում են սույն օրենքով սահմանված կարգով և չափերով»:

Այնուամենայնիվ, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրային հարաբերությունների դադարեցումը կամ դրանք ուժի մեջ թողնելու հարցը օրենսդիրը թողել է կառավարչի հայեցողությանը, որը պետք է նշված պայմանագրերը լուծի կամ թողնի ուժի մեջ՝ ելնելով պարտապանի համար այդ պայմանագրերի նպատակահարմարությունից: Իսկ 2-րդ մասով նախատեսված՝ գույքն օտարելու մասին պարտապանի պայմանագրային պարտավորությունները վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ամեն դեպքում չեն կարող կատարվել, քանի որ այդ պահից սկսած պարտապանի գույքի օտարումն իրականացվում է սույն օրենքի 57-րդ, 75-77-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ պարտապանի գույքի գնահատումից և պարտապանի լուծարումից հետո՝ դատարանի թույլտվությամբ:

Հոդված 54. Երրորդ անձանց կատարված փոխանցումները և գույքի օտարումը

1. Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատարան հետ ստանալու՝

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում.

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում.

գ) պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած 90 օրվա ընթացքում կատարված ցանկացած փոխանցում (այդ թվում՝ ոչ դրամային).

դ) պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է իրացման և շուկայական արժեքի տարբերության:

2. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կառավարիչը կարող է դիմել դատարաններ՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կնքված այն գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով, որոնք ակնհայտորեն անշահավետ են եղել պարտապանի համար և (կամ) էականորեն նվազեցրել են պարտապանի ակտիվները:

1. Մեկնաբանվող հոդվածը նախատեսում է կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Կատարված փոխանցումները հետ ստանալու հիմքում դրված է այն հանգամանքը, որ դրանք պետք է փոխանցված լինեն անհատույց: Այդ փոխանցումները կարող են լինել նաև ոչ դրամային, այսինքն այլ գույքային փոխանցումներ, այդ թվում՝ ապրանքներ, նյութեր, արժեթղթեր, շարժական և անշարժ այլ գույք: Կառավարիչն այս իրավունքը դատական կարգով կարող է իրականացնել (դատարան կարող է դիմել) պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, բայց ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում: Մա նշանակում է, որ պարտապանի խախտված իրավունքը պաշտպանելու և պարտապանին պատճառված վնասները վերականգնելու լիազորությունները կառավարիչը դատարանի միջոցով կարող է իրականացնել միայն մեկ տարվա ընթացքում: Մակայն, կառավարչի հիշատակված լիազորությունները ժամկետային սահմանափակում չունեն արտադատարանական կարգով իրականացնելու համար: Փաստորեն, պարտապանի խախտված իրավունքի կառավարչի միջոցով իրականացվող դատական պաշտպանությունը մեկ տարի է,

սակայն, խախտված իրավունքը վերականգնելու արտադատական կարգով սահմանափակում չկա, ինչը բխում է ՀՀ օրենսդրությունից: Հիշեցնենք նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անձի խախտված իրավունքի դատական կարգով պաշտպանության հնդհանուր վաղեմության ժամկետը սահմանել է 3 տարի, ինչը տարածվում է նաև մեկնաբանվող հոդվածով սահմանված իրավահարաբերությունների վրա:

Սույն օրենքը տարբեր մոտեցումներ է դրսևորել պարտապանի կողմից երրորդ անձանց փոխանցումները հետ ստանալու համար՝ կախված այդ սուբյեկտների տեսակից: Այս հանգամանքից ելնելով՝ օրենսդիրը վերջիններիս օգտին կատարված փոխանցումները հետ ստանալու համար տարբեր ժամանակահատվածներ է սահմանել: Այսպես, եթե փոխանցումները կատարվել են պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձանց, ապա դրանք կարող են հետ պահանջվել պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, իսկ, եթե կատարված փոխանցումները կատարվել են ցանկացած երրորդ անձանց, ապա՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում: Պարտապանի նկատմամբ շահագրգիռ անձանց շրջանակը սահմանված է սույն օրենքի 9-րդ հոդվածով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ կառավարիչը կարող է հետ պահանջել պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած 90 օրվա ընթացքում կատարված ցանկացած այլ փոխանցում: Նման կարգավորումը բխում է պարտապանի պարտատերերի պահանջների բավարարման համամասնության սկզբունքից:

Կառավարիչը կարող է դիմել դատական կարգով հետ ստանալու նաև պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է իրացման և շուկայական արժեքի տարբերության: Կառավարչի նման գործողությունները նպատակ ունեն վերականգնել հիշատակված գործարքների կամ փոխանցումների հետևանքով պարտապանի նվազեցված ակտիվները:

Իր լիազորություններն իրականացնելիս կառավարիչն իրավասու է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները պարտապանի գույքը վերադարձնելու նպատակով: Այդ միջոցառումների թվում է գործարքն անվավեր ճանաչելու պահանջով հայց հարուցելը:

Մեկնաբանվող հոդվածն ունի դիսպոզիտիվ կարգավորում և դրանում նշված փոխանցումների (այդ թվում՝ ոչ դրամային) հետ ստանալու հարցի հիմնավորվածությունը և անհրաժեշտությունը գնահատում է դատարանը:

2. Եթե մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս կառավարչին հետ ստանալ պարտապանի նախկինում կատարված փոխանցումները,

ապա սույն մասով կառավարչին հնարավորություն է ընձեռնվում դիմելու դատարաններ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կնքված գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով: Ինչպես 1-ին մասում, այնպես էլ սույն մասում գործարքն անվավեր ճանաչելու պահանջով կառավարիչը կարող է դիմել դատարան պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում: Ելնելով սնանկության ինստիտուտի առնաձևահատկությունից՝ օրենսդիրը գործարքի անվավերության հատուկ հիմք է նախատեսել, այն է՝ անվավեր կարող են ճանաչվել այն գործարքները, որոնք ակնհայտորեն անշահավետ են եղել պարտապանի համար և (կամ) էականորեն նվազեցրել են պարտապանի ակտիվները:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը վերաբերվում է միայն վիճահարույց գործարքներին, ուստի սնանկության գործընթացում առոչինչ գործարքներ հայտնաբերելու դեպքում սնանկության գործով կառավարիչն կարող է առոչինչ գործարքների անվավերության հետևանքների կիրառման մասին հայց ներկայացնել դատարաններ դրա կատարման օրվանից 10 տարվա ընթացքում (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 317, մաս 1):

Հոդված 55. Պարտապանին պատկանող գույքի պահպանումը և իրացումը

1. Կառավարիչը ձեռնարկում է պարտապանին պատկանող գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

2. Կառավարիչը, մինչև դատավորի կողմից պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կամ պարտապանի լուծարման մասին որոշման ընդունումը, դատավորի թույլտվությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուղղակի գործարքով կարող է վաճառել միայն՝

ա) պարտապանին պատկանող արագ փչացող ապրանքները.

բ) պարտապանին պատկանող գույքի պահպանման էական ծախսեր պահանջող գույքը: Պահպանման էական ծախսեր են համարվում մեկ տարվա ընթացքում պարտապանի գույքի արժեքի 5 տոկոսը գերազանցող ծախսերը:

3. Պարտապանի գույքի պահպանությունն իրականացնելու համար կարող են օգտագործվել պարտապանի սնանկության հատուկ հաշվին փոխանցված միջոցները: Եթե պարտապանի սնանկության հատուկ հաշվին փոխանցված միջոցները բավարար չեն պարտապանի գույքի պահպանությունն իրականացնելու համար, ապա կառավարիչը դատավորի

թույլտվությամբ ուղղակի գործարքով կարող է վաճառել պարտապանին պատկանող այլ գույքը: Այդ նպատակով վաճառվող գույքի արժեքը չի կարող գերազանցել պարտապանին պատկանող ամբողջ գույքի արժեքի 10 տոկոսը:

4. Սույն հոդվածով նախատեսված գործարքներից ստացված միջոցները փոխանցվում են պարտապանի՝ սնանկության հատուկ հաշվին:

5. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում վաճառվում է գրավի առարկա հանդիսացող գույքը, ապա պարտապանի գույքի պահպանությունն իրականացնելու համար կարող են օգտագործվել պարտապանի սնանկության հատուկ հաշվին փոխանցված այդ գույքի վաճառքից գոյացած միջոցների ոչ ավելի, քան 5 տոկոսը, իսկ գրավառուի համաձայնությամբ՝ 5 տոկոսից ավելին:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է, որ սնանկության գործով կառավարիչը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները պարտապանին պատկանող գույքը պահպանելու համար: Պարտապանի գույքի պահպանմանն ուղղված միջոցները կախված են նրանից, թե այդ գույքն իրենից ինչ է ներկայացնում: Եթե պարտապանի գույքն շենքեր և շինություններ են, ապա կառավարիչը պետք է իրականացնի դրա ֆիզիկական պահպանությունը (պահակային պահպանում), իսկ եթե պարտապանի գույքը արագամաշ կամ այլ շրջանառու միջոցներ են, ապա պետք կիրառվեն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ գույքի գոյության համար (օրինակ՝ ջերմոցային բույսերի պահպանման համար անհրաժեշտ է ապահովել այդ բույսերի աճը, մեկ այլ օրինակում՝ պարտապանի գույքի պահպանման միջոց կարող է հանդիսանալ այդ գույքի կայանավարձը կամ գույքն ի պահ հանձնելը): Այսինքն, կառավարիչը պետք է ձեռնարկի հնարավոր բոլոր միջոցները, ինչը պահանջվում է պարտապանի գույքի պահպանման համար՝ ելնելով այդ գույքի առանձնահատկություններից: Այդ նպատակով սնանկության գործով կառավարիչը կարող է օգտագործել միայն սնանկության հատուկ հաշվին փոխանցված միջոցները: Իսկ եթե այդ միջոցները բավարար չեն պարտապանի գույքի պահպանությունն իրականացնելու համար, օրենսդիրը հնարավորություն է տալիս կառավարչին ուղղակի գործարքով վաճառել պարտապանին պատկանող գույքը, մինչև ժամանակ սահմանափակելով վաճառվող գույքի չափը: Այն է՝ վաճառվող գույքի արժեքը չի կարող գերազանցել պարտապանին պատկանող ամբողջ գույքի արժեքի 10 տոկոսը:

Բացի այդ, մինչև դատավորի կողմից պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կամ պարտապանի լուծարման մասին որոշման ընդունումը կառավարիչը կարող է ուղղակի գործարքով վաճառել պարտապանին պատկանող արագ փչացող ապրանքները և պարտապանին պատկանող գույքի պահպանման համար էական ծախսեր պահանջող գույքը: Օրենսդիրը սահմանում է նաև, թե որոնք են համարվում

Էական ծախսերը: Այն է՝ մեկ տարվա ընթացքում պարտապանի գույքի արժեքի 5 տոկոսը գերազանցող ծախսերը: Օրինակ՝ պարտապանի գույքի արժեքը կազմում է մեկ միլիոն ՀՀ դրամ, իսկ այդ գույքի տարեկան պահպանման ծախսը կազմում է 60.000 ՀՀ դրամ: Քանի որ, գույքի տարեկան պահպանման ծախսը գերազանցում է պարտապանի գույքի արժեքի 5 տոկոսը, այն է՝ 50.000 ՀՀ դրամը, ուստի նշված գույքի պահպանման ծախսերը համարվում են էական և այդ գույքը կարող է դատավորի թույլտվությամբ օտարվել մինչև պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի կամ պարտապանի լուծարման մասին որոշման ընդունումը: Սակայն օրենսդիրը չի սահմանել, թե որն է համարվում պարտապանի արագ փչացող գույքը: Մեր կարծիքով դրանք կարող են լինել մթերքը, քիմիական նյութերը և այն ամենը ինչը կարող է փչանալ մինչև սույն օրենքով նախատեսված պարտապանի գույքի օտարման գործընթացը:

Մեկնաբանվող հոդվածի հոդվածի 2-րդ մասով նախատեսված օտարման ենթակա գույքի վրա (շուտ փչացող և գույքի պահպանման համար էական ծախսեր պահանջող) չի կարող տարածվել նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված օտարվող գույքի չափի սահմանափակումը (ոչ ավել քան պարտապանի գույքի արժեքի 10 տոկոսը):

Ի տարբերություն սույն օրենքի 77-րդ հոդվածի, մեկնաբանվող հոդվածում ուղղակի գործարքով գույքի օտարման համար օրենսդիրը չի պահանջում պարտատերերի համաձայնությունը, սակայն գույքի նման օտարումները կարող է իրականացվել միայն դատավորի թույլտվության առկայության դեպքում:

Պարտապանի գույքի պահպանման պարտականությունն իրականացնելու համար օրենսդիրն սնանկության գործով կառավարչին հնարավորություն է տալիս իրացնելու արագ փչացող ապրանքները և էական ծախսեր պահանջող գույքը նաև այն դեպքում, երբ վերջինս հանդիսանում է գրավի առարկա: Սակայն, նման դեպքում առանց գրավառուի համաձայնության պարտապանի գույքի պահպանությունն իրականացնելու համար կարող են օգտագործվել այդ գույքի վաճառքից գոյացած միջացների 5 տոկոսից ոչ ավելին, իսկ գրավառուի համաձայնության առկայության դեպքում՝ 5 տոկոսից ավելի:

Գույքի իրացումից ստացված բոլոր միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին:

Հոդված 56. Պարտապանի գույքի գույքագրումը

1. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի գույքագրում: Գույքի

մեծ ծավալների դեպքում դատավորը կարող է երկարացնել գույքագրման ժամկետը ողջամիտ ժամկետով: Կառավարչի պահանջով պարտապանի համապատասխան աշխատակիցները պարտավոր են ներկա լինել և աջակցել գույքագրմանը:

Պարտապանի գույքի գույքագրման մասին կառավարիչը ծանուցում է պարտատերերի խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին: Այդ անձինք կարող են ներկա գտնվել գույքագրման աշխատանքներին, սակայն նրանց չներկայանալն արգելք չէ գույքագրումն իրականացնելու համար:

2. Գույքագրումը պետք է ընդգրկի պարտապանին պատկանող ամբողջ գույքը: Գույքագրման փաստաթղթերում նշվում է գույքագրման պահին գույքի հաշվեկշռային արժեքը:

3. Գույքագրման արդյունքներն ամփոփվում են գույքագրման ակտում, որը ստորագրում են կառավարիչը և գույքագրմանը մասնակցած պարտապանի ներկայացուցիչը: Պարտապանի ներկայացուցչի ստորագրությունը վկայում է, որ նա ներկա է եղել գույքագրմանը և երաշխավորում է, որ պարտապանին պատկանող ամբողջ գույքը գույքագրվել է: Գույքագրման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանի ներկայացուցիչը ստորագրում է գույքագրման ակտը՝ կցելով դրան իր գրավոր առարկությունը:

Սույն օրենքը բովանդակում է մի շարք նորմեր, որոնք սահմանում են կառավարչի կողմից պարտապանի գույքի գույքագրման և գնահատման առանձնահատկությունները: Գույքի գույքագրումը և նրա գնահատումը թեպետ սերտորեն կապված են միմյանց, սակայն տարբեր են գործողության արդյունքի բնույթով: Որպես կանոն, գույքի գույքագրումը նախորդում է նրա գնահատմանը և հանդիսանում է գնահատման հիմքերից մեկը:

Գույքագրում ասելով սովորաբար հասկանում ենք կազմակերպության հաշվեկշռում հաշվառված նյութական և ոչ նյութական ակտիվների փաստացի առկայության ստուգումը, նրանց պահպանվածության, հիմնական հատկանիշների և փաստացի վիճակի նկարագրությունը, որոնք կատարվում են օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում: Գույքագրումը պետք է ընդգրկի պարտապանին պատկանող ամբողջ գույքը: Գույքագրում կատարելիս, փաստորեն, համեմատվում են գույքի փաստացի առկայությունը հաշվապահական փաստաթղթերի և գույքացանկի

տվյալների հետ: Մանկության գործով կառավարչի գույքագրման ակտում նշվում է գույքագրման պահին գույքի հաշվեկշռային արժեքը:

Գույքի գույքագրումը կառավարիչն իրականացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում: Գույքի մեծ ծավալների դեպքում գույքագրման ժամկետը կարող է երկարացվել ողջամիտ ժամկետով՝ դատավորի թույլտվությամբ:

Հայաստանի Հանրապետությունում գույքագրման կարգերը և դրան վերաբերող փաստաթղթերի ձևերը սահմանված են ՀՀ կառավարարության 12.11.1992թ. թիվ-571 որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. թիվ-102 հրամանով, որոնցով ղեկավարվում են կազմակերպությունները, այդ թվում՝ սնանկության գործով կառավարիչները գույքագրում իրականացնելիս:

Օրենսդիրը սահմանում է, որ պարտապանի գույքի գույքագրման մասին կառավարիչը պետք է ծանուցի պարտատերերի խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին: Այդ անձինք կարող են ներկա գտնվել գույքագրման աշխատանքներին, սակայն նրանց չներկայանալն արգելք չէ գույքագրումն իրականացնելու համար: Սակայն հիշատակված դրույթը պրակտիկորեն անիրատեսական է, քանի որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց 30 օր հետո դեռևս պարտատերերի խորհուրդ ձևավորված կամ պարտատերերի վերջնական ցուցակ հաստատված չէ և կառավարչին հայտնի չեն առավել մեծ պահանջներ ունեցող պարտատերերը, ուստի ի կատարումն այս դրույթի պահանջի պրակտիկայում կառավարիչը ծանուցում է գույքագրման պահին իրեն հայտնի բոլոր պարտատերերին:

Կառավարչի պահանջով պարտապանի համապատասխան աշխատակիցները պարտավոր են ներկա լինել և աջակցել գույքագրմանը: Որպես կանոն այդ աշխատակիցները հանդիսանում են կազմակերպության տնօրենը, հաշվապահը, նյութական պատասխանատու անձինք և այլ աշխատակիցներ:

Գույքագրման արդյունքներն ամփոփվում են գույքագրման ակտում, որը ստորագրում են կառավարիչը և գույքագրմանը մասնակցած պարտապանի ներկայացուցիչը: Պարտապանի ներկայացուցչի ստորագրությունը վկայում է, որ նա ներկա է եղել գույքագրմանը և երաշխավորում է, որ պարտապանին պատկանող ամբողջ գույքը գույքագրվել է: Գույքագրման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանի ներկայացուցիչը ստորագրում է գույքագրման ակտը՝ կցելով դրան իր գրավոր առարկությունը:

Հոդված 57. Պարտապանի գույքի գնահատումը

1. Պարտապանի գույքի գնահատումն իրականացնում է կառավարիչը: Պարտապանի միջոցների հաշվին կառավարիչն իրավունք ունի հրավիրել անկախ գնահատող պարտապանին պատկանող գույքի գնահատման համար՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով պարտատերերի խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին:

Պարտապանի գույքի գնահատում ասելով հասկանում ենք՝ դրա շուկայական և (կամ) լիկվիդային արժեքի սահմանումը: Գնահատման օբյեկտների թվին են դասվում՝ առանձին օբյեկտները (իրերը), իրերի ամբողջությունը, որը հանդիսանում է պարտապանի գույքը, այդ թվում՝ գույքի առանձին տեսակները (շարժական և անշարժ, համալիր գույքային իրավունքը կամ առանձին գույքային իրավունքները գույքի նկատմամբ կամ գույքի կազմի առանձին օբյեկտների նկատմամբ, պահանջի իրավունքը, պարտավորությունները (պարտքերը), աշխատանքները, ծառայությունները, տեղեկատվությունը, քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտները, որոնց քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու հնարավորությունը նախատեսված է օրենսդրությամբ, օրինակ՝ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականությունը) (այսուհետ՝ գույք):

Մեկնաբանվող հոդվածը պարտապանի գույքի գնահատման իրականացման պարտականությունը դրել է կառավարչի վրա, ինչը վերջինիս կողմից իրականացվում է՝ հաշվի առնելով տվյալ օրվա դրությամբ գոյություն ունեցող շուկայական արժեքները: Ելնելով առանձին օբյեկտների գնահատման առանձնահատկությունից (օրինակ՝ ոչ նյութական բարիքներ (օբյեկտներ)) և լիցենզավորման ենթակա գործունեություն պահանջող գույքի (օրինակ՝ անշարժ գույքի) գնահատման դեպքերում կառավարիչն իրավունք ունի հրավիրել անկախ գնահատող պարտապանին պատկանող գույքի գնահատման համար: Նման դեպքերում կառավարիչը կարող է մասնագիտացված կազմակերպություն հրավիրել միայն այդ մասին նախօրոք տեղյակ պահելով պարտատերերի խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին: Համաձայն սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի՝ կառավարիչն անկախ գնահատող կարող է հրավիրել դատարանի համապատասխան որոշման առկայության դեպքում: Դատարանը նման որոշում կայացնում է կառավարչի հիմնավորված միջնորդության հիման վրա:

Անկախ գնահատողների ծառայությունների վարձատրությունը կատարվում է ընդհանուր պայմանագրային կանոններով՝ պարտապանի միջոցների հաշվին և վճարվում է սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով նախատեսված հորթում՝ որպես վարչական ծախսեր:

Պետք է ի նկատի ունենալ, որ գնահատման ժամանակ որոշվում է գույքի արժեքը, որը չի կարելի շփոթել գույքի գնի հետ, որը ձևավորվում է գույքի օտարման ժամանակ և

կարող է էապես տարբերվել գույքի գանահատված արժեքից, քանի որ գույքի արժեքը հարաբերական մեծություն է, որը կարող է նվազել գույքի լիկվիդայնության հաշվին: Այսպես, ՀՀ Կառավարության 02.03.2002թ. թիվ 190 որոշմամբ հաստատված «Անվճարունակության կառավարիչների կողմից աճուրդի անցկացման կանոնակարգի» 11-րդ կետի համաձայն կրկնակի աճուրդ անցկացվելու դեպքում վաճառվող գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր անգամ իջեցվում է 20 տոկոսով: Հետևաբար, գույքի արժեքը կարող է այնքան պակասել, քանի դեռ գույքի ձեռք բերման առաջարկ (հայտ) չի ներկայացվել: Նման առաջարկի ներկայացման (հայտի ներկայացում) և ընդունման (աճուրդում հաղթող ճանաչվելու) դեպքում ձևավորվում է գույքի գինը:

Հոդված 58. Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը

Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում, կառավարիչը դատավորին է ներկայացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, որը պետք է պարունակի տեղեկություններ՝

ա) սնանկության պատճառների մասին, այդ թվում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության մասին.

բ) դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին.

գ) պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին.

դ) պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքագրման հնարավորության մասին.

ե) պարտապանի կողմից կնքված վիճարկելի գործարքների մասին:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը էական նշանակություն ունեցող հանգամանքներից մեկն է, որը կառավարիչը պետք է իրականացնի պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 35 օրվա ընթացքում: Միայն պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունն է հնարավորություն տալիս գնահատել սնանկության գործի ընթացքում պարտապանի ակտիվների, վճարունակության վերականգնման, ինչպես նաև պարտատերերի

պահանջների բավարարման հնարավորության կամ անհնարինության հանգամանքները:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության բովանդակությունը: Այն պետք է ընդգրկի տեղեկություններ սնանկության պատճառների, այդ թվում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության մասին: Միայն պարտապանի ֆինանսական վիճակը վերլուծելիս կառավարիչը հնարավորություն կունենա բացահայտել պարտապանի սնանկության կեղծ կամ կանխամտածված լինելու կամ չլինելու հանգամանքը (տես սույն օրենքի 8-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Ֆինանսական վիճակի վերլուծությունը պետք է բովանդակի նաև դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին տեղեկություններ: Քանի որ, համաձայն սույն օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը՝ կառավարչի կամ պարտատիրոջ ներկայացմամբ և պարտատերերի խորհրդի համաձայնության առկայության դեպքում վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե՝

ա) պարտապանը չունի որևէ գույք.

բ) պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ.

գ) պարտապանի գույքն այնքան փոքրաթեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը.

դ) պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը»:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը պետք է պարունակի նաև պարտապանի դեբիտորական պարտավորությունների և վերջիններիս հավաքագրման հնարավորության, ինչպես նաև պարտապանի կողմից կնքված վիճահարույց գործարքների մասին տեղեկություններ: Կառավարչի կողմից վիճահարույց գնահատված գործարքները կարող են ընդհանուր իրավասության դատարանների կողմից անվավեր ճանաչվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով, մասնավորապես՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ (ՀՀ ՔՕ 305-րդ հոդված): Վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու մասին հայցադիմում կարող է ներկայացնել կառավարիչը, ինչպես նաև պարտապանի ղեկավարը՝ մինչև պարտապանի նկատմամբ լուծարման գործընթաց սկսելը: Հիշեցնենք նաև, որ

կառավարիչը դատարաններ կարող է դիմել նաև սույն օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը պարտադիր միջոցառում է, որն իրականացվում է սնանկության բոլոր գործերով: Պարտապանի գույքային դրության վերլուծությունը պետք է հնարավորություն տա ճիշտ պատկերացնելու նրա գույքի իրացվելիության աստիճանը՝ ընտրելու համար սնանկության գործի զարգացման այս կամ այն ուղղությունը (պարտապանի լուծարում կամ ֆինանսական առողջացում):

Սույն օրենքը սպառիչ չի սահմանում այն միջոցները, որոնք պետք կիրառի կառավարիչը պարտապանի ֆինանսական վիճակը վերլուծելիս: Կառավարիչն ինքնուրույն է որոշում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության տակտիկան, ընտրում նրա առջև դրված նպատակներին հասնելու միջոցները: Մասնավորապես վերլուծությունը կատարվում է պարտապանի գույքի գույքագրման և գնահատման, ֆինանսատնտեսական փաստաթղթերի ուսումնասիրության և գնահատման, պարտապանի գործունեության գնահատման, ինչպես նաև պարտապանի սեփականության իրավունքները հավաստիացնող փաստաթղթերի վերլուծության միջոցով:

Ֆինանսական վիճակի վերլուծությունը կառավարիչը ներկայացնում է դատավորին:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքում կարող է բացահայտվել, որ պարտատերերի պահանջներն անհիմն են, սակայն դրանք գնահատում է դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս:

ԳԼՈՒԽ 7.

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հոդված 59. Ֆինանսական առողջացման ծրագիրը

1. Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող՝ օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում:

2. Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 24 ամիսը, եթե սույն օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել:

Ֆինանսական առողջացման ծրագիրը սնանկության այնպիսի ընթացակարգ է, որը կիրառվում է պարտապանի նկատմամբ, նրա վճարունակությունը վերականգնելու և պահանջների մարման հերթականությանը համապատասխան (սույն օրենքի 82-րդ հոդված) պարտապանի պարտավորությունների մարման նպատակով:

Ֆինանսական առողջացումը կարևոր օղակ է հանդիսանում սնանկության ընթացակարգերում, որոնք կիրառվում են սնանկ ճանաչված պարտապանների նկատմամբ: Եթե պարտապանի վճարունակությունը վերականգնվում է ֆինանսական առողջացման ընթացքում և պարտատերերի պահանջները բավարարվում են, ապա դատարանը ավարտում է սնանկության վարույթը և պարտապանը որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ շարունակում է իր բնականոն գործունեությունը քաղաքացիաիրավական շրջանառությունում: Իսկ, եթե ֆինանսական առողջացման ընթացքում պարտապանի վճարունակությունը չի վերականգնվում և պարտատերերի պահանջները չեն բավարարվում, ապա՝ պարտապանի նկատմամբ, դատարանի համապատասխան որոշմամբ, սկսվում է լուծարման գործընթաց (սույն օրենքի 70-րդ հոդված):

Այսպիսով, թե ֆինանսական առողջացման, թե լուծարման ընթացակարգերը նպատակ ունեն պարտատերերի պահանջների բավարարում ապահովել, ընդ որում առաջին դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են լրիվ ծավալով, իսկ երկրորդ դեպքում՝ մասնակիորեն՝ պահպանելով պահանջների բավարարման համամասնությունը: Իսկ այն լուծարման դեպքերում, երբ պարտատերերի պահանջները կբավարարվեն լրիվ ծավալով, ապա պարտապանի ցանկությամբ վերջինս կարող է համարվել ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը (սույն օրենքի հոդված 90, 2-րդ մաս):

Ֆինանսական առողջացման հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ֆինանսական առողջացման ընթացքում պարտապանի ղեկավար մարմինները, այդ թվում նրա տնօրենը շարունակում են իրականացնել իրենց լիազորությունները, իհարկե որոշակի սահմանափակումներով և սնանկության գործով կառավարչի վերահսկողության ներքո, բայց, նույնիսկ, այդպիսի սահմանափակումները թույլ են տալիս պարտապանի մասնակիցներին (հիմնադիրներին, բաժնետերերին, լիակատար ընկերներին, անդամներին) կամ նրա գույքի սեփականատերերին ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով վերահսկել պարտապանի գործունեությունը և պաշտպանել իրենց շահերը ֆինանսական առողջացման ողջ ընթացքում (սույն օրենքի 65-րդ հոդված):

«Ֆինանսական առողջացում» եզրույթը համահունչ չէ /նե ադեկվատեն/ ուսումնասիրվող ընթացակարգի նպատակին, այն հնարավոր է միայն պարտատերերի դրամական վճարումների նոր ժամկետների սահմանման և այդ վճարումների այս կամ այն եղանակներ ապահովելու դեպքում: Հետևաբար՝ այս ընթացակարգը իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան պարտավորությունների մարման վերակառուցում:

Ֆինանսական առողջացման ընթացակարգի էությունը և նշանակությունը ըստ էության հանդիսանում է ոչ թե պարտապանի վճարունակության վերկանգնումը, այլ այն հիմնականում նպատակ է հետապնդում ապահովել պարտատերերի պահանջների լրիվ բավարարում:

Ֆինանսական առողջացման ընթացակարգը սնանկության վարույթում պարտադիր գործընթաց չէ: Ամեն ինչ կախված է պարտատերերի դիրքորոշումներից՝ կհամձայնվեն արդյո՞ք պարտատերերը վերակառուցել պարտապանի դրամավճարային պարտավորությունները: Այնուամենայնիվ, ֆինանսական առողջացման ընթացակարգը չի կարող կհարովել սույն օրենքով նախատեսված պարզեցված ընթացակարգերի ժամանակ (սույն օրենքի գլուխ 11):

Ֆինանսական առողջացման ծրագրի նակատամբ սույն օրենքը չի ներկայացնում որևէ սահմանափակում: Մեկնաբանվող հոդվածը հնարավորություն է տալիս ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնողին օգտագործել օրենքով չարգելված ցանկացած միջոցառում (միջոցառումներ), որի արդյունքում պարտապանը կմարի իր դրամավճարային բոլոր պարտավորությունները և արդյունքում չի լուծարվի:

Սույն օրենքը, սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրի համար երկամյա ժամկետ, չի սահմանափակել դրա երկարացման հնարավորությունը, որը գնահատում է դատարանը՝ հաշվի առնելով տվյալ սնանկության գործի առանձնահատկությունները:

Հոդված 60. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը

1. Ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք:

2. Ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտատերերի առաջին ժողովը: Կառավարչի կամ պարտատերերի խորհրդի միջնորդությամբ դատավորը կարող է երկարացնել ծրագրի ներկայացման ժամկետը ևս 30 օրով:

3. Պարտատիրոջ, պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի 1/3-ին տիրապետող անձանց կողմից առաջարկված ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման

ծախսերը և դրա ընդունման համար անհրաժեշտ դատական ծախսերը կատարվում են առաջարկողի հաշվին: Կառավարչի կամ պարտապանի կողմից առաջարկված ֆինանսական առողջացման ծրագրի ծախսերը կատարվում են պարտապանի գույքի հաշվին:

1. Մեկնաբանվող հողվածը սահմանում է ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, դրանք են՝ պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք: Ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվում է դատարան: Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը, դա առաջարկ է (օֆերտա), որը որոշակի պարտադիր պարտավորություններ է առաջացնում նման ծրագիր ներկայացնողի մոտ: Նման առաջարկը պարտատերերի ժողովի մասնակիցները ընդունում են իրենց ռիսկով (ակցեպտ), որը պետք է հաստատվի դատարանի որոշմամբ:

2. Մեկնաբանվող հողվածի 2-րդ մասով սահմանված է ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու վերջնաժամկետը, այն է՝ մինչև պարտատերերի առաջին ժողովը: Սակայն, սույն օրենքը չի սահմանում նման ծրագիր ներկայացնելու իրավունքի ծագման ժամկետի սկիզբը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է պարունակի սույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված բոլոր պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույց, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգ, որոնք հնարավոր կլինի ներառել ֆինանսական առողջացման ծրագրում պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը դատարանի կողմից հաստատելուց հետո՝ ուստի ֆինանսական առողջացման ծրագիր կարող է ներկայացվել այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Մեկնաբանվող մասով օրենսդիրը հնարավորություն է ընձեռնում կառավարչին կամ պարտատերերի խորհրդին ծրագրի ներկայացման ժամկետը ևս 30 օրով երկարացնելու մասին միջնորդությամբ դիմել դատավորին: Դատավորը կայացնում է որոշում՝ ծրագիր ներկայացնելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ հաշվի առնելով միջնորդության հիմնավորվածությունը: Սակայն, օրենսդիրը հաշվի չի առել, որ մինչև պարտատերերի առաջին ժողովի կայանալը, միաժամանակ, ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու վերջնաժամկետը պարտատերերի խորհուրդ գոյություն չունի, քանի որ այն ձևավորվում է հենց առաջին ժողովում (սույն օրենքի հոդված 40 հոդված, 2-րդ մաս):

3. Մեկնաբանվող մասը սահմանում է ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ծախսերը և դրա ընդունման համար անհրաժեշտ դատական ծախսերը կրող անձանց շրջանակը: Այսպես՝

- պարտատիրոջ, պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի 1/3-ին տիրապետող անձանց կողմից ներկայացնելու դեպքում՝ ներկայացնողի հաշվին.

- կառավարչի կամ պարտապանի կողմից ներկայացնելու դեպքում՝ պարտապանի գույքի հաշվին:

Պետք է նկատի ունենալ, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ծախսերը, դրանք այդ ծրագրի շրջանակներում առաջացող բոլոր վճարման ենթակա գումարներն են, իսկ ծրագրի ընդունման համար անհրաժեշտ դատական ծախսերը՝ դատավորի կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը փորձաքննության ուղարկելու, թարգմանիչ հրավիրելու և այլ գործողություններ կատարելու համար վճարման ենթակա գումարներն են:

Հոդված 61. Ֆինանսական առողջացման ծրագրի պարտադիր պայմանները

1. Ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի՝

ա) ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով, պարտատիրոջ պահանջների բավարարման երաշխիքները՝ ըստ պարտատերերի ձևավորված խմբերի.

բ) պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը.

գ) պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար սույն օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում պարտապանի գործունեությունը շարունակելիս՝ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, պարտապանին պատկանող գույքի վաճառքի դեպքում՝ վաճառվող գույքի կազմը.

դ) ֆինանսական առողջացման ծրագրի կատարման համար անհրաժեշտ՝ կառավարչի և այլ մասնագետների, պարտապանի ղեկավարի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

ե) ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը դադարեցնելու հետևանքով պարտապանի լուծարման դեպքում պարտատերերի խմբերի միջև լուծարումից ստացված միջոցների բաշխման կարգը և չափերը:

2. Ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող նախատեսել պարտատերերի պահանջների բավարարման այլ հերթականություն, քան նախատեսված է սույն օրենքով:

3. Ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և խախտել այլ անձանց շահերը:

1. Ֆինանսական առողջացման ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որով ղեկավարվում են սնանկության վարույթի մասնակիցները ֆինանսական առողջացման գործընթացում: Ֆինանսական առողջացման ծրագրի և պարտապանի իրավական ակտերի և այլ փաստաթղթերի միջև հակասություններ առաջանալու դեպքում ավելի բարձր իրավաբանական ուժ ունի ֆինանսական առողջացման ծրագիրը: Ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ժամանակ ենթակա են կիրառման ծրագրի դրույթները, իսկ պարտապանի այլ միակողմանի փաստաթղթերը կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում ծրագրի դրույթներին (օրինակ՝ ներքին աշխատանքային կարգապահության կանոններ):

Ֆինանսական առողջացման ծրագիրը գրավոր փաստաթուղթ է: Մեկնաբանվող հոդվածը սահմանում է այն պահանջները, որոնք ուղղված են այդ փաստաթղթի բովանդակությանը:

Այսպես ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի՝

ա) ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով, պարտատիրոջ պահանջների բավարարման երաշխիքները՝ ըստ պարտատերերի ձևավորված խմբերի. բացել

բ) պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը, օրինակ՝ երբ վարձատու պարտատերը համաձայնվում է հրաժարվել կամ հետաձգել ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ժամկետում պարտապանի վարձակալած գույքի վարձի վճարումները,

այն ակնկալիքով, որ ծրագրի իրականացման արդյունքում կաբավարարվեն նախկին պարտավորությունները: Մեկ այլ օրինակում պարտապանի պարտավորության չափերը կարող են նվազեցվել գործող պայմանագրի վերաձևակերպմամբ:

գ) սույն օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը, այն մասին թե կոնկրետ ինչ միջոցառումներ պետք է իրականացվեն պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար, այդ միջոցառումների իրականացման կարգն ու ժամկետները, ինչպես նաև ծրագիր ներկայացնողը պետք է հիմնավորի պարտապանի գործունեությունը շարունակելու անհրաժեշտությունը, որի արդյունքում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունները կավելանան: Բացի այդ, եթե ծրագիր ներկայացնողը նախատեսում է պարտապանին պատկանող գույքի կամ դրա մասի վաճառք, ապա նա պարտավոր է ծրագրում ներառել վաճառվող գույքի կազմը և վաճառքի ձևերը:

դ) կարևոր հանգամանքներից է նաև ֆինանսական առողջացման ծրագրում ներառել դրա կատարման համար անհրաժեշտ ծախսերը: Մասնավորապես, կառավարչի և այլ մասնագետների, պարտապանի ղեկավարի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

ե) ծրագիր ներկայացնողը պետք է նկատի ունենա նաև, որ նույնիսկ ամենալավ կազմված ծրագիրը կարող է ավարտվել անհաջողությամբ, ուստի նա պետք է իր ծրագրում նախատեսի ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը դադարեցնելու հետևանքով պարտապանի լուծարման դեպքում պարտատերերի խմբերի միջև լուծարումից ստացված միջոցների բաշխման կարգն ու չափերը:

2. Ֆինանսական առողջացման ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող պարտատերերի պահանջների բավարարման ժամանակացույցը, ինչպես նաև ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը դադարեցնելու հետևանքով պարտապանի լուծարման դեպքում պարտատերերի խմբերի միջև լուծարումից ստացված միջոցների բաշխման կարգն ու չափերը չեն կարող հակասել սույն օրենքով նախատեսված պահանջների բավարարման հերթականությանն ու համամասնության սկզբունքին:

3. Օրենսդիրը, սույն օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասում թույլատրելով օրենքով չարգելված ցանկացած միջոցառում (միջոցառումներ), միաժամանակ մեկնաբանվող մասով սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և խախտել այլ անձանց շահերը:

Հոդված 62. Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը

1. Ֆինանսական առողջացման ծրագիրը դատավորը թողնում է առանց քննարկման, եթե այն չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին: Մինչև ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը դատավորը կարող է ծրագիր ներկայացնող անձից պահանջել ներկայացնել փորձագետի եզրակացություն՝ ծրագրի վերաբերյալ:

2. Դատավորը ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ուղարկի կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին ոչ ուշ, քան այն ստանալուց 3 օրվա ընթացքում: Ծրագրի մեծածավալության դեպքում դատավորն այն դեպոնացնում է դատարանում՝ հայտնելով նշված անձանց դատարանում դեպոնացված ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին:

3. Կառավարիչը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ սույն օրենքով կամ երկարաձգման մասին դատավորի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում հրավիրում է պարտատերերի ժողով՝ ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով, որին հրավիրվում է պարտապանը:

Պարտատերերի ժողովի հրավիրման մասին որոշումը պետք է հրապարակվի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին սվյալներ հրապարակող մամուլում՝ նշելով ծրագիրը (ծրագրերը) ներկայացնողի անունը (անվանումը) և պարտատերերի ժողովի հրավիրման տարին, ամիսը, ամսաթիվը:

1. Ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվում է դատարան: Նկատի ունենալով, որ մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված ֆինանսական առողջացման ծրագիրը կառավարչին, պարտապանին և պարտատերերին ուղարկելու դատավորի պարտականության համար սահմանված է եռօրյա ժամկետ, հետևաբար դատավորը սույն մասով նախատեսված ծրագիրն առանց քննարկման թողնելու մասին որոշումը պետք է կայացնի այն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում: Դատավորը, ուսումնասիրելով ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը, այն թողնում է առանց քննարկման, եթե վերջինս չի համապատասխանում սույն օրենքի 59-61-րդ հոդվածներով սահմանված պահանջներին (օրինակ՝ երբ ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվել է սույն օրենքով սահմանված ժամկետի խախտումով, կամ ծրագիրը ներառում է ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող դրույթներ, կամ դատավորը, ծրագիրը թողնելով առանց քննարկման, պահանջել է ներկայացնել ծրագրի վերաբերյալ փորձագետի եզրակացություն):

2. Այն դեպքում, երբ դատավորը ֆինանսական առողջացման ծրագիրը չի թողնում առանց քննարկման, ապա՝ այդ ծրագիրը պարտատերերի ժողովի քննարկմանը ներկայացնելու նպատակով եռօրյա ժամկետում պետք է ուղարկի կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին: Օրենսդիրը իրավունք է տալիս դատավորին ծրագրի մեծածավալության դեպքում այն դեպոնացնել դատարանում և այդ մասին հայտնել (ծանուցել) ծրագրին ծանոթանալու իրավունք ունեցող անձանց:

3. Հաշվի առնելով այն, որ մեկ սնանկության գործով կորոզ են ներկայացվել ֆինանսական առողջացման մի քանի ծրագրեր (սույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի ներկայացված բոլոր ծրագրերը մեկնաբանվող հոդվածով նախատեսված կարգով պետք է ուղարկվեն այդ ծրագրին (ծրագրերին) ծանոթանալու իրավունք ունեցող անձանց: Ասպիսով, հիշատակված ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով կառավարիչը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ սույն օրենքով կամ երկարաձգման մասին դատավորի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում հրավիրում է պարտատերերի ժողով: Նշված ժողովին հրավիրվում է նաև պարտապանը: Ընդ որում, սույն օրենքով նախատեսված կարգով հրավիրված պարտատերերի առաջին ժողովում տեսականորեն (ժամանակագրական առումով) բացառվում է որևէ ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման հնարավորությունը, քանի որ ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման վերջնաժամկետը լրանում է մինչև պարտատերերի առաջին ժողովը:

Այսպիսով, սնանկության գործով կառավարիչը, դատավորից ստանալով ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը), որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագրի (ծրագրերի) քննարկման նպատակով պարտատերերի ժողով հրավիրելու մասին: Սնանկության գործով կառավարչի որոշումը պետք է հրապարակվի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նշելով ծրագիրը (ծրագրերը) ներկայացնողի անունը (անվանումը) և պարտատերերի ժողովի հրավիրման տարին, ամիսը, ամսաթիվը:

Հոդված 63. Ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությունը

1. Մեկից ավելի ֆինանսական առողջացման ծրագրեր քննարկվելու դեպքում բոլոր ծրագրերի քվեարկությունը պետք է կատարվի մեկ ժողովի ընթացքում:

2. Քվեարկությանը կարող են մասնակցել միայն հաստատված պահանջներով պարտատերերը:

3. Պարտատերերի հետևյալ խմբերը ձևավորվում և քվեարկում են առանձին՝

ա) ապահովված պահանջներով պարտատերերը.

բ) սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ», «ե» և «է» կետերով սահմանված՝ չապահովված պահանջներով պարտատերերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պահանջներով պարտատերերի:

4. Ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում է ընդունված պարտատերերի խմբի կողմից, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է տվյալ խմբի պարտատերերի ձայների պարզ մեծամասնությունը:

5. Եթե քվեարկվում են մեկից ավելի ծրագրեր, ապա դրանք քվեարկվում են ըստ ներկայացման առաջնայնության: Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ընդունումից հետո մնացած ծրագրերը չեն քվեարկվում:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի համաձայն, ֆինանսական առողջացման մեկից ավելի ծրագրեր ներկայացվելու դեպքում, անկախ նրանց քանակից, վերջիններիս քվեարկությունը պետք է կատարվի մեկ ժողովի ընթացքում: Ընդ որում, ներկայացված ծրագրերի քվեարկման հերթականությունը որոշվում է դրանց դատարան ներկայացնելու առաջնահերթությանը համապատասխան: Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից հետևում է, որ ոչ բոլոր ներկայացված ծրագրերը կարող են քվեարկվել, քանի որ ավելի առաջնահերթ քվեարկության դրված ծրագրերից որևէ մեկի ընդունման դեպքում մնացած ծրագրերը չեն քվեարկվում և դատավորի հաստատմանն է ուղարկվում միայն մեկնաբանվող հոդվածի պահանջների պահպանմամբ ընդունված ծրագիրը:

Մեկնաբանվող հոդվածը հղում է պարունակում սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ», «ե» և «է» կետերին, սակայն, մեր կարծիքով այստեղ վրիպակ է տեղի ունեցել, քանի որ սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով նախատեսված է պարտապանի այնպիսի ընթացիկ անուղղակի հարկային պարտավորություններ, որոնք առաջանում են պարտապանի գույքի վաճառքից: Տվյալ դեպքում հիշատակված պարտավորությունը չի հանդիսանում պարտապանի նկատմամբ եղած պահանջ, դրանք ընդամենը յուրաքանչյուր հարկատուի հարկային օրենսդրությամբ սահմանված պարտականություններն են: Մեկնաբանվող հոդվածում հղված «դ» ենթակետի փոխարեն մեր կարծիքով պետք է հղում կատարվի սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետին, քանի որ «ը» ենթակետով նախատեսված են պարտապանի նկատմամբ եղած չապահովված պարտատերերի պահանջները, և ֆինանսական առողջացման ծրագիրը նրանց իրավունքների վրա առավել մեծ ազդեցություն է ունենում (պահանջների բավարարման ժամանակացույց, պարտքերի վերաձևակերպում և այլն):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական առողջացման ծրագրի համար հրավիրված պարտատերերի ժողովի օրվա դրությամբ առկա է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի օրինական ուժի

մեջ մտած որոշումը, ուստի մեկնաբանվող հոդվածը թույլատրում է ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցել այն պարտատերերին, որոնց պահանջները հաստատված են դատարանի վերոհիշյալ որոշմամբ: Ավելի ուշ պահանջ ներկայացրած, ինչպես նաև պարտատերերի առաջին ժողովին չներկայացած պարտատերերը կարող են մասնակցել ծրագրի քննարկման համար հրավիրված ժողովին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով (սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս):

Մեկնաբանվող հոդվածը ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկման համար պարտատերերին բաժանել է երկու խմբերի՝

- առաջին խմբին են դասվում պարտապանի նկատմամբ գրավով ապահովված պահանջներ ունեցող պարտատերերը:

- երկրորդ խմբին են դասվում այն չապահովված պահանջներ ունեցող պարտատերերը, որոնց պահանջները առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով, աշխատանքային պայմանագրերից բխող պահանջներ ունեցող պարտատերերը, որոնց պահանջները առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումը, բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերից բխող պահանջներ ունեցող պարտատերերը, ինչպես նաև սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետերով նախատեսված՝ չապահովված պահանջներ ունեցող պարտատերերը, բացառությամբ ՀՀ պետական և համայնքային բյուջեների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պահանջներ ունեցող պարտատերերի:

Ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում է ընդունված պարտատերերի խմբի կողմից, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է տվյալ խմբի պարտատերերի ձայների պարզ մեծամասնությունը: Պարտատերերի ձայների քանակը որոշվում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով (տես մեկնաբանությունները բօբ), իսկ պարզ մեծամասնություն է համարվում ժողովին քվեարկության ձայնի իրավունք ունեցող պարտատերերի ձայների 51 տոկոսը:

Հոդված 64. Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը

Ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատավորը, եթե այն ընդունել են սույն օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված պարտատերերի խմբերը: Հակառակ դեպքում դատավորը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:

Մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից հետևում է, որ պարտատերերի խմբերի կողմից ընդունած ֆինանսական առողջացման ծրագիրն ենթակա է հաստատման, եթե այդ ծրագրի ընդունումը տեղի է ունեցել սույն օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ: Պարտատերերի խմբերի կողմից ընդունված ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելիս դատավորը ստուգում է

միայն այդ ծրագրի ընդունման կարգի պահպանումը՝ արդյո՞ք ծրագրի քվեարկությանը մասնակցել են քվեարկելու ձայնի իրավունք ունեցող պարտատերերը և նրանց պահանջները հաստատված են եղել դատարանի որոշմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, թե արդյո՞ք ծրագիրը ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ: Իսկ ֆինանսական առողջացման ծրագիրը ՀՀ օրենսդրությանը, սույն օրենքի պահանջներին համապատասխանելու, ինչպես նաև այլ անձանց շահերը խախտված չլինելու հարցերին դատավորն անդրադառնում է մինչև այդ ծրագիրը սույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին ուղարկելը: ՀՀ օրենսդրությանը և սույն օրենքի պահանջներին հակասող, ինչպես նաև այլ անձանց շահերը խախտող ֆինանսական առողջացման ծրագիրը դատավորի որոշմամբ թողնվում է առանց քննարկման:

Այն դեպքերում, երբ պահպանված չեն լինում ֆինանսական առողջացման ընդունման կարգը, ապա՝ դատավորը որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելու մասին: Դատավորի այս որոշմամբ սկսվում է պարտապանի լուծարման գործընթացը:

Հոդված 65. Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման հետևանքները

1. Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պարտապանի գործունեությունն իրականացվում է միայն ծրագրի շրջանակներում, իսկ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է ծրագրով սահմանված կարգով:

2. Պարտապանը կառավարչի վերահսկողությամբ պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

3. Ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում պարտապանի կառավարման մարմինները, այդ թվում՝ ղեկավարը, գործում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված իրավասության շրջանակներում:

4. Կառավարիչն առնվազն 3 ամիսը մեկ դատավորին է ներկայացնում հաշվետվություն՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

1-2. Պարտատերերի ժողովում ընդունված ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատավորը սույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված կարգով (տես

սույն օրենքի 64-րդ հոդվածի մեկնաբանությունները), որից հետո պարտապանը քաղաքացիաիրավական շրջանառությունում հանդես է գալիս միայն ծրագրի շրջանակներում, այդ ծրագրով նախատեսված կարգով և սահմաններում ձեռք է բերում իրավունքներ և պարտականություններ, իսկ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է ծրագրով նախատեսված պահանջների բավարարման ժամանակացույցով: Պետք է նկատի ունենալ, որ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներից դուրս գործունեություն իրականացնելը կարող է հիմք հանդիսանալ այդ ծրագրի վաղաժամկետ դադարեցման համար (սույն օրենքի 68-րդ հոդված): Պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները: Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ողջ ընթացիկում պարտապանը գործում է կառավարչի վերահսկողության ներքո:

3. Պարտապանի կառավարման մարմինները՝ ժողովը, խորհուրդը, տնօրենների խորհուրդը, գործադիր մարմինը, նույնպես գործում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված իրենց իրավասության շրջանակներում: Օրինակ՝ մասնակիցների ընդհանուր ժողովը չի կարող որոշում ընդունել պարտապանի վերակազմակերպման մասին, եթե նման որոշման ընդունումը նախատեսված չէ ֆինանսական առողջացման ծրագրով:

4. Ֆինանսական առողջացման ծրագրի ՀՀ օրենսդրության և սույն օրենքի պահանջների պահպանմամբ իրականացումը վերահսկելու նպատակով կառավարիչն առնվազն 3 ամիսը մեկ դատավորին է ներկայացնում հաշվետվություն՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ: Կառավարչի նման հաշվետվություններում ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտումներ կամ ՀՀ օրենսդրության և սույն օրենքի պահանջների այլ խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել: Օրինակ՝ սույն օրենքի խախտում է համարվում, երբ պարտապանի ղեկավարը մինչև առաջնահերթ պահանջի (պահանջների) բավարարումը բավարարել է ստորադաս պահանջ (պահանջներ)՝ խախտելով ծրագրով նախատեսված ժամանակացույցը:

Հոդված 66. Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի երկարաձգումը

1. Պարտատերերի ժողովն իրավունք ունի քննարկել ֆինանսական առողջացման ծրագիրը մինչև 12 ամիս ժամկետով երկարաձգելու կամ դրանում փոփոխություններ մտցնելու հարցը:

2. Դատավորը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու կամ դրա մեջ փոփոխություններ մտցնելու մասին, եթե այդ որոշումն ընդունվել է ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման վերաբերյալ սույն օրենքի 63-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման շրջանակներում մնում են չբավարարված պահանջներ և դրանց բավարարումը տեսականորեն հնարավոր է ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը երկարաձգելու կամ դրանում փոփոխություն մտցնելու արդյունքում, ապա սույն օրենքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջը չբավարված պարտատիրոջ (պարտատերերի) պահանջով կամ սնանկության գործով կառավարչի նախաձեռնությամբ, կարող է պարտատերերի ժողով հրավիրվել և քննարկվել ֆինանսական առողջացման ծրագիրը մինչև 12 ամիս ժամկետով երկարաձգելու կամ դրանում փոփոխություններ մտցնելու հարցերը:

Հիշատակված հարցերը պարտատերերի ժողովում ձևավորված խմբերը քվեարկում են նույն կարգով, ինչը նախատեսված է ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման համար (սույն օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մաս): Քվեարկության նման կարգի պահպանման պարագայում դատավորը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու կամ դրանում փոփոխություններ մտցնելու մասին:

Պետք է նկատել, որ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պահանջների մի մասի չբավարարումը և նույն ծրագրով հաստատված պահանջների բավարարման ժամամանակցույցի խախտումը հավասար է ֆինանսական առողջացման ծրագրի չկատարման, ինչը հիմք է հանդիսանում ծրագրի վաղաժամկետ դադարեցման կամ ավարտման, որի արդյունքում դատավորը որոշում է կայացնում պարտապանի նկատմամբ լուծարման գործընթաց սկսելու մասին (սույն օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մաս և 69-րդ հոդվածի 4-րդ մասի բ ենթակետ): Մեկնաբանվող հոդվածը հնարավորություն է տալիս խուսափել վերոշարադրյալ հետևանքներից:

Հոդված 67. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ ավարտը

1. Մինչև ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտը, պարտատերերի պահանջների բավարարման դեպքում, կառավարիչը դատավորին է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ ավարտի մասին հաշվետվություն: Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ ավարտման հաշվետվությունը հաստատելու դեպքում սնանկության գործը ենթակա է ավարտման:

2. Եթե պարտատերերի պահանջները հաշվետվության ներկայացման պահին բավարարված չեն, ապա դատավորը մերժում է կառավարչի հաշվետվության հաստատումը, և ֆինանսական առողջացման ծրագիրը շարունակվում է:

Ֆինանսական առողջացման ծրագրի գործընթացում պարտատերերի պահանջների վաղաժամկետ բավարարման հնարավորություն է ընձեռնվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտատերերի պահանջները բավարարվում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված ժամկետից շուտ, ուստի անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի սնանկության գործով կառավարիչը դատավորին ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ ավարտի մասին հաշվետվություն:

Մեկնաբանվող հոդվածի համաձայն սնանկության գործով կառավարչի ներկայացրած հաշվետվությունը հաստատելու դեպքում սնանկության գործն ենթակա է ավարտման, որի մասին դատավորը կայացնում է վճիռ: Գործն ավարտելու մասին վճիռը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

Այն դեպքերում, երբ պարտատերերի պահանջները հաշվետվության ներկայացման պահին բավարարված չեն, ապա դատավորն առանց դատական նիստ հրավիրելու կայացնում է որոշում՝ կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և ֆինանսական առողջացման ծրագիրը շարունակելու մասին: Նկատի ունենալով, որ օրենսդիրը չի նախատեսում նման որոշման բողոքարկում, ուստի սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Կառավարչի հաշվետվությունը քննվում է սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված կառավարչի հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ դատավարական նորմերի պահպանմամբ (տես՝ սույն օրենքի 69-րդ հոդվածի կառավարչի կողմից հաշվետվություն ներկայացնելու, դատական նիստ հրավիրելու, ինչպես նաև կառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցելու մասին մեկնաբանությունները):

Հոդված 68. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը

1. Ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է դատավորի կողմից վաղաժամկետ դադարեցվել: Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերն են՝

ա) ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտումը:

բ) այն հանգամանքների առկայությունը, որոնք վկայում են, որ պարտապանն ի վիճակի չէ կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը:

2. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման պահանջով դատավորին կարող են դիմել կառավարիչը, պարտապանը կամ առավել խոշոր պահանջներ ունեցող 5 ապահովված և 5 չապահովված պարտատերերից յուրաքանչյուրը:

3. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերի առկայության դեպքում դատավորը վաղաժամկետ դադարեցնում է ֆինանսական առողջացման ծրագիրը և որոշում է կայացնում պարտապանին լուծարելու մասին: Հակառակ դեպքում ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը մերժվում է:

1. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումն իրենից ներկայացնում է իրավական մեխանիզմ, որն ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը վերջիններիս իրավունքների խախտման դեպքում: Ըստ մեկնաբանվող հոդվածի ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարման պատճառներից մեկն հանդիսանում է ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտումները: Ֆինանսական առողջացման ծրագրի էական խախտումով պետք է էական վնաս հասցվի պարտատերերին, այլապես անիմաստ է ծրագրի չնչին (ոչ էական) խախտման պարագայում պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը: Օրինակ՝ պահանջների բավարարման ժամանակացույցով նախատեսված վճարումների կետանցները կարող են լինել ոչ երկարատև՝ երկուսից երեք օր: Ի տարբերության նշվածի կարող է լինել մեկ, բայց երկարատև վճարման կետանց, որը կհամարվի էական խախտում: Մեկ այլ օրինակում՝ երկարատև կետանցը կարող է լինել այնպիսի չնչին գումարի չափով, որը շատ աննշան է արդեն իսկ մարված պահանջների նկատմամբ: Այդ իսկ պատճառով նույնիսկ նման խախտումների առկայության դեպքում, որոնք մեկնաբանվող հոդվածի համաձայն հիմք են ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման համար, կարող են չընդունվել դատարանի կողմից:

Ֆինանսական առողջացման ծրագրի երկրորդ պատճառը հանդիսանում է այն հանգամանքների առկայությունը, որոնք վկայում են, որ պարտապանն ի վիճակի չէ կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը: Երբ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են

պարտապանի կողմից առանց խախտումների, սակայն հանգամանքների բերումով պարտապանը չի ստանում այն շահույթները, ինչը նախատեսում էր ստանալ իրակացվող միջոցառումների արդյունքում, անկախ վերջինիս կամքից անհնար է դառնում կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը: Մեկ այլ օրինակում, անհատ ձեռնարկատեր պարտապանի երկարատև հիվանդության կամ մահվան դեպքում նույնպես անհնար է դառնում պարտավորությունների մարման ժամանակացույցի կատարումը: Պարտավորությունների մարման ժամանակացույցի կատարումն անհնարին է դառնում նաև այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի հիմքում դրված է գույքի օտարումը, սակայն միջոցառումների իրականացման ժամանակ, անկախ ծրագիր ներկայացնողի անձի կամքից, գույքն օտարվում է պակաս գնով, քան նախատեսված էր ֆինանսական առողջացման ծրագրով:

2. Մեկնաբանվող հոդվածի առաջին մասում թվարկված հանգամանքների առկայության դեպքում սնանկության գործով կառավարիչը, պարտապանը կամ առավել խոշոր պահանջներ ունեցող 5 ապահովված և 5 չապահովված պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունեն դիմել դատավորին չհաջողված ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման պահանջով: Ընդ որում, սա վերջիններիս իրավունքն է և նշված դիմումով դատավորին չդիմելու հետևանք կլինի այն, որ պարտապանը կկուտակի ավելորդ պարտավորություններ և կնվազի առկա պարտավորությունների բավարարման մակարդակը:

3. Պետք է նշել, որ դատավորն իր նախաձեռնությամբ չի կարող ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման մասին որոշում կայացնել: Սա նշանակում է, որ ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն մեկնաբանվող հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայությունը, այլև երկրորդ մասով նախատեսված անձանց դիմումը: Նման դիմումը քննվում է սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված կարգով (տես՝ սույն օրենքի 69-րդ հոդվածի մեկնաբանությունները): Դատավորը ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերի առկայությունը գնահատում է ներկայացված ապացույցներով և դրա արդյունքում կայացնում որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցնելու և պարտապանին լուծարելու մասին: Հակառակ դեպքում՝ ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը մերժվում է և պարտապանը շարունակում է իրականացնել ֆինանսական առողջացման ծրագիրը: Նկատի ունենալով, որ օրենսդիրը չի նախատեսում նման որոշման բողոքարկում, ուստի սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Հոդված 69. Ֆինանսական առողջացման ծրագրի ավարտը

1. Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատավորին ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

2. Կառավարչի հաշվետվությանը կցվում են՝

ա) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունը.

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

3. Դատավորը ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ստանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին:

4. Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության և ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ պարտատերերի առարկությունների քննության արդյունքներով դատավորը վճիռ է կայացնում՝

ա) ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են.

բ) ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին պարտապանի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

1-2. Եթե Ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ չի ավարտվում կամ դադարեցվում, ապա այդ ծրագիրն ավարտվում է դրանում նշված ժամկետը լրանալով: Հիշատակված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատավորին ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն: Այդ հաշվետվությանը կառավարիչը պետք է կցի՝

ա) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունը.

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ողջ ընթացքում կառավարիչն ունի ընդամենը պարտապանի ծրագրի շրջանակներում գործունեությունը վերահսկելու լիազորություն, իսկ բուն ծրագրով նախատեսված միջոցառումները, այդ թվում՝ պահանջների բավարարումը իրականացվում է պարտապանի ղեկավարի կողմից, ուստի մեկնաբանվող հոդվածում նշված հաշվետվությունը ներկայացնելու համար կառավարչին անհրաժեշտ են իրականացված միջոցառումների և պահանջների բավարարման վերաբերյալ պարտապանի մանրամասն հաշվետվությունները (հարկային և այլ պարտադիր վճարումների գծով ներկայացվող հաշվապահական հաշվետվությունները, վիճակագրական հաշվետվությունները և օրենքով նախատեսված այլ պարտադիր հաշվետվությունները, պարտապանի պարտավորությունները մարելու վերաբերյալ հաշվապահական փաստաթղթերը և այլն): Նշված փաստաթղթերը կառավարչին պետք է ներկայացվեն այնպիսի խելամիտ ժամկետում, որպեսզի կառավարիչը հնարավորություն ունենա ուսումնասիրելու ներկայացված փաստաթղթերը և կազմելու մեկնաբանվող հոդվածով սահմանված դատարան ներկայացվող հաշվետվություն:

Կառավարչի հաշվետվությունը պետք է պարունակի՝

- ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքները (կատարված կամ չկատարված լինելու մասին),

- պահանջների բավարարման ժամանակացույցի կատարման արդյունքների մասին տվյալներ և ապացույցներ,

- չբավարարված պահանջների ցանկը, չբավարարված մասի և պատճառների նշումով՝ վերջիններիս առկայության դեպքում,

- միջնորդություն ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են կամ պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Դատարան ներկայացվող հաշվետվությանը կից պահանջների գրանցամատյանը պետք է պարունակի կառավարչի նշումը բավարարված և չբավարարված պահանջների չափի մասին:

3-4. Մեկնաբանվող հոդվածում նշված հաշվետվությունը դատավորին ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ դրանց իր մոտ դեպոնացված

օրինակին: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռնում պարտատերերին ֆինանսական առողջացման ծրագրի ավարտի վերաբերյալ առարկություններ ներկայացնել դատարան: Ընդ որում, նման առարկությունները պարտատերերը կարող են ներկայացնել մինչև դատական նիստը: Պարտատերերի առարկություններն ուղարկվում են կառավարչին պարտապանին հանձնելու համար:

Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունն ստանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում դատավորը նշանակում է դատական նիստ՝ այդ մասին 3 օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին:

Հրավիրված դատական նիստում դատավորը քննության է առնում և գնահատում է կառավարչի հաշվետվության հիմնավորվածությունը, իսկ առարկությունների առկայության դեպքում, քննում է նաև այդ առարկությունները: Քննության արդյունքներով դատավորը մի դեպքում կայացնում է վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են: Նշված ճիշդ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

Մյուս դեպքում դատավորը կայացնում է որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին պարտապանի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն: Այս որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն:

Գ Լ ՈՒ Խ 9.

**ՊԱՐՏԱՊԱՆ - ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆ - ԱՆՀԱՏ
ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

Հոդված 70. Պարտապան-իրավաբանական անձի լուծարումը և պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը

1. Սույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու

դեպքում դատավորը որոշում է կայացնում պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման մասին (այսուհետ՝ պարտապանի լուծարում):

2. Պարտապանի լուծարման մասին որոշման կայացումից հետո՝ 5 օրվա ընթացքում, կառավարիչն այն հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Պարտապանին լուծարելու մասին որոշման մեկ օրինակը դատավորն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ համապատասխան գրառում կատարելու համար:

3. Պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչը սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը:

1. Մեկնաբանվող հոդվածում թվարկված են այն սպառիչ դեպքերը, երբ կարող է վրա հասնել պարտապան-իրավաբանական անձի լուծարումը (լուծարման գործընթացը) կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարումը, դրանք են՝

- սույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացնելը,

- ներկայացված ծրագրի հաստատումը մերժելը,

- ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցնելը,

- ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելը:

Այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու հիմքով պետք է լուծարվի պարտապանը, ապա կառավարիչը լուծարելու մասին միջնորդությունը ներկայացնում է պարտատերերի առաջին ժողովի հաջորդ օրը, քանի որ ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու վերջնաժամկետը լրանում է մինչև պարտատերերի առաջին ժողովը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա չէ ծրագրի ներկայացման ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշում (սույն օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մաս): Այն դեպքերում, երբ ծրագիր ներկայացվելու ժամկետը երկարացվել է, սակայն ծրագիր չի ներկայացվել, ապա կառավարիչը

լուծարելու մասին միջնորդությունը պետք է ներկայացնի երկարացված ժամկետի ավարտի հաջորդ օրը:

Ի տարբերություն բնականոն գործունեություն ծավալող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, որտեղ լուծարման մասին կամ գործունեության դադարեցման մասին որոշումները ընդունում են իրավաբանական անձի դեպքում, նրանց բարձրագույն կառավարման մարմինները, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատերը, սնանկության վարույթում պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման մասին որոշումը կայացնում է դատավորը՝ սնանկության գործով կառավարչի միջնորդության հիման վրա:

Դատավորի այս որոշման հիման վրա պարտապանի մոտ սկսվում է լուծարման գործընթաց, որի մասին տեղեկությունները կառավարիչը հրապարակվում է մամուլում: Դատավորի որոշման և մամուլում հրապարակված համապատասխան հայտարարության հիման վրա «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումը պետական գրանցամատյանում գրառում է տեղեկություններ՝ տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին, որի վերաբերյալ պարտապանին տրվում է պետական գրանցման վկայականի հերթական ներդիր: Այն դեպքում, երբ պարտապանն անհատ ձեռնարկատեր է, ապա՝ դատավորի որոշմամբ դադարեցվում է պարտապանի գործունեությունը, որի մասին տեղեկությունները նույնպես հրապարակվում են մամուլում և այդ մասին գրառում է կատարվում պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում («Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մաս):

2. Մեկնաբանվող մասը սահմանում է կառավարչի այն պարտականությունը, որն առաջանում է պարտապան-իրավաբանական անձին լուծարելու կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարեցնելու մասին որոշում կայացնելուց հետո: Մասնավորապես, պարտապանին լուծարելու մասին դատարանի որոշման կայացումից հետո 5 օրվա ընթացքում կառավարիչը տեղեկություններ է հրապարակում մամուլում պարտապանի լուծարման գործընթացում գտնվելու մասին: Մամուլում տեղեկությունների հրապարակման նապատակն է պարտապանի լուծարման գործընթացում գտնվելու փաստի մասին հանրությանը, մասնավորապես՝ պարտատերերին իրազեկելը:

3. Պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը: Պարտապանի գույքի վաճառքը կառավարիչն իրականացնում է սույն օրենքի 75-77-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով (տես՝ սույն օրենքի 75-77-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Հոդված 71. Պարտապանի գույքի արգելադրումը

1. Դատավորի կողմից պարտապանի լուծարման վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը դատավորի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:

2. Եթե պարտապանը սեփականության իրավունքով գույք ունի այլ երկրներում, ապա կառավարիչը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով դիմում է այդ երկրների դատարաններին՝ նշված գույքն արգելադրելու մասին հանձնարարությամբ: Այլ երկրներում պարտապանին պատկանող գույքի արգելադրումը կարող է իրականացվել միայն տվյալ երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով:

1. Մինչև սույն հոդվածի մեկնաբանությանը անցնելը նախ նշենք, որ պարտապանի նկատմամբ սնանկության վարույթ հարուցելիս դատավորի համապատասխան գրության հիման վրա և հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ ենթակետը, ինչպես նաև սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը, պարտապանի նկատմամբ եղած բոլոր կատարողական վարույթները հարկադիր կատարողը կասեցնում է, այդ թվում՝ գույքի արգելադրման վերաբերյալ վարույթները: Այնուհետև, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատավորի համապատասխան գրության և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի, ինչպես նաև սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի հիման վրա հարկադիր կատարողը կարճում է բոլոր, այդ թվում՝ գույքային բռնագանձումներով և գույքի արգելադրումներով կատարողական վարույթները: Սրանից հետևում է, որ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո մինչև նրա նկատմամբ լուծարելու մասին որոշում կայացնելը պարտապանի գույքն արգելանքի տակ չի գտնվում և վերջինիս հնարավորություն է ընձեռնվում կառավարչի հսկողությամբ դուրս գալ սնանկ վիճակից (ֆինանսական առողջացման ծրագիր, բնականոն գործունեություն և այլն): Սակայն, երբ պարտապանին չի հաջողվում դուրս գալ սնանկությունից և դատավորը կայացնում է որոշում՝ պարտապանին լուծարելու մասին, ապա՝ պարտապանի գույքի արգելադրումն իրականացնում է կառավարիչը մեկնաբանվող հոդվածով սահմանված կարգով, և ոչ թե հարկադիր կատարողը:

Դատավորի կողմից պարտապանին լուծարելու մասին որոշումը պարունակում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքն արգելադրելու մասին դրույթ, որի հիման վրա 7 օրվա ընթացքում կառավարիչն արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը:

Սույն օրենքով նախատեսված բոլոր գործընթացներից միայն լուծարման գործընթացում է, որ կառավարիչն իրավունք է ստանում արգելադրել պարտապանին պատկանող գույքը, այդ թվում՝ դրամական միջոցները և բանկային բոլոր հաշիվները: Նման արգելադրումը նպատակ ունի զերծ պահել պարտապանի գույքը սույն օրենքով կամ ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված ձևերով ցանկացած օտարումից և միաժամանակ հանդիսանում է պարտատերերի պահանջների բավարարման ապահովման միջոց: Մեկնաբանվող հոդվածը որպես բացառություն սահմանել է, որ կառավարիչը դատավորի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա ՀՀ օրենսդրության համաձայն բռնագանձում չի կարող տարածվել (ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենք, հոդված 51):

2. Այն դեպքում, երբ պարտապանը սեփականության իրավունքով գույք ունի օտարերկրյա պետություններում, տվյալ գույքի վրա արգելանքը դրվում է միջազգային պայմանագրերին համապատասխան՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Դատարանը որոշում է կայացնում պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին, որի համաձայն կառավարիչը դիմում է ՀՀ արդարադատության նախարարության միջոցով համապատասխան պետություն՝ նշված գույքն արգելադրելու մասին հանձնարարությամբ: (նայել միջազգային պայմանագրերը)

Հոդված 72. Պարտապանի գործունեության կասեցումը

1. Եթե դատավորը կայացրել է պարտապանին լուծարելու մասին որոշում, ապա գույքը կառավարելու կամ տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները կասեցվում են դատավորի որոշմամբ:

2. Դատավորի որոշմամբ պարտապանի՝ գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը, եթե պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը, կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր:

1. Մանկության մասին օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատավորը որոշում է կայացնում պարտապան-

իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման մասին: Այդ պահից կասեցվում են գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի բոլոր իրավունքները: Ի տարբերություն իրավաբանական անձի բնականոն լուծարման գործընթացի, որտեղ նշանակման պահից լուծարման հանձնաժողովին (լուծարողին) են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները, սնանկության հետևանքով պարտապանի լուծարման գործընթացում պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու բոլոր իրավունքները անցնում են սնանկության գործով կառավարչին:

Պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները կասեցնելու հետ մեկտեղ կառավարիչը լուծում է պարտապանի բոլոր, այդ թվում՝ տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագրերը (ՀՀ աշխատանքային օրենսգրք 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր): Ընդ որում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման պահանջը չի տարածվում գործատուի սնանկ ճանաչվելու դեպքում աշխատանքային պայմանագրերը լուծելիս:

2. Պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը: Սակայն, մինչև պարտապանի լուծարումը պարտապանի իրավունքների կասեցում կարող է տեղի ունենալ միայն մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Դրանք են՝

- պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է,
- պարտապանի գործունեությունը կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը,
- ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր:

Պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքների կասեցման դատավարական հիմք է կառավարչի կողմից համապատասխան միջնորդություն դատարան ներկայացնելը: Միջնորդությունը պետք է լինի հիմնավորված: Սակայն, դատարանը կարող է չբավարարել կառավարչի ներկայացրած միջնորդությունը: Այս դեպքում պարտապանի ղեկավարը շարունակում է իր լիազորությունների կատարումը (բնականոն գործունեությունը) սույն օրենքով նախատեսված սահմանափակումներով՝ կառավարչի հսկողության ներքո:

Պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքների կասեցման վերաբերյալ միջնորդության բավարարման արդյունքում դատավորը կայացնում է որոշում: Գործող օրենսդրությունը այս որոշման բողոքարկման հնարավորություն չի նախատեսել, ուստի այն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Հոդված 73. Պարտապանի գործունեության վերսկսումը

Եթե պարտապանի գործունեությունը կասեցվել է սույն օրենքի 72 հոդվածով նախատեսված կարգով, ապա կառավարչի միջնորդության հիման վրա

կայացված դատավորի որոշմամբ պարտապանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսել իր գործունեությունը մինչև մեկ տարի ժամանակով, եթե պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Դատավորի որոշումը եռօրյա ժամկետում կառավարիչն ուղարկում է պարտատերերին:

Պարտատերերը գրավոր կարող են առարկել պարտապանի գործունեությունը վերսկսելու մասին դատավորի որոշմանը՝ այն կայացվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Առարկությունները դատարանում քննարկվում են դրանց ներկայացման պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին: Դատավորը, առանց դատական նիստ հրավիրելու, որոշում է կայացնում առարկությունը մերժելու կամ այն լրիվ կամ մասնակի բավարարելու մասին:

Դատարան ներկայացված առարկությունը չի կասեցնում պարտապանի գործունեության վերսկսման մասին որոշման կատարումը:

Մեկնաբանվող հոդվածը հնարավորություն է նախատեսում վերսկսել պարտապանի արդեն իսկ կասեցված գործունեությունը: Կառավարիչը պարտապանի գործունեության վերսկսման հիմնավոր միջնորդությամբ դիմում է դատարան դրա համար բավարար հիմքերի առկայության պայմաններում:

Պարտապանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսել իր գործունեությունը, մասնավորապես, եթե պարտապանի ֆինանսական դրության վերլուծության արդյունքում կառավարիչը բավարար հիմքեր ունի, որ պարտապանի գործունեության վերսկսմամբ պարտապանի վճարունակությունը կարող է վերականգնվել կամ պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման մակարդակը:

Պարտապանի կասեցված գործունեությունը վերսկսելու կառավարչի միջնորդության հիման վրա դատավորը կայացնում է որոշում՝ պարտապանի գործունեությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելու կամ կառավարչի միջնորդությունը մերժելու մասին: Ընդ որում, պարտապանի կասեցված գործունեությունը կարող է վերսկսվել մինչև մեկ տարի ժամանակով: Դատավորի որոշումն եռօրյա ժամկետում կառավարիչն ուղարկում է պարտատերերին:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը իր մեջ պարունակում է դատավարական սկզբունքներին չհամապատասխանող դրույթներ: Այսպես, պարտատերը իրավունք ունի առարկություն ներկայացնել դատարանի որոշման դեմ, այն դեպքում, երբ ՀՀ դատավարությունում որևէ դատական ակտի հետ համաձայն չլինելու պարագայում

անձինք կարող են օգտվել դատավարական բողոքարկման իրավունքից, ոչ թե առարկություն ներկայացնել այդ ակտի դեմ: Այստեղից հետևում է, որ օրենսդիրը

ելինչը չի բխում դատա և ավելին, նման առարկության քննարկման համար չի նախատեսվում դատական նիստի հրավիրում, սակայն պարունակում է որոշման քննարկման օրվա մախն պարտատերերին ծանուցելու մասին դրույթ:

Է դատարանի կողմից Պարտատերերը գրավոր կարող են առարկել պարտապանի գործունեությունը վերսկսելու մասին դատավորի որոշումը՝ այն կայացնելուց հետո տասնօրյա ժամկետում: Պարտատերերի կողմից առարկություններ ներկայացվելու դեպքում դատավորը դրանք քննարկում է ներկայացման պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին: Դատավորը, առանց դատական նիստ հրավիրելու, որոշում է կայացնում առարկությունը մերժելու կամ այն լրիվ կամ մասնակի բավարարելու մասին:

Դատարան ներկայացված առարկությունը չի կասեցնում պարտապանի գործունեության վերսկսման մասին որոշման կատարումը:

Հոդված 74. Կառավարչի հաշվետվությունը պարտապանի գործունեության

վերսկսման դեպքում

1. Կառավարիչը պարտավոր է ամիսը երկու անգամ դատավորին ներկայացնել հաշվետվություն՝ պարտապանի վերսկսած գործունեության վերաբերյալ:

2. Կառավարչի հաշվետվությունները պարտատերերի ժողովում կամ խորհրդում քննարկվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

3. Եթե պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում բավարարվում են պարտատերերի բոլոր պահանջները, ապա կառավարիչը դատավորին է ներկայացնում վերջնական հաշվետվություն, որում պարունակվում է հիմնավորված միջնորդություն գործն ավարտելու մասին: Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն պարտապանի ակտիվների հավաքագրման վերաբերյալ: Հաշվետվությանը կցվում է պարտապանի վերջնական հաշվեկշիռը:

4. Դատարան ներկայացվող պարտապանի վերջնական հաշվեկշռին կցվում են՝

ա) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

բ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

5. Վերջնական հաշվեկշիռը և հաշվետվությունը դատավորին ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ այդ փաստաթղթերի՝ իր մոտ դեպոնացված օրինակին:

6. Դատավորը վերջնական հաշվեկշիռն ստանալուց ոչ ուշ, քան 15 և ոչ շուտ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին:

Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը:

Որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

7. Դատավորը, հաստատելով վերջնական հաշվեկշիռը, վճիռ է կայացնում լուծարման գործընթացը դադարեցնելու և պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին: Հակառակ դեպքում դատավորը մերժում է վերջնական հաշվեկշռի հաստատումը և գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները:

1-2. Ի տարբերություն ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման գործընթացի, որտեղ կառավարիչը ծրագրի վերաբերյալ հաշվետվությունը դատարանին է ներկայացնում երեք ամիսը մեկ անգամ, պարտապանի կասեցված գործունեությունը վերսկսելու գործընթացում կառավարիչը պարտավոր է դրա վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել դատավորին ամիսը երկու անգամ: Կառավարչի հաշվետվությանը պետք է կցվեն սույն օրենքի 81-82-րդ հոդվածներով նախատեսված վարչական ծախսերի, ընթացիկ առաջացող պարտավորությունների և այլ պահանջների բավարարման նպարտակով առաջացած միջոցների բաշխման ծրագիրը: Դատավորը

յուրաքանչյուր անգամ հաստատում է կառավարչի ներկայացրած բաշխման ծրագրերը համաձայն սույն օրենքի 81-րդ հոդվածի:

Բացի դատավորին ներկայացվող հաշվետվություններից կառավարիչը պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել պարտատերերի ժողովում կամ խորհրդում քննարկման համար: Նման հաշվետվությունները ներկայացվում և քննարկվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Քննարկման արդյունքում պարտատերերը՝ ժողովում, կամ խորհուրդը կարող են առարկություններ ներկայացնել կառավարչի հաշվետվության վերաբերյալ: Հակառակ դեպքում վերջիններս հավանություն են տալիս կառավարչի հաշվետվությանը:

3. Առաջին հայացքից թվում է, թե պարտապանի կասեցված գործունեության վերսկսման գործընթացը նպատակ ունի միայն հնարավորինս ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման մակարդակը: Սակայն, այն դեպքերում, երբ պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում պարտատերերի բոլոր պահանջները բավարարվում են, ապա այդ հանգամանքը կառավարչին իրավունք է տալիս դիմելու դատարան տվյալ պարտապանի վճարունակության վերականգնման արդյունքում սնանկության գործն ավարտելու առաջարկությամբ: Այսպես, **եթե պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում բավարարվում են պարտատերերի բոլոր պահանջները, ապա կառավարիչը դատավորին է ներկայացնում վերջնական հաշվետվություն, որում պարունակվում է հիմնավորված միջնորդություն գործն ավարտելու մասին:**

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք կառավարիչը պարտավոր է դատարան ներկայացնել: Այդ փաստաթղթերից հիմնականը վերջնական հաշվետվությունն է: Վերջնական հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանված չէ օրենսդրի կողմից: Մեկնաբանվող հոդվածը նախատեսում է այն, թե ինչ բովանդակություն պետք է ունենա վերջնական հաշվետվությունը: Վերջինս բովանդակային առումով տարբերվում է այն հաշվետվությունից, որը կառավարիչը ներկայացնում է դատարան պարտապանի լուծարումով սնանկության գործն ավարտելու միջնորդությամբ:

Նախ, վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի միջնորդություն գործն ավարտելու մասին, որն էլ պետք է լինի հիմնավորված: Հաջորդ պահանջն այն է, որ հաշվետվությունը պարունակի ամփոփ տեղեկատվություն պարտապանի ակտիվների հավաքագրման վերաբերյալ:

Հաշվետվությանը կցվում է պարտապանի վերջնական հաշվեկշիռը, այդ թվում՝ պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները, պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Ցանկացած պարտատեր իրավունք ունի նախապես ծանոթանալ վերջնական հաշվեկշիռին և հաշվետվությանը: Ենթադրվում է, որ այս իրավունքից կորոզ են օգտվել նաև պարտապանի ղեկավարը, պարտապանի հիմնադիրները, մասնակիցները: Վերջնական հաշվեկշիռը և վերջնական հաշվետվությունը ծանոթացման տրամադրելու և այդ մասին իրազեկելու պարտականությունը դրված է կառավարչի վրա: Վերջնական հաշվեկշիռը և հաշվետվությունը դատավորին ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ այդ փաստաթղթերի՝ իր մոտ դեպոնացված օրինակին: Այդ փաստաթղթերին ծանոթանալու կարգը՝ ժամանակը, տեղը և այլն, որոշվում է կառավարչի կողմից, որի մասին նշում է արվում ծանուցման մեջ: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռնում պարտատերերին կառավարչի ներկայացրած

հաշվետվության վերաբերյալ առարկություններ ներկայացնել դատարան: Ընդ որում, նման առարկությունները պարտատերերը կարող են ներկայացնել մինչև դատական նիստը: Պարտատերերի առարկություններն ուղարկվում են կառավարչին պարտապանին հանձնելու համար:

Քանի որ կառավարչի ներկայացրած վերջնական հաշվետվության և վերջնական հաշվեկշռի քննության արդյունքում դատարանը հնարավոր է որ կայացնի գործի քննությունը ըստ էության ավարտող դատական ակտ (լուծարման գործընթացը դադարեցնելու և պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճիռ), կառավարչի ներկայացրած հաշվետվությունը քննվում է դատական նիստի ժամանակ: Դատավորը վերջնական հաշվեկշիռը ստանալուց ոչ ուշ, քան 15 և ոչ շուտ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին: Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը: Որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

Հրավիրված դատական նիստում դատավորը քննության է առնում և գնահատում է կառավարչի հաշվետվության հիմնավորվածությունը, իսկ առարկությունների առկայության դեպքում, քննում է նաև այդ առարկությունները: Դատական նիստում կառավարչի ներկայացրած վերջնական հաշվետվության քննության արդյունքում դատավորը, հաստատելով վերջնական հաշվեկշիռը, վճիռ է կայացնում լուծարման գործընթացը դադարեցնելու և պարտապանի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի բոլոր պահանջները բավարարված են ամբողջ ծավալով: Այն դեպքում, երբ բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն կամ պահանջները բավարարված են մասնակիորեն, ապա դատավորը մերժում է վերջնական հաշվեկշռի հաստատումը և գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները: Մերժման պատճառ կարող է լինել նաև հաշվետվության անհստակ կազմված լինելը և սպառիչ տվյալների բացակայությունը:

Հոդված 75. Պարտապանի գույքի վաճառքը

1. Պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ դատավորի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով:

2. Պարտապանի գույքի վաճառքը թույլատրվում է միայն պարտապանին լուծարելուց հետո՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

3. Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման դեպքում պարտապանի գույքի վաճառքն իրականացվում է այդ ծրագրով նախատեսված կարգով:

Պարտապանի գույքը նրա հաշվեկշռում հաշվառված ցանկացած օբյեկտն է:

Պարտապանի գույքի վաճառք ասելով հասկանում ենք այդ գույքի իրացում՝ առավել մեծ հասույթ ստանալու նպատակով:

Պարտապանի գույքի վաճառքը սնանկության մասին օրենքով կանոնակարգված ընթացակարգ է, որն իրականացվում է սույն օրենքի 75-77-րդ հոդվածներով նախատեսված կանոններով: Պարտապանի գույքի վաճառքը տեղի է ունենում պարտապանի գույքը գույքագրելուց և գնահատելուց հետո, որն էլ հնարավորություն է տալիս որոշելու վաճառվող օբյեկտների լուծարքային արժեքները:

Պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ դատավորի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով, պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո: Հրապարակային սակարկություններով վաճառքն իրականացնում է կառավարիչը ՀՀ Կառավարության 02.03.2002թ. թիվ 190 որոշմամբ հաստատված «Անվճարունակության կառավարիչների կողմից աճուրդի անցկացման կանոնակարգով» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ուղղակի գործարքով պարտապանի գույքի վաճառքի կանոնները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

Պարտապանի գույքի վաճառքը թույլատրվում է միայն պարտապանին լուծարելուց հետո՝ բացառությամբ սույն օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում (տես սույն օրենքի 55-րդ հոդվածի մեկնաբանությունները): Այս դեպքում պարտապանի գույքը վաճառվում է հիշատակված հոդվածում նախատեսված հիմքերի երևան գալու դեպքերում՝ ուղղակի գործարքով:

Մնանկության մասին օրենքով սահմանված կարգով ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման դեպքում պարտապանի գույքի վաճառքն իրականացվում է այդ ծրագրով նախատեսված կարգով և դրանում նշված ժամկետներում:

Հոդված 76. Լուծարման ընթացքում պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով

1. Պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատավորին՝ վաճառքի առաջարկվող օրվանից առնվազն 40 օր առաջ: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի մեկնարկային գինը, աճուրդի անցկացման օրը:

Միջնորդության վերաբերյալ դատավորը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) միջնորդությունը բավարարելու և դրանում նշված պայմաններով գույքի վաճառքը թույլատրելու մասին.

բ) միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով պատճառները:

2. Պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով չվաճառվելու դեպքում այն կարող է կրկին ներկայացվել հրապարակային սակարկություններով վաճառքի կամ ուղղակի գործարքով վաճառքի՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

3. Կառավարիչն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում առնվազն երկու անգամ հրապարակում է հայտարարություն՝ պարտապանին պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի մասին, որը փակցվում է նաև դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում: Կառավարիչը պարտապանին պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի մասին տեղեկությունները կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Պարտապանին պատկանող գույքի վաճառքը կազմակերպվում է ոչ շուտ, քան մամուլի միջոցներով տրված վերջին հայտարարությունից 20 օր հետո՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

4. Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը: Կառավարիչը պարտավոր է դատավորի հաստատմանը ներկայացնել պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու միջնորդություն, որը բովանդակում է գույքի գտնվելու վայրի, աճուրդի մեկնարկային գնի, աճուրդի անցկացման օրվա մասին տվյալներ և գույքի նկարագրությունը: Մեկնարկային գինը՝ դա մրցույթով առաջարկվող գույքի վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

Հրապարակային սակարկություններով պարտապանի գույքը վաճառելու մտադրության դեպքում այն պարտատերերի քննարկմանը չի ներկայացվում:

Կառավարիչն իր միջնորդությունը դատավորին ներկայացնում է գրավոր վաճառքի առաջարկվող օրվանից առնվազն 40 օր առաջ: Մեկնաբանվող հոդվածը նախատեսում է երկու տեսակ որոշում, որը կարող է դատավորը կայացնել միջնորդության քննարկման արդյունքում: Դրանք են՝ միջնորդությունը բավարարելու և միջնորդությունը մերժելու մասին որոշումները:

Այն դեպքում, երբ միջնորդությունը բավարարվում է, ապա գույքի վաճառքն իրականացվում է որոշմամբ հաստատված պայմաններով: Իսկ այն դեպքում, երբ միջնորդությունը մերժվում է, ապա որոշման մեջ նշվում են մերժման պատճառները:

Միջնորդությունը բավարարվելու դեպքում կառավարիչն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում առնվազն երկու անգամ հրապարակում է հայտարարություն՝ պարտապանին պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի մասին, որը փակցվում է նաև դատարանի շենքում՝ հատուկ հատկացված տեղում: Կառավարիչը պարտապանին պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի մասին տեղեկությունները կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Պարտապանին պատկանող գույքի վաճառքը կազմակերպվում է ոչ շուտ, քան մամուլում տրված վերջին հայտարարությունից 20 օր հետո՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով չվաճառվելու դեպքում այն կարող է կրկին ներկայացվել հրապարակային սակարկություններով վաճառքի կամ ուղղակի գործարքով վաճառքի՝ մեկնաբանվող հոդվածով սահմանված կարգով:

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության 02.03.2002թ. թիվ 190 որոշմամբ հաստատված

«Անվճարունակության կառավարիչների կողմից աճուրդի անցկացման կանոնակարգով»:

Հոդված 77. Պարտապանին պատկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով

1. Եթե կառավարիչը մտադիր է պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացնել ուղղակի գործարքով, ապա նա հրավիրում է պարտատերերի խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում՝ պարտատերերի ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Պարտատերերի խորհրդի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատավորին: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը:

Դատավորը, առանց դատական նիստ հրավիրելու, որոշում է կայացնում միջնորդությունը քավարարելու կամ մերժելու մասին:

2. Պարտապանի գույքի արժեքի 1 տոկոսը չգերազանցող արժեք ունեցող գույքի ուղղակի գործարքով վաճառքի համար խորհրդի նիստի հրավիրումը պարտադիր չէ:

3. Կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ շահագրգիռ անձին գույքի ուղղակի գործարքով վաճառքի դեպքում չի կարող տրվել որևէ արտոնություն այլ անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

1-2. Սույն օրենքը նախատեսում է պարտապանի գույքի վաճառքի երկու ձև: Առաջինը՝ դա հրապարակային սակարկությունների միջոցով վաճառքն է (տես՝ սույն օրենքի 76-րդ հոդվածի մեկնաբանությունները): Հրապարակային սակարկություններով պարտապանի գույքը վաճառելու մտադրության դեպքում այն պարտատերերի քննարկմանը չի ներկայացվում:

Պարտապանի գույքի վաճառքի երկրորդ ձևը դա ուղղակի գործարքով վաճառքն է, որի ժամանակ կառավարիչը պարտավոր է հրավիրել պարտատերերի խորհրդի

նիստ, իսկ վերջինիս ձևավորված չլինելու դեպքում՝ պարտատերերի ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Այնուամենայնիվ, պարտապանի գույքի արժեքի 1 տոկոսը չգերազանցող արժեք ունեցող գույքի ուղղակի գործարքով վաճառքի համար խորհրդի կամ նիստի նիստի հրավիրումը պարտադիր չէ:

Պարտապանին պատկանող գույքի ուղղակի գործարքով վաճառքի անհրաժեշտություն կարող է առաջանալ այն դեպքերում, երբ պարտապանի գույքը բազմաթիվ անգամ հայտարարված աճուրդների արդյունքում չի օտարվել՝ գնորդներ չլինելու պատճառով: Իսկ յուրաքանչյուր աճուրդի դեպքում գույքի արժեքը նվազում է նախորդ մեկնարկային գնի քսան տոկոսի չափով: Իսկ ուղղակի գործարքով թույլտվություն ստանալու դեպքում կառավարիչը հնարավորություն է ունենում գույքն իրացնել ավելի բարձր գնով քան այն սահմանված է եղել վերջին աճուրդում:

Մեկ այլ օրինակում՝ ուղղակի գործարքով վաճառքի անհրաժեշտություն կարող է առաջանալ, երբ պարտապանի գույքն այնքան փոքրարժեք է և բազմաքանակ, որ դրա ուղղակի գործարքով վաճառքն ավելի արդյունավետ կստացվի մանրածախ շուկաներում, քան դրա վաճառքն իրականացվի հրապարակային սակարկությունների միջոցով:

Մեկնաբանվող հոդվածի առաջին մասին համաձայն պարտատերերի խորհրդի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատավորին: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը:

Պետք է նկատի ունենալ, որ ներկայացված միջնորդությունը և պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումը գնահատում է դատավորը և անկախ ժողովի կամ խորհրդի որոշումից, առանց դատական նիստ հրավիրելու, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

3. Պարտապանին պատկանող գույքի ուղղակի գործարքով վաճառքն իրականացնելիս չեն բացառվում այն դեպքերը, երբ վաճառվող գույքը գնելու ցանկություն են հայտնում կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ շահագրգիռ անձինք: Այս պարագայում մեկնաբանվող մասը սահմանում է, որ կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ շահագրգիռ անձին գույքի ուղղակի գործարքով վաճառքի դեպքում չի կարող տրվել որևէ արտոնություն այլ անձի նկատմամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Մեկնաբանվող մասը չթույլատրելով որևէ արտոնություն շահագրգիռ անձանց համար, միաժամանակ նախատեսում է այդ կանոնի բացառություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Այդպիսի դեպքեր կարող են լինել, երբ ուղղակի գործարքով վաճառվում է սահմանափակ շրջանառության գույք, որի ձեռքբերման համար անհրաժեշտ է թույլտվության (լիցենզիայի) առկայություն և հնարավոր է, որ նման թույլտվություն

ունեցող անձը կարող է շահագրգիռ լինել պարտապանի կամ կառավարչի նկատմամբ: Շահագրգիռ անձանց շրջանակը սահմանված է սույն օրենքի 9-րդ հոդվածով:

Հոդված 78. Գույքի օգտագործումից ստացված եկամուտը

Պարտապանին պատկանող գույքի կառավարումից և տնօրինումից ստացված եկամուտը փոխանցվում է պարտապանի սնանկության հատուկ հաշվին և բաշխվում է պարտատերերի միջև՝ գույքի վաճառքից ստացված միջոցների հետ միասին:

Հոդված 79. Պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցների փոխանցումը

Պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին, իսկ անդորրագրերը հանձնվում են կառավարչին:

78-79-րդ հոդվածներ. Օրենսդիրը պարտապանի դրամական միջոցների հաշվառման և հսկողության նպատակով նախատեսել է պարտապանի սնանկության հատուկ հաշիվ ունենալու հասկացությունը: Պարտապանի սնանկության հատուկ հաշիվը հիմնական կապիտալի մեծությամբ ՀՀ գործող առաջին հինգ առևտրային բանկերից մեկում բացված սնանկության հատուկ հաշիվն է, որին հաշվեգրվում են պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները և որից օգտվում է կառավրիչն իր լիազորություններն իրականացնելիս: Սնանկության հատուկ հաշիվը կարող է բացվել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո սնանկության վարույթի ցանկացած փուլում՝ կախված դրա անհրաժեշտությունը վրա հասնելու հանգամանքից:

Պարտապանի ունեցած մյուս բոլոր հաշիվները վերջինիս լուծարման գործընթաց սկսելու պահից ենթակա են փակման, իսկ նրանցում եղած դրամական միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին: Պարտապանի սնանկության հատուկ հաշվի հիմնական նշանակությունը պարտապանի դրամական միջոցների կուտակումն է: Պարտապանին պատկանող գույքի կառավարումից և տնօրինումից ստացված եկամուտը փոխանցվում է պարտապանի սնանկության

հատուկ հաշվին: Այս հաշվում եղած միջոցներն են բաշխվում պարտատերերի միջև սույն օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված պահանջների բավարարման հերթականությամբ:

Անկախ նրանից թե պարտապանի գույքը վաճառվել է հրապարակային սակարկություններով, թե ուղղակի գործարքով, գույքի վաճառքից ստացված միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին, իսկ անդորրագրերի բնօրինակները հանձնվում են կառավարչին:

Հոդված 80. Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխումը

1. Պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ, կառավարչի կողմից՝ դատավորի հաստատած բաշխման ծրագրին համապատասխան:

2. Պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և իրացման հետ կապված ծախսերը, դատական ծախսերը և կառավարչի վարձատրությունը, եթե դրանք հնարավոր չէ բավարարել պարտապանի այլ գույքի հաշվին:

1. Պարտապանի պարտատերերի պահանջները բավարարվում են սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հերթականությամբ:

Պարտատերերի պահանջների բավարարման սույն օրենքով սահմանված հերթականության իրավական հիմքը պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատավորի ընդունած որոշումն է (տես սույն օրենքի 46-րդ հոդվածի մեկնաբանությունները): Պարտատերերի պահանջների փաստացի բավարարումը կատարվում է կառավարչի ներկայացրած բաշխման ծրագրով, որը հաստատվում է դատավորի համապատասխան որոշմամբ: Որոշում կայացնելիս դատավորը ստուգում է բաշխման ծրագրում ներառված վճարման ենթակա գումարների և պահանջների բավարարման հերթականության համապատասխանությունը սույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված հերթերին: Դատավորի այս որոշումը սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կառավարչի բաշխման ծրագիրը հաստատելու մասին միջնորդությունը և դատավորի՝ այդ ծրագիրը հաստատելու մասին որոշումը պարտատերերին չեն ուղարկվում:

Բացի պահանջների բավարարումից դատավորի հաստատած բաշխման ծրագրով բաշխվում են նաև կառավարչի վարձատրությունը, դատական ծախսերը, ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները, պարտադիր սոցիալական վճարումները և այլն: Միայն դատավորի ընդունած որոշման և հաստատած բաշխման ծրագրին համապատասխան կառավարիչն իրավունք ունի և պարտավոր է բաշխել պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները: Բաշխման ծրագրի շրջանակից դուրս կատարված վճարումները համարվում են սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով սահմանված պահանջի խախտում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածով նախատեսված հիմքով կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել և կիրառվել նույն օրենսգրքի 304-րդ հոդվածով սահմանված հետևանքները:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հերթականության հանաձայն պարտապանի գրավով ապահովված պահանջները հանդիսանում են առաջնահերթ պահանջներ, քան գույքի պահպանման և իրացման հետ կապված ծախսերը, դատական ծախսերը և կառավարչի վարձատրությունը, ուստի դրանք չեն կարող բավարարվել, եթե պարտապանը բացի գրավադրված գույքից այլ գույք չունենա կամ դրա չափը չի բավականացնում նշված ծախսեր ամբողջ ծավալով մարման համար: Օրենսդիրը հիշատակված ծախսերին պարտադիր կարգավիճակ տալով, սահմանել է, որ պարտապանի այլ գույքի բացակայության դեպքում դրանք արտահերթ վճարվում են պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից:

Հոդված 81. Պարտատերերի պահանջների բավարարման մասին հաշվետվությունը

Կառավարիչը պարտավոր է պարտապանի լուծարման մասին որոշման ընդունման պահից յուրաքանչյուր ամիս դատավորին ներկայացնել հաշվետվություն՝ պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման և պարտատերերի պահանջների բավարարման մասին:

Եթե մինչև պարտապանին լուծարելու մասին որոշման ընդունումը կառավարիչը դատարանին ներկայացնում է պարտապանի ֆինանսատնտեսական վիճակի մասին վերլուծություն, ապա պարտապանին լուծարելու մասին որոշման ընդունումից հետո վերջինս դատավորին պետք է ներկայացնի հաշվետվություն յուրաքանչյուր ամիս:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է այն պահանջները, որոնք ներկայացվում են կառավարչի հաշվետվության բովանդակությանը: Կառավարչի հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ՝

- պարտապանի գույքի վաճառքի,
- դրանից առաջացած միջոցների բաշխման,
- պարտատերերի պահանջների բավարարման մասին:

Հոդված 82. Պահանջների բավարարման հերթականությունը

1. Պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- ա) ապահովված պահանջները.
- բ) կառավարչի վարձատրություն և վարչական ծախսերը, այդ թվում՝
 - գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը,
 - վարչական աշխատողների աշխատավարձը,
 - վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը,
 - պարտադիր սոցիալական վճարումները, այդ թվում՝ գործատուի պարտադիր սոցիալական վճարումները.
- գ) դատական ծախսերը.
- դ) ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները՝ կապված պարտապանի գույքի վաճառքի հետ.
- ե) չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով.
- զ) այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով, ինչպես նաև պարտապան քաղաքացու անչափահաս երեխաների համար անհրաժեշտ ծախսերը (ալիմենտները).

է) աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումը առաջացող), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները և սույն հերթի պահանջների բավարարումից առաջացող պարտադիր սոցիալական վճարումները.

ը) չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների, սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նկատմամբ առաջացած պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների.

թ) ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ համաձայն սույն օրենքի 83-րդ հոդվածի.

ժ) պարտապանի հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների պահանջները:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված պարբերական վճարումների կապիտալացման միջոցով իրականացվող վճարումները հաշվարկվում են մինչև քաղաքացու 70 տարեկանը լրանալը, սակայն ոչ պակաս, քան 10 տարվա համար:

Եթե քաղաքացու տարիքը գերազանցում է 70-ը, ապա վճարումների կապիտալացման ժամանակահատվածը կազմում է 10 տարի: Քաղաքացու համաձայնությամբ պարտապանի նկատմամբ նրա՝ կապիտալացված վճարումներով պահանջի իրավունքը կարող է անցնել Հայաստանի Հանրապետությանը: Այդ դեպքում քաղաքացու հանդեպ պարտապանի համապատասխան վճարումներ կատարելու պարտավորությունը, Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

1. Սույն օրենքի առանձնահատկություններից մեկը հանդիսանում է սնանկության գործընթացում պարտապանի առկա ակտիվների բաշխման և պահանջների բավարարման առանձնահատուկ հերթականությունը, որը բխում է սնանկության ինստիտուտի սկզբունքներից և բավարարում է սնանկության վարույթն անխափան իրականացնելու երաշխիքները: Մեկնաբանվող հոդվածով նախատեսված

պահանջների հերթականությունն էականորեն տարբերվում է բնականոն գործունեություն իրականացնող պարտապանի լուծարման ժամանակ պահանջների բավարարման, ինչպես նաև հարկադիր կատարման ընթացքում պարտապանի գույքի վաճառքից առաջացած միջոցների բաշխման հերթականություններից: Պետք է նկատել, որ յուրաքանչյուր սահմանված հերթականություն բնորոշ և հատուկ է այդ իրավահարբերությունները կարգավորող ինստիտուտին: Այսպես, օրինակ՝ բնականոն գործունեություն ծավալող պարտապանի լուծարման ժամանակ, երբ ենթադրվում է, որ բոլոր պահանջները բավարարվելու են, այդ թվում՝ բաժնետերերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է պահանջների բավարարման հինգ հերթ, որտեղ միևնույն առաջնահերթություն ունեցող պահանջները ներառված են տարբեր հերթերում (օրինակ՝ բյուջե կատարվող պարտադիր վճարները սահմանվել է առաջնահերթ, քան այլ կազմակերպությունների պահանջները): Չնայած «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությունը համընկնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պահանջների հերթականությանը, սակայն միևնույն ժամանակ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 70.1-րդ հոդվածը սահմանում է, որ, «Եթե միևնույն պարտապանի գույքի նկատմամբ կան բռնագանձման երկու կամ ավելի դատարանի վճիռներ, ապա պահանջատերերի պահանջները բավարարվում են ըստ կատարողական թերթի ներկայացման հերթականության»: Նշվածից հետևում է, որ միևնույն առաջնահերթություն ունեցող պահանջները բավարարվում են ըստ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամանակագրական հերթականության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասը և 71-րդ հոդվածը սահմանում են, որ պարտապանի գույքի անբավարարության պատճառով հիշատակված պահանջները բավարարելու անհնարինության դեպքում իրավաբանական անձը կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով, իսկ սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը և սնանկության գործընթացին վերաբերող բոլոր իրավահարբերությունները կարգավորվում են այլ օրենքով, իսկ տվյալ դեպքում այդ օրենքը հանդիսանում է «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը, ուստի ներկայացնենք, թե ինչպես է կարգավորվում պարտապանի նկատմամբ տարբեր առաջնահերթություն ունեցող պահանջների հերթականությունը սնանկության գործընթացում անկախ պարտատերերի ունեցած բռնագանձման վերաբերյալ վճիռների և կատարողական վարույթների:

«Ա» հերթում բավարարվում են ապահովված պահանջ ունեցող պարտատերերի պահանջները: Ապահովված են համարվում պարտապանի գրավադրված գույքով (այդ թվում՝ երրորդ անձանց պատկանող) ապահովված պահանջները: Ապահովված պահանջ ունեցող պարտատերը կարող է պահանջել անմիջապես բավարարել իր պահանջները գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից: Ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող չգրավադրված գույքի

իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև գրավադրված գույքի իրացումը: Եթե գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցները գերազանցում են ապահովված պահանջի գումարը, ապա գերազանցող գումարի մասով միջոցները բաշխվում են մեկնաբանվող հողվածով սահմանված հերթականությամբ, իսկ, եթե գրավի առարկան այլ անձի սեփականությունն է, փոխանցվում են այդ անձին (սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-3-րդ մասեր):

«Բ» հերթում բավարարվում են կառավարչի վարձատրության և վարչական ծախսերը, այդ թվում՝ գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը, վարչական աշխատողների աշխատավարձը, վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը, պարտադիր սոցիալական վճարումները, այդ թվում՝ գործատուի պարտադիր սոցիալական վճարումները: Պարտապանի գույքի տնօրինման համար անհրաժեշտ ծախսերն իր մեջ ներառում են նաև այդ գույքի գույքագրման, գնահատման և իրացման հետ կապված ծախսերը:

Մասնկության կառավարիչն ունի վարձատրություն ստանալու իրավունք սույն օրենքով սահմանված կարգով և չափով (սույն օրենքի 32-րդ հոդված): Կառավարչի վարձատրությունը կատարվում է պարտապանի դրամական միջոցներից կամ այլ գույքի իրացումից ստացված դրամական միջոցներից, պարտատերերի կողմից կառավարչի ծախսերի փոխհատուցման նպատակով տրամադրված դրամական միջոցներից կամ դրանց բացակայության դեպքում՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեից: Մասնկության գործով կառավարիչը իր մատուցած ծառայությունների դիմաց ստանում է վարձատրություն, այլ ոչ աշխատավարձ, որն էլ նրա նյութական անկախության հիմքն է պարտապանից, պարտատիրոջից և գործին մասնակցող այլ անձանցից:

«Գ» հերթում հատուցվում են դատական ծախսերը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված՝ փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից: Սակայն այս հերթում չեն կարող ներառվել այն պետական տուրքի վճարումները, որոնք կառավարիչները պարտապանի անունից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարում են ծառայություններ ձեռք բերելիս: Օրինակ՝ հայցադիմումներ ներկայացնելիս, որոնք ընդգրկվում են «Ե» հերթում, կամ գույքի նկատմամբ իրավունքներ գրանցելիս, որոնք ընդգրկվում են «Բ» հերթում:

«Դ» հերթում ընդգրկվում են ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները՝ կապված պարտապանի գույքի վաճառքի հետ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-6-րդ հոդվածների:

«Ե» հերթում բավարարվում են չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով: Գրավով չապահովված բոլոր պահանջները կամ ապահովված պահանջների չապահովված մասերը համարվում են չապահովված պահանջներ:

Այս հերթում ընդգրկվում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտապանի նկատմամբ լուծարելու մասին որոշում կայացնելը պարտապանի ծավալած գործունեությունից առաջացող բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերից բխող, ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ առաջացող պարտավորությունները, ինչպես նաև պարտապանին լուծարելու մասին որոշումից հետո առաջացող ցանկացած պարտավորությունները, այդ թվում՝ գործունեության վերսկսման հետևանքով: Պետք է նկատել, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտապանի նկատմամբ լուծարելու մասին որոշում կայացնելը ընկած ժամանակահատվածում պարտապանի ծավալած գործունեությունից առաջացող վերոնշյալ պահանջները, ինչպես նաև պարտապանին լուծարելու մասին որոշումից հետո առաջացող ցանկացած պարտավորությունները, այդ թվում՝ գործունեության վերսկսման հետևանքով, ներառվում են և բավարարվում են դատավորի հաստատած բաշխման ծրագրով առանց սույն օրենքի 46-րդ հոդվածով նախատեսված կարգով պահանջներ ներկայացնելու: Հիշատակված պահանջներ ունեցող պարտատերերը հանդիսանում են սնանկության վարույթի մասնակիցներ և օգտվում են պարտատիրոջ իրավունքներից սույն օրենքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրինակ՝ այս պարտատերերը ծանուցվում են պարտատերերի ժողովի մասին և մասնակցում են առանց քվեարկության ձայնի իրավունքի, քանի որ վերջիններիս պահանջները հաստատված չեն դատարանի որոշմամբ (սույն օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մաս և 36-րդ հոդվածի 1-ին մաս):

«Զ» հերթում բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար: Այդպիսի պահանջների բավարարումը իրականացվում է դատարանի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու պահին սահմանված համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով:

Նման վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի,

առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու հարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոնները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 2-րդ պարագրաֆով:

Կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար պարտապանի պատասխանատվության չափը և վճարման ենթակա գումարների հաշվարկման կարգը սահմանված է մեկնաբանվող հոդվածով:

Այս վճարումները հաշվարկվում են մինչև քաղաքացու 70 տարեկանը լրանալը, սակայն ոչ պակաս, քան 10 տարվա համար: Եթե քաղաքացու տարիքը գերազանցում է 70-ը, ապա վճարումների կապիտալացման ժամանակահատվածը կազմում է 10 տարի: Քաղաքացու համաձայնությամբ պարտապանի նկատմամբ նրա՝ կապիտալացված վճարումներով պահանջի իրավունքը կարող է անցնել Հայաստանի Հանրապետությանը: Այդ դեպքում քաղաքացու հանդեպ պարտապանի համապատասխան վճարումներ կատարելու պարտավորությունը, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

Մնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունները այս հերթի պարտատերերի հանդեպ համարվում են կատարված կապիտալացված պարբերական վճարումների գումարը քաղաքացու հաշվին փոխանցելուց հետո: Նման պարտավորությունների դադարման անհրաժեշտ պայման է հանդիսանում կապիտալացման մեխանիզմի կիրառմամբ վճարման ենթակա գումարի չափի որոշումը: Եթե պարտապանի դրամական միջոցներն անբավարար են, ապա գումարները բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

Այս հերթի մեջ են մտնում նաև պարտապան քաղաքացու անչափահաս երեխաների համար անհրաժեշտ ծախսերը (ալիմենտները): Մուկույցան

«Է» հերթում բավարարվում են աշխատանքային պայմանագրերից բխող այն պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումը, ինչպես նաև այն պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը ընկած ժամանակահատվածում, իսկ նախորդող 6 ամսից ավելի վաղ (7-րդ, 8-րդ, 9-րդ ... ամիսներ) առաջացած աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են սույն օրենքի 83-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված կարգով՝ որպես ստորադաս չապահովված պահանջներ: «Է» հերթում բավարարման ենթակա պահանջներ են նաև հեղինակային պայմանագրերով վարձատրությունների

վճարումները և սույն հերթի պահանջների բավարարումից առաջացող պարտադիր սոցիալական վճարումները:

«Ը» հերթում բավարարվում են պարտապանի նկատմամբ եղած այն բոլոր չապահովված պահանջները, որոնք չեն համարվում մեկնաբանվող հողվածով նախատեսված մյուս հերթերի պահանջներ, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների, սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նկատմամբ առաջացած պարտավորությունները՝ բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների: Օրինակ՝ պարտապանի հետ տնտեսական հարաբերություններում գտնվող ցանկացած անձի պահանջները:

«Թ» հերթում բավարարվում են ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ համաձայն սույն օրենքի 83-րդ հոդվածի (տես՝ սույն օրենքի 83-րդ հոդվածի մեկնաբանությունները):

«Ժ» հերթում բավարարվում են պարտապանի հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների պահանջները: Այս հերթի պահանջները ըստ էության պարտապանի կանոնադրական կապիտալը ձևավորած անձանց՝ հիմնադիրների ներդրումներն են, որոնք պարտապանի բնականոն գործունեության ծավալման դեպքում հանդիսանում է պարտապանի սեփականությունը և չեն վերադարձվում, սակայն պարտապանի լուծարման կամ սնանկության հետևանքով լուծարման ժամանակ դրանք դառնում են պահանջներ և պարտապանի ակտիվների բավարար լինելու դեպքում ենթակա են վերադարձման իրենց ունեցած տոկոսային չափաբաժիններով:

Մեկնաբանվող հողվածով նախատեսված պահանջները և պահանջ չհանդիսացող վճարման ենթակա գումարները բաշխվում են սույն օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված դատավորի հաստատած բաշխման ծրագրերով: Պարտատիրոջ արտարժույթով արտահայտված պարտավորությունները դրանք բավարարելու ժամանակ վճարվում են ՀՀ դրամով՝ բավարարման պահին գործող ՀՀ կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով (ՀՀ ՔՕ հոդված 142):

Հոդված 83. Ստորադաս չապահովված պահանջները

Ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվում են՝

ա) պարտապան-իրավաբանական անձին իր հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների կողմից

տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած պահանջները.

բ) պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջները.

գ) աշխատավարձի գծով այլ պահանջներ.

դ) սույն օրենքի 82-րդ և 83-րդ հոդվածներով չնախատեսված այլ պահանջներ:

Ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվում են՝ պարտապան-իրավաբանական անձին իր հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների կողմից տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած պահանջները:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի համաձայն. «Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառվում են հետևյալ տեղեկությունները.

ը) հիմնադիրների (մասնակիցների, անդամների, գործընկերների, բաժնետերերի) կազմը... »:

Հիշյալ դրույթից բխում է, որ մասնակիցները, անդամները, գործընկերները և բաժնետերերը տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերությունների և ընկերակցությունների հիմնադիրներն են և ոչ թե տվյալ կազմակերպության հետ ձեռնարկատիրական հարաբերությունների մեջ մտած կազմակերպություններ, որոնց պահանջները չեն համարվում մեկնաբանվող հոդվածով նախատեսված խմբի (ստորադաս չապահովված) պահանջներ: Նման պահանջներն օրենքով սահմանված ժամկետում դատարան ներկայացնելու դեպքում բավարարվում են սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «Ը» հերթում:

Ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվող հաջորդ պահանջների տեսակը, դա պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջներն են: Մեկնաբանվող հոդվածի նման կարգավորումից հետևում է, որ մինչև տասը տարի ժամկետով տեղաբաշխված պարտատոմսերով պահանջները բավարարվում են սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «Ը» հերթում:

Ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվող հաջորդ պահանջները, դա պարտապանի հետ աշխատանքային պայմանագրերից բխող աշխատավարձի գծով այլ պահանջներն են, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամսից ավելի վաղ՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ և ավելի ամիսների ընթացքում:

Մեկնաբանվող հոդվածով նախատեսված ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվող վերջին պահանջները, դրանք սնանկության մասին օրենքի 82-րդ և 83-րդ հոդվածներով չնախատեսված այլ պահանջներն են:

Հոդված 84. Պահանջների բավարարման կարգը

1. Պարտապանի դրամական միջոցներն անբավարար լինելու դեպքում համապատասխան հերթի պարտատերերի միջև դրանք բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

2. Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

1-2. Պարտատերերի պահանջները բավարարվում են սույն օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված հերթականությամբ: Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Այն դեպքում, երբ հիշատակված հոդվածով նախատեսված յուրաքանչյուր հերթի պահանջներն ամբողջ ծավալով բավարարելու համար պարտապանի դրամական միջոցներն անբավարար են, ապա տվյալ դեպքում դրանք բաշխվում են համապատասխան հերթի պարտատերերի միջև բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

Այսպես, համապատասխան հերթի պարտատերերի միջև բաշխման ենթակա գումարի համասնությունը որոշելու համար կարելի է կիրառել հետևյալ բանաձևը՝

բաշխման ենթակա գումար (Ա)=10 000 ՀՀ դրամ,

թիվ մեկ բավարարման ենթակա պահանջի գումար (Բ)=12 000 ՀՀ դրամ,

թիվ երկու բավարարման ենթակա պահանջի գումար (Գ)=20 000 ՀՀ դրամ,

թիվ երեք բավարարման ենթակա պահանջի գումար (Դ)=18 000 ՀՀ դրամ,

համապատասխան հերթի Բ+Գ+Դ պահանջները միասին (Ե)=50 000 ՀՀ դրամ:

Պահանջների բավարարման համամասնությունը որոշելու համար պետք է ստանալ դրա գործակիցը (Զ)՝ $Ա : Ե (10 000 : 50 000)=0,2$:

Համամասնորեն վճարման ենթակա գումարները ստանալու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բավարարման ենթակա գումարը բաղմապատկել համամասնության գործակցով՝

$Բ*Զ (12 000*0,2)=2400$ (համամասնորեն վճարման ենթակա գումար)

Գ*Զ (20 000*0,2)=4000 (համամասնորեն վճարման ենթակա գումար)

Դ*Զ (18 000*0,2)=3600 (համամասնորեն վճարման ենթակա գումար):

2400+4000+3600=10 000 ՀՀ դրամ:

Հոդված 85. Սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջների բավարարումը

1. Սույն օրենքով սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները դատավորի որոշմամբ կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող խմբում:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջներն ստորադաս չապահովված բոլոր պահանջների բավարարումից հետո ներկայացնելու դեպքում բավարարման ենթակա չեն:

Սույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայտարարությունը մամուլում հրապարակվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Սույն օրենքով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն սույն օրենքի 42-րդ հոդվածի կարգով հաշվառում և ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ սույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան: Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատավորին, պարտապանին եւ բոլոր պարտատերերին: Նախնական ցուցակն ստանալուց հետո դատավորը, սույն օրենքի 46-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում, հրավիրում է դատական նիստ՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար: Նիստում նախնական ցուցակի վերաբերյալ դատավորը որոշում է կայացնում պարտատերերի պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ):

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է պարտատերերի պահանջների ցուցակը դատավորի կողմից հաստատելուց հետո դատարան ներկայացված պահանջների ձակատագիրը: Այն է՝ սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջները

համարվում են ստորադաս չապահովված պահանջներ և կարող են բավարարվել սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետով նախատեսված հերթում:

Օրենսդրի նման սահմանմամբ հետևում է, որ սույն օրենքով սահմանված ժամկետում դատարան չներկայացված գրավով ապահովված պահանջները նույնպես համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Սակայն, նման կարգավարումն անընդունելի է, քանի որ գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներով բավարարվում են միայն այդ գրավադրված գույքով ապահովված պահանջները (սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մաս): Միայն գրավադրված գույքի վաճառքից առաջացած միջոցների հետևանքով ապահովված պարտատիրոջ պահանջի չբավարարված մասը կարող է համարվել մեկնաբանվող հոդվածով սահմանված ստորադաս չապահովված պահանջ (սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սույն օրենքով պահանջ ներկայացնելու ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում այդ պարտատիրոջ պատճառաբանված դիմումի հիման վրա դատավորը, ՀՀ ՔԴՕ 77-րդ հոդվածով սահմանված կարգով, առանց դատական նիստ հրավիրելու, որոշում է կայացնում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու կամ պատճառաբանությունները հիմնավորված չլինելու դեպքում՝ դիմումը մերժելու մասին: Սույն որոշմամբ դատավորը լուծում է միայն բաց թողնված դատավարական ժամկետի վերականգման հարցը: Իսկ պահանջի առաջնահերթությունը և ապահովվածությունը, ինչպես նաև դրանց չափը հաշվարկում է կառավարիչը (սույն օրենքի 42-րդ հոդված):

Եթե մեկնաբանվող հոդվածով նախատեսված պահանջները (օրենքով սահմանված ժամկետում դատարան չներկայացրած պահանջներ) դատարան են ներկայացվում ստորադաս չապահովված բոլոր պահանջների բավարարումից հետո, ապա դրանք պարտատերերի պահանջների ցուցակում այլևս չեն ընդգրկվում և բավարարման ենթակա չեն:

Հոդված 86. Պահուստավորվող գումարները

Դատավորի որոշմամբ կարող են միջոցներ պահուստավորվել չապահովված պահանջների դիմաց բաշխման ենթակա միջոցների 5 տոկոսը չգերազանցող գումարի չափով: Նշված պահուստավորված միջոցներից կարող են բավարարվել՝

ա) պարտատերերի այն պահանջները, որոնք վիճարկելի են և դատավորի կողմից դեռ չեն հաստատվել.

բ) գույքի պահպանման հետ կապված հետագա ծախսերի փոխհատուցման համար անհրաժեշտ գումարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սնանկության գործընթացում պարտապանի ակտիվները կարող են բաշխվել վարույթի ցանկացած փուլում, ուստի մեկնաբանվող հոդվածը վիճարկելի պահանջներ ունեցող պարտատերերի շահերի պաշտպանությունից ելնելով, ինչպես նաև պարտապանի մնացորդային գույքի հետագա պահպանման ծախսերի փոխհատուցման համար նախատեսել է միջոցների պահուստավորում: Այդ միջոցները կարող են պահուստավորվել դատավորի որոշմամբ չապահովված պահանջների դիմաց բաշխման ենթակա միջոցների 5 տոկոսը չգերազանցող գումարի չափով:

Պահուստավորվող միջոցները նպատակ ունեն ապահովել պարտատերերի՝ դատավորի կողմից դեռ չհաստատված և վիճարկելի պահանջների բավարարումը, ինչպես նաև պարտապանի գույքի պահպանման հետ կապված հետագա ծախսերի համար անհրաժեշտ գումարների փոխհատուցումը: Պահուստավորվող գումարները նույնպես բաշխվում են սույն օրենքի 81-82-րդ հոդվածներով նախատեսված դատավորի հաստատված բաշխման ծրագրերով:

ԳԼՈՒԽ 10.

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ԱՎԱՐՏԸ

Հոդված 87. Սնանկության գործի ավարտը պարտապանի լուծարումով

1. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո կառավարիչը դատավորին է ներկայացնում լուծարման հաշվեկշիռը և վերջնական հաշվետվությունը:

2. Դատարան ներկայացվող պարտապանի լուծարման հաշվեկշռին կցվում են՝

ա) պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը.

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքագրման, և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ:

3. Լուծարման հաշվեկշիռը և վերջնական հաշվետվությունը դատավորին ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ դրանց՝ իր մոտ դեպոնացված օրինակին:

4. Դատավորը՝ լուծարման հաշվեկշիռը ստանալուց ոչ ուշ, քան 15 և ոչ շուտ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին:

Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը:

Որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

5. Դատավորը, հաստատելով լուծարման հաշվեկշիռը՝ վճիռ է կայացնում պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին: Հակառակ դեպքում դատավորը մերժում է լուծարման հաշվեկշիռի հաստատումը և գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները:

6. Եթե ֆինանսական առողջացման ծրագիրն ավարտվել է պարտապանի լուծարմամբ, ապա այն ավարտվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

1.-3.Սնանկության մասին գործի ավարտը սնանկության վարույթի ամենակարևոր փուլերից մեկն է, նկատի ունենալով, որ վերջինս հանդիսանում է սնանկության վարույթի վերջնագիծը: Մեկնաբանվող հոդվածը սահմանում է սնանկության գործի ավարտման կարգը պարտապանի լուծարումով: Մեկնաբանվող հոդվածը սահմանում է, որ կառավարիչը իր վերջնական հաշվետվությունը և լուծարման հաշվեկշիռը պարտավոր է դատավորին ներկայացնել պարտատերերի պահանջները բավարարելուց հետո 15 օրվա ընթացքում, սակայն այն չի կարգավորում պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելու ժամկետը: Նման ձևակերպումը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ սնանկության վարույթում պարտատերերի պահանջները բավարարվում են սնանկության ցանկացած փուլում (հոդված՝ 81), հետևաբար, պարտատերերի հետ հաշվարկների ավարտի կանխատեսում չի կարող լինել: Կառավարիչները, դեկավարվելով մեկնաբանվող մասով, պետք է վերջնական հաշվետվության ներկայացման ժամկետի սկիզբ համարեն այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրը, երբ դատավորի հաստատած բաշխման ծրագրով բաշխվում են պարտապանի վերջին դրամական միջոցները («Իրավական ակտերի

մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մաս): Այսպիսով, պարտատերերի հետ հաշվարկները վերջնականապես ավարտելու հաջորդ օրվանից տասնհինգ օրվա ընթացքում կառավարիչը դատավորին է ներկայացնում լուծարման հաշվեկշիռն ու վերջնական հաշվետվությունը: Կառավարչի վերջնական հաշվետվությունը բովանդակային առումով տարբերվում է այն հաշվետվությունից, որը կառավարիչը դատարան է ներկայացնում պարտապանի վճարունակության վերականգնման արդյունքում սնանկության գործն ավարտելու մասին միջնորդությամբ՝ սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասով, 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված կարգով դատարան դիմելիս: Առաջին հայացքից կառավարչի վերջնական հաշվետվության բովանդակությունը լայն պահանջներ օրենսդրի կողմից սահմանված չեն, քանի որ օրենսդիրը ընդամենը երկու պայման է սահմանել, այն է՝ հաշվետվությունը պետք է պարունակի պարտապանի ակտիվների հավաքագրման մասին ամփոփ տեղեկատվություն և հիմնավորված միջնորդություն անվճարունակության գործն ավարտելու մասին: Օրենսդրի այս երկու սահմանումները բավականին լայն են և որպեսզի կառավարչի գործն ավարտելու մասին միջնորդությունը դատավորի կողմից հիմնավոր գնահատվի, ապա կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի՝

- սնանկության վարույթում պարտապանի միջոցների հավաքագրման ուղղությամբ կառավարչի կատարած գործողությունների նկարագիրը և

այդ գործողությունների արդյունքները,

- հավաքագրված միջոցների, պարտապանի գույքի տնօրինման վերաբերյալ տեղեկությունները,

- պարտապանի միջոցների բաշխման նկարագիրը, ներառյալ տեղեկատվություն պարտատերերի պահանջների բավարարված լինելու կամ բավարարված չլինելու մասին, դրանց պատճառների և չբավարարված չափերի մասին նշումով,

- առկայության դեպքում պարտապանի չիրացված գույքի մասին տեղեկությունը (նկարագիրը, վերջին աճուրդի մեկնարկային գինը),

- միջնորդություն՝ վերջնական հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին:

Հաշվետվության հետ միասին կառավարիչը դատարան է ներկայացնում նաև պարտապանի լուծարման հաշվեկշիռը, որին կցվում են՝

- պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը, օրինակ՝ առուվաճառքի պայմանագրերը, աճուրդի մասնակցության վերաբերյալ գնորդների ներկայացրած հայտերը, կայացած աճուրդների մասին կազմված արձանագրությունները (արձանագրությունները), դրա արդյունքում կնքված պայմանագիրը (պայմանագրերը) և գնորդի կողմից կատարած վճարումները հավաստող հաշվապահական փաստաթուղթը (փաստաթուղթերը)՝ անդորրագիրը (անդորրագրերը),

- պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջների չափը: Կառավարչի կողմից վարվող պարտատերերի պահանջների գրանցամատյանը սույն օրենքով սահմանված փաստաթուղթ է որտեղ հաշվառվում և հաշվարկվում է պարտապանի նկատմամբ ներկայացված բոլոր պահանջների չափերը և առաջնահերթությունը, պարունակում է նշում բավարարված կամ չբավարարված պահանջների գումարների չափերի մասին (սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս «է») ենթակետ և 42-րդ հոդված:

- պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը: Պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը դրանք պարտապանի պահանջի գումարի վճարումները հավաստող հաշվապահական փաստաթուղթն (փաստաթուղթերն) են՝ անդորրագիրը (անդորրագրերը):

Ցանկացած պարտատեր իրավունք ունի նախապես ծանոթանալ վերջնական հաշվեկշիռին և հաշվետվությանը: Նշված փաստաթղթերը ծանոթացման տրամադրելու և այդ մասին իրազեկելու պարտականությունը դրված է կառավարչի վրա: Վերջնական հաշվետվությունը և լուծարման հաշվեկշիռը դատավորին ներկայացնելու մասին կառավարիչը ծանուցում է բոլոր պարտատերերին՝ առաջարկելով տասնօրյա ժամկետում ծանոթանալ այդ փաստաթղթերի՝ իր մոտ դեպոնացված օրինակին: Այդ փաստաթղթերին ծանոթանալու կարգը՝ ժամանակը, տեղը և այլն, որոշվում է կառավարչի կողմից, որի մասին նշում է արվում ծանուցման մեջ:

4. Կառավարչի ներկայացրած հաշվետվությունը քննվում է դատական նիստի ժամանակ: Դատավորը վերջնական հաշվետվությունը և լուծարման հաշվեկշիռը ստանալուց ոչ ուշ, քան 15 և ոչ շուտ, քան 10 օրվա ընթացքում նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ ծանուցելով կառավարչին և պարտատերերին: Մեկնաբանվող մասի նման կարգավորումը հնարավորություն է տալիս պարտատերերին ծանոթանալու կառավարչի վերջնական հաշվետվությանը և լուծարման հաշվեկշիռին և առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնել դատարան: Ընդ որում նման առարկությունները պարտատերերը կարող են ներկայացնել մինչև դատական նիստը: Պարտատերերի առարկությունները հնարավորության դեպքում ուղարկվում են կառավարչին և պարտապանին:

Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը: Որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ դատական նիստի անցկացման համար:

Հրավիրված դատական նիստում դատավորը քննության է առնում և գնահատում է կառավարչի վերջնական հաշվետվության հիմնավորվածությունը, իսկ

առարկությունների առկայության դեպքում քննում է նաև այդ առարկությունները: Քննության արդյունքներով դատավորը մի դեպքում կայացնում է վճիռ՝ լուծարման հաշվեկշիռը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին: Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակվելուց տասնհինգ օր հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 221.4 և 221.6, 1-ին մաս): Մյուս դեպքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը, դատավորը կայացնում է որոշում՝ լուծարման հաշվեկշռի հաստատումը և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին կառավարչի միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով մերժման պատճառները: Այս որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն:

Հոդված 88. Կառավարչի պարտականությունները պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտվելու դեպքում

1. Կառավարիչը պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճռի կայացումից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում պարտապանի՝ օրենքով և այլ իրավական ակտերով պահպանման ենթակա արխիվային փաստաթղթերը հանձնում է Հայաստանի Հանրապետության պետական արխիվ, սահմանված կարգով հանձնում է պարտապանի կնիքը և իրականացնում է օրենքով սահմանված բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար:

2. Պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար կառավարիչը պետական գրանցումն իրականացնող մարմնին է ներկայացնում՝

ա) դիմում.

բ) պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի պատճենը.

գ) կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթը.

դ) պետական գրանցման վկայականը:

3. Կառավարիչը գույքային պատասխանատվություն է կրում սույն հոդվածի 2-րդ մասում նշված պարտականությունները չկատարելու հետևանքով երրորդ անձանց պատճառած վնասի համար:

4. Իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնում պարտապան - իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան - անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման գրանցման պահից դադարեցվում են կառավարչի՝ սույն օրենքով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

1.-2. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է կառավարիչի այն հիմնական պարտականությունները, որոնք պետք է կառավարիչը կատարի պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին վճռի կայացումից հետո: Ընդ որում օրենսդիրը նման պարտականության կատարման համար սահմանել է ժամկետ: Այսպես կառավարիչը վերը նշված վճռի կայացումից հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում՝

- պարտապանի՝ օրենքով և այլ իրավական ակտերով պահպանման ենթակա արխիվային փաստաթղթերը հանձնում է Հայաստանի Հանրապետության պետական արխիվ: Օրենքով և այլ իրավական ակտերով պահպանման

ենթակա արխիվային փաստաթղթերը առանձնացնելու և պետական կամ համայնքային արխիվ հանձնելու կառավարչի պարտականությունը սահմանված է նաև »Արխիվային գործի մասին« ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասով: Սակայն պետք է նկատել, որ կարող են լինել այնպիսի դեպքեր երբ պարտապանը չունենա փաստաթղթեր արխիվ հանձնելու համար: Այդ դեպքում կառավարիչը պետական պարտապանի սնանկության հետևանքով լուծարման պետական գրանցման ժամանակ պետք է պետական լիազոր մարմնին ներկայացնի այդ փաստաթղթերի բացակայության մասին փաստաթուղթ (Օրինակ՝ դատարանի կողմից պարտապանի փաստաթղթերի հետախուզում հայտարարված լինելու դեպքում՝ դատական ակտերի հարկադիր կատարողի որոշումը՝ փաստաթղթերի չհայտնաբերման պատճառով կատարողական վարույթն ավարտելու մասին, փաստաթղթերը հրդեհված լինելու դեպքում՝ լիազոր մարմնի նման փաստը հավաստող փաստաթուղթը, փաստաթղթերը կորսված լինելու դեպքերում դրա մասին համապատասխան պետական լիազոր մարմնում կամ պաշտոնական մամուլում հայտարարությունը և այլն):

- սահմանված կարգով հանձնում է պարտապանի կնիքը: Կառավարիչը պարտապանի կնիքը հանձնում է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՀՀ տարածքում գործածվող կնիքներ տրամադրվող և շրջանառությունից հանված կնիքները ստանալու լիազոր մարմնին, ստանալով նրանից կնիքը հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթ: Սակայն պետք է նկատել, որ հնարավոր են դեպքեր երբ

պարտապանի կնիքը կորսված լինել: Նման դեպքում կառավարիչը պարտապանի սնանկության հետևանքով լուծարման պետական գրանցման ժամանակ պետք է պետական լիազոր մարմնին ներկայացնի կնիքի բացակայությունը հավաստող փաստաթուղթ (Օրինակ՝ դատարանի կողմից պարտապանի կնիքի հետախուզում հայտարարված լինելու դեպքում՝ դատական ակտերի հարկադիր կատարողի որոշումը՝ կնիքը չհայտնաբերելու պատճառով կատարողական վարույթն ավարտելու մասին, կնիքի կորստյան դեպքում այդ մասին համապատասխան պետական լիազոր մարմնում կամ պաշտոնական մամուլում հայտարարությունը և այլն):

- իրականացնում է օրենքով սահմանված բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար: Մեկնաբանվող հոդվածը սահմանել է այն փաստաթղթերի ցանկը որոնք կառավարիչը պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնին է ներկայացնում պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար՝

ա) դիմում.

բ) պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի պատճենը.

գ) կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթը.

դ) պետական գրանցման վկայականը: Կառավարչի կողմից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի ցանկին անդրադառնում է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, համաձայն որի սնանկության հետևանքով լուծարված իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար ներկայացվում են՝

- դիմում՝ պետական գրանցում կատարելու մասին,
- կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ,
- պետական գրանցման վկայականը,
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարման մասին կառավարչի կազմված տեղեկանքը,

- դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Մնանկ ճանաչված անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար ներկայացվում են՝

- դիմում՝ պետական գրանցում կատարելու մասին,
- կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ,
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարման մասին կառավարչի կազմված տեղեկանքը,

- դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

3. Մեկնաբանվող մասով սահմանված է կառավարչի գույքային պատասխանատվությունը պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար պետական գրանցումն իրականացնող մարմնին մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերի հանձնման պարտականությունները չկատարելու հետևանքով երրորդ անձանց պատճառած վնասի համար: Օրենսդրի նման սահմանումը կոչված է կառավարչի կողմից իր այս պարտականությունների կատարման (գործողության) կամ չկատարման (անգործության) ժամանակ երրորդ անձանց պաշտպանելու հնարավոր վնասներից:

4. Մեկնաբանվող մասը սահմանում է կառավարչի սույն օրենքով սահմանված բոլոր իրավունքների ու պարտականությունների դադարման պահը: Մասնավորապես, այդպիսի հիմք է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնում պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման գրանցման պահը: «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարած), այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից: Նման գրառման մասին տրվում է հաստատված ձևի տեղեկանք: Հետևաբար, կառավարչի բոլոր իրավունքների ու պարտականությունների դադարման համար հիմք կարող է լինել հաստատված ձևի տեղեկանքը ստանալու և այն դատարան ներկայացնելու փաստը:

Հոդված 89. Սնանկության վերաբերյալ գործի ավարտը պարտատերերի

կողմից պահանջներից հրաժարվելու դեպքում

Սնանկության գործի ցանկացած փուլում կառավարչի միջնորդության հիման վրա գործը կարող է ավարտվել, եթե պարտատերերը հրաժարվել են իրենց պահանջներից, որի արդյունքում պարտավորությունների չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից:

Կառավարչի հաշվետվությունը և վերջնական հաշվեկշիռը քննարկվում և դատավորի կողմից վճիռ է կայացվում սույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով:

Սույն օրենքի համաձայն սնանկության գործը կարող է ավարտվել, երբ պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում բավարարվում են պարտատերերի բոլոր պահանջները, վերականգնվում է պարտապանի վճարունակությունը ֆինանսական առողջացման ծրագրի արդյունքում, այսինքն մինչև

Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտը պարտատերերի պահանջների բավարարման դեպքում և այլն:

Մեկնաբանվող հոդվածը նախատեսում է սնանկության գործի ավարտի մեկ հիմք ևս՝ գործը կարող է ավարտվել, եթե պարտատերերը հրաժարվել են իրենց պահանջներից, որի արդյունքում պարտավորությունների չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից: Նման դեպքեր կարող են լինել երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 404-րդ հոդվածով սահմանված կարգով պարտատիրոջ համաձայնությամբ պարտապանը իր պարտքը փոխանցում է այլ անձի և պարտատերը հրաժարվում է իր պահանջից պարտապանի նկատմամբ, պարտքի ներման և այլ դեպքերը:

Այսպիսի պայմաններում կառավարիչը միջնորդություն է ներկայացնում դատարան:

Պարտատիրոջ պահանջից հրաժարման դեպք կարող է հանդիսանալ նաև սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ժամկետում պահանջի չներկայացումը: Սակայն վերջինս միանշանակ գնահատվել չի կարող, քանի որ պարտատերը սույն օրենքի 85-րդ հոդվածով սահմանված կարգով կարող է իր պահանջը ներկայացնել օրենքով նախատեսված ժամկետից ուշ, կրելով միայն այդ պահանջի ուշ ներկայացնելու արդյունքում պահանջի բավարարման առաջնահերթության ռիսկը: Հետևաբար, երբ պարտապանի հաշվապահական փաստաթղթերում առկա է պարտատեր կառավարիչը այլ պահանջներ չունենալու կամ պահանջների (պահանջի) չափը նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից պակաս լինելու դեպքում, պետք է իրականացնի օրենսդրությամբ թույլատրելի բոլոր միջոցառումները նման պարտատիրոջը հայտնաբերելու համար: Միայն այդպիսի պարտատիրոջը պարտապանին սնանկ ճանաչելու մասին պատշաճ ծանուցումը՝ պարտապանին իր իրավունքից օգտվելու մասին նշումով, ապահովելու պարագայում այդ պարտատիրոջ կողմից պահանջ չներկայացնելու դեպքում կառավարիչը կարող է մեկնաբանվող հոդվածով նախատեսված միջնորդություն ներկայացնել դատարան:

Կառավարչի հաշվետվությունը և վերջնական հաշվեկշիռը քննարկվում և դատավորի կողմից վճիռ է կայացվում սույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով (տես՝ սույն օրենքի 74-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Հոդված 90. Սնանկության վերաբերյալ գործի ավարտի հետևանքները

1. Պարտապան-իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը՝ դադարած սույն օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված պետական գրանցման պահից:

2. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասով, 69-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված

դեպքերում սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը:

Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կասեցումները: Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Պարտապանը չի կարող ազատ ճանաչվել՝

ա) ալիմենտների վճարումից.

բ) անօրինական ճանապարհով ձեռք բերված գույքի նկատմամբ պարտատերերի պահանջներից.

գ) սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային և սոցիալական ապահովության պետական հիմնադրամի մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից.

դ) կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից:

4. Սնանկության վերաբերյալ գործն ավարտելու վերաբերյալ դատավորի վճիռը կարող է բողոքարկվել:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է սնանկության վերաբերյալ գործի ավարտի հետևանքները:

Պարտապան-իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը՝ դադարած սնանկության մասին օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված պետական գրանցման պահից: «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարած), այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից: Նման գրառման մասին տրվում է հաստատված ձևի տեղեկանք:

Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը, երբ վճիռ է կայացվել սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին սնանկության մասին օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում՝

. մինչև ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտը պարտատերերի պահանջները բավարարվել են.

. ֆինանսական առողջացման ծրագրի կատարման արդյունքում պարտատերերի պահանջները բավարարվել են.

. պարտապանի գործունեության վերսկսման արդյունքում պարտատերերի պահանջները բավարարվել են.

. պարտատերերը հրաժարվել են իրենց պահանջներից, որի արդյունքում պարտավորությունների չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից:

Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալին տիրապետող անձանց եւ պարտապանի ղեկավարի լիազորությունների նկատմամբ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կիրառված կասեցումները:

Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից՝ բացառությամբ մեկնաբանվող հողվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Մասնավորապես պարտապանը չի կարող ազատ ճանաչվել՝

ա) ալիմենտների վճարումից.

բ) անօրինական ճանապարհով ձեռք բերված գույքի նկատմամբ պարտատերերի պահանջներից.

գ) սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից.

դ) կյանքին և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից:

Օրենքի նման կարգավորումից կարելի է հետևություն անել, որ անհատ ձեռնարկատեր-պարտապանը չի կարող ազատ ճանաչվել նշված պարտավորություններից, քանի որ նա կրում է անձնական գույքային պատասխանատվություն: Այլ է պատկերը իրավաբանական անձ-պարտապանի լուծարման հետևանքով գործի ավարտման դեպքերում: Այսպես, ինչպես վերը նշվեց իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Այս պարագայում բացառվում են պարտապան-իրավաբանական անձի որևէ պարտավորությունից ազատված չլինելու դեպքերը, քանի որ նույնիսկ նման անձանց դեմ հայցադիմում ներկայացման դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն դատարանի կողմից հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման:

Մասնկության վերաբերյալ գործն ավարտելու վերաբերյալ դատավորի վճիռը կարող է բողոքարկվել:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67 հոդվածի իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Պարտապանին լուծարելու մասին որոշման մեկ օրինակը դատավորն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ համապատասխան գրառում կատարելու համար: Կառավարիչը պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման պետական գրանցման համար պետական գրանցումն իրականացնող մարմնին է ներկայացնում՝ դիմում, պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի պատճենը, կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթը, պետական գրանցման վկայականը:

Պարտապանի լուծարման մասին տնտեսական դատարանի որոշումը հիմք է հանդիսանում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի համար համապատասխան գրառում կատարելու իրավաբանական անձանց

պետական գրանցամատյանում: Իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

ԳԼՈՒԽ 11.

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 91. Լուծարվող պարտապանի սնանկությունը

Եթե լուծարվող իրավաբանական անձ-պարտապանի գույքի արժեքը բավարար չէ պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա իրավաբանական անձը լուծարվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Իրավաբանական անձանց լուծարումը տեղի է ունենում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-70-րդ հոդվածներով սահմանված կարգով: Իրավաբանական անձի լուծարման սկիզբ է հանդիսանում նրա հիմնադիրների կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի ընդունած որոշումը լուծարման մասին: Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որից հետո նշանակում են լուծարման հանձնաժողով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

Սնանկության ընթացակարգերը կիրառվում են ոչ միայն այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք ծավալում են բնականոն գործունեություն,

սակայն չունեն հնարավորություն վերականգնել իրենց գույքային և հիմնականում ֆինանսական վիճակը, այլև նրանց նկատմամբ, ովքեր իրենց նախաձեռնությամբ որոշել են դադարեցնել իրենց գործունեությունը (լուծարվել), սակայն լուծարման գործընթացում պարզվում է, որ ունեցած ակտիվները չեն բավարարում բոլոր պարտավորությունները մարելու

համար: Այս դեպքերում ինչպես սույն օրենքի մեկնաբանվող հոդվածը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (հոդված 67, 4-րդ և 5-րդ մասեր) սահմանում են, որ պարտապանը կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով՝ մեկնաբանվող օրենքով սահմանված կարգով: Վերջիններիս մեկնաբանվող հոդվածը անվանում է լուծարվող պարտապան, այսինքն իրավաբանական անձ, որը իր քաղաքացիաիրավական պարտավորությունների կամ պարտադիր վճարումների կատարման պարտավորությունները չի կարողանում մարել սեփական գույքի անբավարարության պատճառով: Քանի որ լուծարվող պարտապանը կարող է անցած լինել լուծարման գործընթացի նախնական փուլը (մամուլում լուծարման մասին տեղեկությունների հրապարակում, պարտատերերի հայտնաբերում, գույքագրում և այլն), ուստի նրա նկատմամբ կիրառվում է սնանկության պարզեցված ընթացակարգ՝ նրան քաղաքացիաիրավական շրջանառությունից արագ դուրս բերելու նպատակով:

Հոդված 92. Լուծարվող պարտապանի գործի քննության առանձնահատկությունները

1. Եթե լուծարման հանձնաժողովն իրականացրել է օրենքով սահմանված բոլոր միջոցառումները պարտատերերի հայտնաբերման ուղղությամբ, ապա նրա ներկայացրած պարտատերերի ցուցակը հիմք է դատավորի կողմից պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար:

2. Եթե ապահովված չէ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանը, ապա պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու իրենց պահանջները լուծարվող պարտապանի նկատմամբ՝ լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայտարարության հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

3. Լուծարման հանձնաժողովը չի կարող ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր:

Լուծարվող իրավաբանական անձանց սնանկության գործերը քննվում են սույն օրենքի կանոնների համաձայն՝ մեկնաբանվող հոդվածով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Նշված հոդվածը նախատեսում է պահանջների ներկայացման երկամսյա ժամկետ: Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու ուղղությամբ, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում իրավաբանական անձի լուծարման մասին: Այս գործողությունների արդյունքում լուծարման հանձնաժողովի ներկայացրած պարտատերերի ցուցակը հիմք է դատավորի կողմից պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու համար: Սակայն այն դեպքում, երբ լուծարման հանձնաժողովի կողմից պարտատերերի հայտնաբերման ուղղությամբ օրենքով սահմանված միջոցառումները իրականացված չեն, կամ իրականացված են թերի, ապա սույն օրենքը հնարավորություն է տալիս պարտատիրոջը (պարտատերերին) ներկայացնելու իր (իրենց) պահանջները լուծարվող պարտապանի նկատմամբ: Այն օրը, երբ դատարանը լուծարման հանձնաժողովի ներկայացրած պարտատերերի ցուցակի հաստատումը մերժում է և լուծարվող պարտապանի սնանկության գործը մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի կարգով շարունակվում է սույն օրենքի ընդհանուր կանոններով (սույն օրենքի 46-րդ հոդված), կառավարիչը

ի լրումն պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայտարարությանը, հայտարարություն է հրապարակում մամուլում մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու նրանց իրավունքի մասին նշումով: Մեկնաբանվող հոդվածը նախատեսում է պահանջների ներկայացման մեկամսյա ժամկետ, որը սկսվում է վերոհիշյալ հայտարարության հրապարակման պահից:

Լուծարվող պարտապանի գործի քննության առանձնահատկություններից է նաև այն, որ լուծարման հանձնաժողովը չի կարող ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, քանի որ նրա հիմնադիրների կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի բարձրագույն մարմինը մինչև սնանկության վարույթ սկսելը արդեն որոշում է կայացրել պարտապանին լուծարելու մասին:

Հոդված 93. Լուծարման հանձնաժողովի լիազորությունների դադարումը

Լուծարման հանձնաժողովի լիազորությունները դադարում են լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Լուծարման հանձնաժողովը պարտավոր է սնանկության գործով կառավարչին հանձնել պարտապանի ողջ գույքը, հաշվապահական և այլ փաստաթղթերը և կնիքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով (լուծարող): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն նշանակման պահից լուծարման հանձնաժողովին են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Սա նշանակում է, որ լուծարվող պարտապանի ղեկավարը հանդիսանում է լուծարման հանձնաժողովը (լուծարողը): Հաշվի առնելով այն, որ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանին լուծարելու մասին որոշմամբ պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու բոլոր իրավունքները կասեցվում են, և այն հանգամաքը, որ լուծարվող պարտապանը արդեն իսկ գտնվում է լուծարման գործընթացում, ապա լուծարման հանձնաժողովի լիազորությունները դադարում են լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Լուծարման հանձնաժողովի լիազորությունները լուծարվող պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից անցնում են դատավորի կողմից նշանակված սնանկության գործով կառավարչին: Սնանկության կառավարիչը տնտեսական դատարանի կողմից նշանակվում է սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոններին համապատասխան: Լուծարման հանձնաժողովը պարտավոր է սնանկության գործով կառավարչին հանձնել պարտապանի ողջ գույքը, հաշվապահական և այլ փաստաթղթերն ու կնիքը: Պարտատերերի բոլոր պահանջների, այդ թվում նաև լուծարման հանձնաժողովին ներկայացրած, հաշվառումը և հաշվարկումը կատարվում է սույն օրենքով սահմանված կարգով (տես՝ սույն օրենքի 42-րդ և 46-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Հոդված 94. Բացակայող պարտապանի սնանկությունը

1. Եթե փաստացի իր գործունեությունը դադարեցրած՝ պարտապան-անհատ ձեռնարկատերը կամ պարտապան-իրավաբանական անձի ղեկավարը բացակայում են, և նրանց գտնվելու (բնակության) վայրը բացահայտել հնարավոր չէ (այսուհետ՝ բացակայող պարտապան), ապա նրանց սնանկության վարույթն իրականացվում է սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո դատավորը ծանուցում է բացակայող պարտապանին՝ նրա վերջին հայտնի գտնվելու կամ բնակության վայրի հասցեով: Նշված հասցեով ծանուցումը ֆավարար է գործի վարույթը շարունակելու համար:

3. Դատավորը բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, առանց դատական նիստ հրավիրելու, վճիռ է կայացնում բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին:

4. Բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու օրը դատավորը նշանակում է կառավարիչ և կայացնում է որոշում՝ պարտապանի և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի հետախուզում հայտարարելու մասին:

5. Բացակայող պարտապանի և /կամ/ նրա գույքի հայտնաբերման դեպքում կառավարչի միջնորդությամբ դատավորը կարող է որոշում կայացնել՝ սնանկության պարզեցված ընթացակարգի դադարեցման և սույն օրենքով նախատեսված սնանկության ընդհանուր ընթացակարգերին անցնելու մասին:

Սնանկության պարզեցված ընթացակարգ կիրառվում է նաև բացակայող պարտապանների նկատմամբ: Վերջիններիս թվին օրենսդիրը դասել է այն անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, որոնց վրա տարածվում են սույն հոդվածով սահմանված չափանիշները:

Բացակայող պարտապան-անհատ ձեռնարկատեր ասելով՝ ի նկատի ունենք այն անհատ ձեռնարկատիրոջը, որը փաստացի դադարեցրել է իր ձեռնարկատիրական գործունեությունը, բացակայում է և նրա գտնվելու կամ բնակության վայրը պարզել հնարավոր չէ:

Բացակայող պարտապան-իրավաբանական անձ ասելով՝ հասկանում ենք այնպիսի իրավաբանական անձ, որը փաստացի դադարեցրել է իր ձեռնարկատիրական գործունեությունը, և որի ղեկավարը բացակայում է և նրա գտնվելու կամ բնակության վայրը պարզել հնարավոր չէ:

«Բացակայող պարտապան» հասկացությունը, որն օգտագործվում է սնանկության մասին օրենքում, տարբեր է և ընդհանուր ոչինչ չունի քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու ինստիտուտի հետ (ՀՀ ՔՕ 44-46-րդ հոդվածներ):

Բացակայող պարտապանի սնանկության վարույթն իրականացվում է սույն օրենքի կանոններին համաձայն՝ մեկնաբանվող հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացրած անձը, բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումին պետք է կցի մեկնաբանվող հոդվածով սահմանված չափանիշները հավաստող փաստաթղթեր, այդ թվում՝ պարտապանի բացակայության հատկանիշների առկայությունը հավաստող: Մասնավորապես՝ հարկային պետական ծառայությունից անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից իրենց գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկություններ, փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձի ղեկավարը բացակայում են և նրանց բնակության կամ գտնվելու վայրը հայտնի չէ և այլն:

Բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո դատավորը ծանուցում է բացակայող պարտապանին՝ նրա վերջին հայտնի գտնվելու կամ բնակության վայրի հասցեով: Նշված հասցեով ծանուցումը բավարար է գործի վարույթը շարունակելու համար:

Բացառված չեն այն դեպքերը, երբ դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու մասին հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո պարզում է, որ պարտապան-անհատ ձեռնարկատերը կամ պարտապան-իրավաբանական անձի ղեկավարը բացակայում են իրենց բնակության կամ գտնվելու վայրից: Այս դեպքում դատավորը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր և հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ դատավորի որոշմամբ նշանակված ժամանակավոր կառավարչի կողմից ձեռնարկված միջոցառումները պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ կամ պարտապան-իրավաբանական անձի ղեկավարին հայտնաբերելու ուղղությամբ արդյունք չեն տվել և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով (այն է՝ դատարանը դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով հայտարարում է պատասխանողի և (կամ) նրա գույքի հետախուզում), որոշում է կայացնում պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ կամ պարտապան-իրավաբանական անձի ղեկավարի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին: Այս դեպքում

դատավորը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով (Դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ) որոշում է կայացնում նաև գործի վարույթը կասեցնելու մասին, մինչև պարտապան-անհատ ձեռնարկատիրոջը կամ պարտապան-իրավաբանական անձի ղեկավարին հայտնաբերելը: Նույնիսկ հետախուզման բացասական արդյունքների դեպքում դատավորը, ղեկավարվելով մեկնաբանվող հոդվածով, վերսկսում է գործի վարույթը և վերջինիս ճանաչում է սնանկ՝ պատասխանողին տալով բացակայող պարտապանի կարգավիճակ: Այնուհետև, սնանկության վարույթը շարունակվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ մեկնաբանվող հոդվածով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Դատավորը բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացնում է բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո կամ հետախուզման մասին հարկադիր կատարողի որոշման հիման վրա գործի վարույթը վերսկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու: Բացակայող պարտապանին սնանկ ճանաչելուց հետո դատավորը նշանակում է հիմնական կառավարիչ և կայացնում է որոշում՝ պարտապանի և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի հետախուզում հայտարարելու մասին: Բացակայող պարտապանի գործով սնանկության կառավարիչը դատարանի կողմից նշանակվում է սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոններին համապատասխան:

Այն դեպքում, երբ հայտնաբերվում են բացակայող պարտապանը և /կամ/ նրա գույքը, կառավարիչը այդ մասին միջնորդություն է ներկայացնում դատարան, որի հիման վրա դատավորը կարող է որոշում կայացնել սնանկության պարզեցված ընթացակարգի դադարեցման և սույն օրենքով նախատեսված սնանկության ընդհանուր ընթացակարգերին անցնելու մասին:

Հոդված 95. Վերագրանցում չանցած իրավաբանական անձանց սնանկության առանձնահատկությունները

Իրավաբանական անձինք, որոնք օրենսդրության պահանջներին համապատասխան չեն անցել վերագրանցում և որոնց վերագրանցման ժամկետը լրացել է սնանկության վերաբերյալ գործը հարուցելու պահին, ենթակա չեն ֆինանսական առողջացման և պետք է լուծարվեն սույն օրենքի 94-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.05.1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու կապակցությամբ, Ազգային ժողովը 17.06.1998թ. ընդունել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը, որի 6-րդ հոդվածի համաձայն «Օրենսգիրքը գործողության մեջ դնելու օրվանից իրավաբանական անձինք կարող են ստեղծվել բացառապես օրենսգրքի 5-րդ գլխով նախատեսված կազմակերպական-իրավական ձևերով:

Մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելն ստեղծված ձեռնարկությունների այն կազմակերպական-իրավական տեսակները, որոնք նախատեսված չեն օրենսգրքի 5-րդ գլխով, մինչև 2000 թվականի հունվարի 1-ը ենթակա են վերակազմակերպման և գրանցման: Նշված ժամկետում չվերակազմակերպվելու և չգրանցվելու դեպքում դրանք ենթակա են լուծարման:

Մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելն ստեղծված և օրենսգրքի 5-րդ գլխով նախատեսված կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձինք մինչև 2000 թվականի հունվարի 1-ը իրենց հիմնադիր փաստաթղթերը պետք է համապատասխանեցնեն օրենսգրքի 5-րդ գլխի նորմերի պահանջներին և վերագրանցվեն: Նշված ժամկետում չհամապատասխանեցված և չվերագրանցված հիմնադիր փաստաթղթերը համարվում են անվավեր»:

Ելնելով վերոշարադրյալից մեկնաբանվող հոդվածը սահմանել է, որ իրավաբանական անձինք, որոնք օրենսդրության պահանջներին համապատասխան չեն անցել վերագրանցում և որոնց վերագրանցման ժամկետը լրացել է սնանկության վերաբերյալ գործը հարուցելու պահին, ենթակա չեն ֆինանսական առողջացման և պետք է սնանկության վարույթը ավարտել միայն լուծարման ճանապարհով և քանի որ պարտապան-իրավաբանական անձի լուծարումն և անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումն կարգը սահմանված է սույն օրենքի 70-րդ հոդվածով հետևաբար դատարանը պետք է ղեկավարվի դրանով, առանց նույն հոդվածի 1-ին մասում նշված պայմանները հաշվի առնելու:

Մեկնաբանվող հոդվածը հղում է պարունակում սույն օրենքի 94-րդ հոդվածին, որը վերաբերվում է բացակայող պարտապանի սնանկության առանձնահատկություններին: Կարծում ենք, որ նման պայմանը կարող է վերաբերվել միմիայն վերագրանցում չանցած բացակայող պարտապանին սնանկ ճանաչելու առանձնահատկություններին:

Հոդված 96. Սնանկության վերաբերյալ գործի ավարտը կառավարչի ներկայացմամբ

1. Սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը, կառավարչի կամ պարտատիրոջ ներկայացմամբ և պարտատերերի խորհրդի համաձայնության առկայության դեպքում, վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե՝

ա) պարտապանը չունի որևէ գույք.

բ) պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ.

գ) պարտապանի գույքն այնքան փոքրաթեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը.

դ) պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:

2. Այն դեպքում, երբ պարտատերը (պարտատերերը) առարկում է սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեմ, սնանկության վերաբերյալ գործը կարող է շարունակվել առարկող պարտատիրոջ (պարտատերերի) հաշվին: Նման դեպքերում առարկող պարտատերը (պարտատերերը) պարտավոր է դատավորի որոշմամբ սահմանված չափով դեպոզիտ վճարել սնանկության հատուկ հաշվին՝ ի ապահովումն սնանկության գործի շարունակման հետ կապված ծախսերի հատուցման:

Սույն օրենքը սահմանել է սնանկության գործը ավարտելու մի քանի եղանակներ, որոնց արդյունքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած կամ վերջինս լուծարման հետևանքով դադարում է գոյություն ունենալ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պարզապես դադարում է վերջինիս գործունեությունը: Այսպես, սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը: Իսկ սույն օրենքի 87-րդ և մեկնաբանվող հոդվածներով նախատեսված դեպքերում սնանկության գործի ավարտով իրավաբանական անձ- պարտապանը դադարում է գոյություն ունենալ, իսկ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարում է: Ընդ որում, իրավաբանական անձ-պարտապանը համարվում է լուծարված, իսկ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը՝ դադարած «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և սույն օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված պետական գրանցման պահից:

Մեկնաբանվող հոդվածը թվարկել է այն սպառիչ դեպքերը (իրավիճակները), երբ սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը կառավարչի կամ պարտատիրոջ ներկայացմամբ վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին: Նման միջնորդություն ներկայացնելու համար միջնորդություն ներկայացնողը պետք է ունենա պարտատերերի խորհրդի կամ պարզապես բոլոր պարտատերերի համաձայնությունը: Հակառակ դեպքում սնանկության գործը չի կարող ավարտվել և այն պետք է շարունակվի առարկող պարտատիրոջ (պարտատերերի) հաշվին (մեկնաբանվող հոդվածի 2-րդ մաս): Հոդվածի վերոհիշյալ թվարկված դեպքերից առաջինը, նա է, երբ պարտապանը չունի որևէ գույք: Այս դեպքը կարող է վրա հասնել սնանկության վարույթի սկզբում՝ դեռևս պարտապանին սնանկ ճանաչելիս, երբ պարտապանի ֆինանսատնտեսական և գույքի վերաբերյալ այլ փաստաթղթերից ակնհայտ երևում է, որ պարտապանը չունի որևէ գույք կամ այլ ակտիվներ: Ուստի սնանկության գործի ավարտի մասին հարցը կարող է քննարկվել պարտատերերի առաջին իսկ ժողովում, որից հետո կառավարչի համապատասխան միջնորդության հիման վրա սնանկության գործը ավարտվում է:

Երկրորդ դեպքը, դա այն է, երբ պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ, ինչը սնանկության գործն ավարտելու միջնորդություն ներկայացնողը պետք է հիմնավորի պարտատերերի ժողովում կամ խորհրդում: Նման հիմնավորում կարող է հանդիսանալ պարտապանի գույքի հետախուզման վերաբերյալ հարկադիր կատարողի վարույթն ավարտելու մասին որոշումը, որի արդյունքում պարտապանի գույք կամ այլ ակտիվներ հնարավոր չի եղել հայտնաբերել:

Մեկնաբանվող հոդվածով սահմանված կարգով սնանկության գործը կարող է ավարտվել նաև այն դեպքերում, երբ պարտապանի գույքն այնքան փոքրաթեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը, ինչպես նաև այն դեպքում, երբ պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:

Թվարկված վերջին դեպքերը պատկերացնելու համար բերենք հետևյալ օրինակները.

Յուրաքանչյուր սնանկության գործով առկա է կառավարչի վարձատրության, դատական ծախսերի հատուցման և առնվազն մեկ պարտատիրոջ պահանջը բավարարելու հարց: Եթե կառավարչի վարձատրությունը մեկ ամսվա համար հաշվենք Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, այն է՝ 13.000 ՀՀ դրամ, դատական ծախսերը՝ 500.000 ՀՀ դրամ, քանի որ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ սնանկության հայցադիմում ներկայացնելու համար սահմանված տուրքը կազմում է բազային տուրքի (1000 ՀՀ դրամ) հինգհարյուրապատիկը և հայցվոր-պարտատիրոջ պահանջը հաշվենք 501.000 ՀՀ դրամ, քանի որ պարտապանին սնանկ ճանաչելու համար, վերջինիս 30-օրյա և ավելի

Ժամկետով կետանցված դրամական պարտավորությունները պետք է գերազանցեն 500.000 ՀՀ դրամը, ապա տվյալ սնանկության գործով վճարման կամ բավարարման ենթակա գումարը կկազմի ամենաքիչը՝ 1.014.000 ՀՀ դրամ: Այն դեպքում, երբ՝

ա) պարտապանի եղած ակտիվները կազմում են 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումար, ապա տվյալ դեպքում պարտապանի գույքը կհամարվի այնքան փոքրաթեք, որ ողջամիտ չէ սնանկության գործի հետագա ընթացակարգերի իրականացումը.

բ) պարտապանն ունի 400.000 ՀՀ դրամ դեբիտորական պարտավորություններ, որոնք դեռ հավաքագրելու համար անհրաժեշտ է բռնագանձման հայցով դատարաններ դիմել, ապա այս դեպքում պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքագրման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը և կարող են բերել լրացուցիչ ծախսերի առաջացման:

Մեկնաբանվող հոդվածով նախատեսված կարգով սնանկության գործն ավարտելու մասին դատավորը առանց դատական նիստ հրավիրելու կայացնում է վճիռ, որն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակվելուց տասնհինգ օր հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 221.4 և 221.6, 1-ին մաս): Մյուս դեպքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասը, դատավորը առանց դատական նիստ հրավիրելու կայացնում է որոշում՝ միջնորդությունը մերժելու մասին: Այս որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը կարգավորում է այն դեպքերը, երբ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում սնանկության գործն ավարտելու համար հրավիրված ժողովում որևէ պարտատեր կամ պարտատերեր առարկում են սնանկության գործը մեկնաբանվող հոդվածի կարգով ավարտելու դեմ: Այս պարագայում սնանկության վերաբերյալ գործը կարող է շարունակվել առարկող պարտատիրոջ (պարտատերերի) հաշվին: Նման դեպքերում առարկող պարտատերը (պարտատերերը) պարտավոր է դատավորի որոշմամբ սահմանված չափով դեպոզիտ վճարել սնանկության հատուկ հաշվին՝ ի ապահովումն սնանկության գործի շարունակման հետ կապված ծախսերի հատուցման: Պետք է նկատի ունենալ, որ մինչև պարտատիրոջ առարկությունը սնանկության վարույթում կատարված ծախսերը չեն փոխհատուցվում առարկող պարտատիրոջ (պարտատերերի) կողմից: Վերջինս պետք է փոխհատուցի միայն սնանկության վարույթի այդ պահից հետո առաջացող ծախսերը, եթե դրանք անհնարին կլինեն փոխհատուցել պարտապանի ակնկալվող ակտիվներից:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի կարգով սնանկության գործը շարունակվելու, պարտապանի պարտավորությունները մարելու և սնանկության վարույթի այլ ծախսերը փոխհատուցելու համար բավարար ակտիվներ հավաքագրվելու դեպքում սնանկության

գործն ավարտվում է սույն օրենքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով (տես սույն օրենքի 87-րդ հոդվածի մեկնաբանությունները): Հակառակ դեպքում գործն ավարտվում է մեկնաբանվող հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ 12.

ԵԶՐԱՓՈՒԿ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 97. Պարտապանին պատկանող շրջանառությունից հանված և սահմանափակ շրջանառու գույքը

1. Պարտապանին պատկանող շրջանառությունից հանված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարիչը հանձնում է իրավասու պետական մարմիններին:

2. Պարտապանին պատկանող սահմանափակ շրջանառու գույքը կառավարչի կողմից կարող է օտարվել միայն նման գույք՝ որպես սեփականություն ունենալու իրավունք ունեցող անձանց կամ կարող է օտարվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հատուկ թույլտվություն ստացած անձանց:

Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնց շրջանառության մեջ գտնվելը չի թույլատրվում, կոչվում են շրջանառությունից հանված օբյեկտներ և դրանք պետք է ուղղակի նշված լինեն օրենքում: Մեկնաբանվող հոդվածը նախատեսել է, որ եթե պարտապանն ունի այդպիսի գույք, ապա կառավարիչը դրանք, օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է հանձնի իրավասու պետական մարմիններին:

Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնք կարող են պատկանել շրջանառության սուսկ որոշակի մասնակիցների կամ կարող են շրջանառության մեջ դրվել հատուկ թույլտվությամբ, կոչվում են սահմանափակ շրջանառու օբյեկտներ, և որոշվում են օրենքով սահմանված կարգով: Մեկնաբանվող հոդվածը նախատեսել է, որ եթե պարտապանն ունի այդպիսի գույք, ապա կառավարիչն այն կարող է օտարել միայն նման գույք՝ որպես սեփականություն, ունենալու իրավունք ունեցող անձանց կամ կարող է օտարել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հատուկ թույլտվություն ստացած անձանց:

Հոդված 98. Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) առևտրային կազմակերպություններին սնանկ ճանաչելը կազմակերպություններին սնանկ ճանաչելը

1. Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) առևտրային կազմակերպությունները չեն կարող սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնել դատարան:

2. Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) առևտրային կազմակերպությանը սնանկ ճանաչելու մասին պարտատիրոջ (պարտատերերի) դիմումը սույն օրենքով սահմանված կարգով գրանցում է դատարանը և այդ մասին մեկ օրվա ընթացքում ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կցելով դիմումի պատճենը:

3. Դատարանը սույն օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) առևտրային կազմակերպությանը պարտատիրոջ (պարտատերերի) դիմումի հիման վրա սնանկ ճանաչելու վերաբերյալ գործն իր վարույթ ընդունելու մասին, եթե՝

ա) դատարանի ծանուցումն ստանալուց 60 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքով սահմանված կարգով տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին որոշում չի ընդունում.

բ) տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու պահից անցել է 150 օր.

գ) տվյալ առևտրային կազմակերպության՝ միջազգային մրցույթով մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում ընդունելու դեպքում կազմակերպությունը միջազգային մրցույթով մասնավորեցվել (սեփականաշնորհվել) է, ինչպես նաև մրցույթը չկայանալու պահից անցել է մեկ ամիս, եթե այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին այլ որոշում չի ընդունել:

Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) կազմակերպությունների մասնավորեցման կարգը և առանձնահատկությունները սահմանված են «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» 10.02.1998թ. ուժի մեջ մտած ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածի համաձայն «Մասնավորեցումը պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցումն է մասնավորեցման սուբյեկտներին:

Մասնավորեցման օբյեկտ են՝

ա) պետական բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, ոչ պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում պետությանը պատկանող բաժնետոմսերը.

բ) պետության մասնակցությամբ ընկերության լուծարումից հետո պետությանն անցած գույքը.

գ) օգտագործման իրավունքով տրված պետական գույքը, այդ թվում՝ անշարժ գույքը.

դ) բնակելի շենքերում պետական սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման տարածք չահամարվող ոչ բնակելի տարածքները.

ե) անավարտ շինարարության օբյեկտները.

զ) պետությանը պատկանող այլ գույքային իրավունքները.

ը) բնակելի շենքերում համայնքային սեփականություն համարվող, այդ թվում՝ պետության կողմից համայնքին հայեցողական սեփականության իրավունքով հանձնված ընդհանուր օգտագործման տարածք չահամարվող ոչ բնակելի տարածքները, եթե դրանք՝

- տրամադրված են վարձակալության իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.

- տրամադրված են «փոքր» օբյեկտներին՝ վարձակալության կամ մշտական օգտագործման նպատակով:

Սույն օրենքով չեն կարգավորվում՝

ա) բռնագրավելու, տիրագուրկ ճանաչելու հետևանքով, ժառանգությամբ կամ նվիրատվությամբ, պարտքի դիմաց պետությանը սեփականության իրավունքով անցած գույքը օտարելը, ինչպես նաև պետության կողմից գրավի առարկան իրացնելը.

բ) դատարանի որոշմամբ անվճարունակ ճանաչված լուծարվող իրավաբանական անձանց պատկանող պետական գույքը օտարելը...»:

Հիշատակված օրենքի վերոշարադրյալ դրույթներից ելնելով՝ մեկնաբանվող հոդվածը սահմանում է, որ պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) առևտրային

կազմակերպությունները չեն կարող սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնել դատարան: Իսկ, պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) կազմակերպությունների վերաբերյալ սնանկ ճանաչելու մասին հայցադիմում ստանալու դեպքում դատարանը գրանցում է կատարում այդ մասին և մեկ օրվա ընթացքում դատավորը ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կցելով հայցադիմումի պատճենը:

Այնուհետև, դատավորը սույն օրենքով սահմանված կարգով պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) կազմակերպությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ հայցադիմումն իր վարույթ ընդունելու մասին որոշում կարող է կայացնել, եթե՝

ա) դատարանի ծանուցումն ստանալուց 60 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքով սահմանված կարգով տվյալ կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին որոշում չի ընդունում.

բ) տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու պահից անցել է 150 օր.

գ) տվյալ առևտրային կազմակերպության՝ միջազգային մրցույթով մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում ընդունելու դեպքում կազմակերպությունը միջազգային մրցույթով մասնավորեցվել (սեփականաշնորհվել) է, ինչպես նաև մրցույթը չկայանալու պահից անցել է մեկ ամիս, եթե այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին այլ որոշում չի ընդունել:

Դատավորի նման ծանուցումը վերջին հնարավորությունն է տալիս Հայաստանի Հանրապետությանը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում նշված և պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) օբյեկտը 60 օրվա ընթացքում մասնավորեցնել, քանի որ նույն օրենքի 3-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ մասնավորեցման ենթակա օբյեկտ պարունակող կազմակերպությանը սնանկ ճանաչելուց հետո մասնավորեցման գործընթացը կդառնա անհնարին:

Դատավորը իր ծանուցումը ուղարկելու օրվանից 60 օր հետո՝ ՀՀ կառավարությունից որևէ պատասխան, այդ թվում՝ պատասխանող կազմակերպության վերաբերյալ մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշում չստանալու դեպքում, կայացնում է որոշում պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման)

ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված (չսեփականաշնորհված) կազմակերպությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ հայցադիմումն իր վարույթ ընդունելու մասին: Որից հետո, տվյալ կազմակերպությունը դատարանի կողմից սնանկ ճանաչվելու դեպքում, ՀՀ կառավարության կողմից վերջինիս գույքը (մասնավորեցման ենթակա օբյեկտը) մասնավորեցնելու մասին որոշում ընդունելը կհակասի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտին՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի, ըստ որի Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները, գերատեսչական իրավական ակտերը և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի վավերացվածների, ներքին և անհատական իրավական ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերին:

Հոդված 99. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքով սահմանված կարգով պարտապանի գույքի օտարման դեպքում դատավորի որոշումը, կառավարչի կնքած պայմանագրերը և այլ փաստաթղթերը (աճուրդի արդյունքների ամփոփման արձանագրություն և այլն) հիմք են նոտարի մոտ և գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող պետական մարմիններում համապատասխան ձևակերպումներ կատարելու և գործարքներից ծագող իրավունքները գրանցելու համար:

Մեկնաբանվող հոդվածի սահմանումից հետևում է, որ սույն օրենքով սահմանված կարգով պարտապանի գույքի օտարման դեպքում դատավորի որոշումը, կառավարչի կնքած պայմանագրերը և այլ փաստաթղթերը (աճուրդի արդյունքների ամփոփման արձանագրություն և այլն) հիմք են նոտարի մոտ և գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող պետական մարմիններում համապատասխան ձևակերպումներ կատարելու և գործարքներից ծագող իրավունքները գրանցելու համար: Օրենսդրի նման սահմանումը հնարավորություն է տալիս կառավարիչներին սնանկության գործի շրջանակներում կնքված ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում նոտարական վավերացում պահանջող կամ պետական գրանցում պահանջող գործարքները անմիջապես ներկայացնել վավերացման և պետական գրանցման: Պետք է նկատել, որ մեկնաբանվող հոդվածն ունի իմպերատիվ պահանջ, այն իմաստով, որ այդ գործարքները պետք է կնքված լինեն դատարանի որոշման հիման վրա: Օրենսդրի նման պահանջը պայմանավորված է նրանով, որ դատարանը բոլոր դեպքերում գործարքի

կնքման համար թույլտվություն տալու ժամանակ ի նկատի պետք է ունենա ՀՀ օրենսդրության պահանջները: Այսպես, բաժնային գույքի բաժինը օտարելիս դատարանը պետք է ի նկատի ունենա, որ նշված գույքը ուղղակի գործարով օտարման դեպքում բաժնային այլ սեփականատերերը ունեն գնման նախապատվության իրավունք (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մաս):

Նոտարական վավերացում և (կամ) պետական գրանցում պահանջող գույքի օտարման ժամանակ սնանկության կառավարիչները պետք է պահպանեն գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին ՀՀ օրենքներով և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները:

Հոդված 100. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին կառավարիչների մոտ պահպանված, նախկինում ավարտված սնանկության գործերով արխիվացման ենթակա փաստաթղթերը հանձնվում են Հայաստանի Հանրապետության պետական արխիվ, որն ընդունում է նշված նյութերը և կազմակերպում դրանց արխիվացման աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առանց կառավարիչների վճարումների:

2. Մինչև իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի հրապարակումը սույն օրենքով սահմանված հրապարակումները և ծանուցումները հրապարակվում են առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցներով:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված լիակատար տնտեսական ընկերակցությունների և կոոպերատիվների սնանկության գործերը ենթակա են ավարտման, եթե առկա են սույն օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերից որևէ մեկը:

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախկինում ավարտված սնանկության գործերով դատարանի կամ կառավարիչների կողմից գումարներ չեն պահուստավորվել այդ ավարտված գործերով արխիվացման ենթակա փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության պետական արխիվ հանձնելու համար, ուստի սույն օրենքը անցումային դրույթներում սահմանում է, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին կառավարիչների մոտ պահպանված, նախկինում ավարտված սնանկության գործերով արխիվացման ենթակա փաստաթղթերը հանձնվում են Հայաստանի Հանրապետության պետական արխիվ, որն ընդունում է

նշված նյութերը և կազմակերպում դրանց արխիվացման աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առանց կառավարիչների վճարումների:

Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո ավարտվող սնանկության գործերով կառավարիչը պարտավոր է գումարների բաշխման ծրագրեր կազմելիս նախատեսել գումարներ տվյալ սնանկության գործով արխիվացման ենթակա փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության պետական արխիվ հանձնելու համար: Ընդ որում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն պարտապան իրավաբանական անձի լուծարումը կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարումը գրանցելու դիմումին կառավարիչները պետք է կցեն իրենց կողմից կազմված տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարման մասին:

2. Մինչև իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի հրապարակումը սույն օրենքով սահմանված հրապարակումները և ծանուցումները հրապարակվում են առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցներով: Պրակտիկայում կառավարիչները մինչև իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի հրապարակվելը սնանկության վարույթի ընթացքում անհրաժեշտ հայտարարությունների գերակշռող մասը հրապարակում են մեկ միասնական մամուլում, այն է՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված լիակատար տնտեսական ընկերակցությունների և կոոպերատիվների սնանկության գործերի ավարտը ձգձգվում էր այն պատճառով, որ հիշատակված կազմակերպատիրական ձև ունեցող իրավաբանական անձանց լիակատար ընկերները և անդամները պարտապանի պարտավորությունների համար գույքային և սուբսիդիար պատասխանատվություն են կրում: Քանի որ դրանք հիմնականում հանդիսանում էին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով վերագրանցում չանցած իրավաբանական անձինք և ենթակա են լուծարման, իսկ նրանց՝ լիակատար տնտեսական ընկերակցությունների լիակատար ընկերներն ու կոոպերատիվների անդամները՝ բացակայող պարտապաններ, ուստի սույն օրենքը, չակերտավոր՝ «ամնիստիա» կիրառելով մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը սնանկության վարույթում գտնվող լիակատար տնտեսական ընկերակցությունների լիակատար ընկերների և կոոպերատիվների անդամների նակատմամբ, սահմանել է, որ այդ կազմակերպությունների վերաբերյալ սնանկության գործերը ենթակա են ավարտման, եթե առկա են սույն օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերից որևէ մեկը:

Հոդված 101. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված կարգով հարուցված և դատարանի վարույթում գտնվող սնանկության վերաբերյալ գործերի քննությունը շարունակվում է սույն օրենքով սահմանված կարգով:

4. Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունների վերաբերյալ, ինչպես նաև սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով և 27-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառվում են 2005 թվականի հուլիսի 1-ից:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառվում են, եթե պարտապանի՝ սույն օրենքով սահմանված սնանկության հատկանիշներն ի հայտ են եկել 2004 թվականի հուլիսի 1-ից հետո:

Սնանկության մասին նոր օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից, այսինքն 2004 թ. հունվարի 30-ից: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության օրենքները պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»: «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը պաշտոնապես հրապարակվել է 2004թ. հունվարի 29-ին ՀՀ պաշտոնական տեղեկագրի N 6 (305) համարում:

Այդ պահից ուժը կորցնում է «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» Հայաստանի Հանրապետության 1996թ. դեկտեմբերի 3-ի օրենքը:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված կարգով հարուցված և դատարանի վարույթում գտնվող սնանկության վերաբերյալ գործերի քննությունը շարունակվում է նոր օրենքով սահմանված կարգով: Մեկնաբանվող դրույթը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավորության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի պահանջով, ըստ որի քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքներով:

Սույն օրենքի որոշ դրույթներ ուժի մեջ են մտնում այլ ժամկետներում: Դրանք են՝

-կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունների վերաբերյալ դրույթները (հոդված 28, 29, 30 և այլն),

-սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով սահմանված կանոնը:

Մեկնաբանվող հոդվածը հղում է պարունակում սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետին, որը վերաբերում է այն անձանց շրջանակին, որոնք չեն կարող նշանակվել կառավարիչներ, իսկ նշանակվելու դեպքում՝ ենթակա են ազատման, սակայն, մեր կարծիքով դա ընդամենը վրիպակ է, որի փոխարեն պետք է հղում կատարվի սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «թ» ենթակետին: Վերջինս վերաբերում է նրան, որ այն կառավարիչը, ով չի հանդիսանում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ կամ կազմակերպությունը, որի անդամ է կառավարիչը, չի համապատասխանում սույն օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներին կամ, չհանդիսանալով ինքնակարգավորվող կազմակերպության անդամ, չունի սույն օրենքով սահմանված չափով դեպոզիտ կամ քաղաքացիական պատասխանատվության համապատասխան չափով ապահովագրում չի կարող նշանակվել կառավարչի պաշտոնում, իսկ նշանակված լինելու դեպքում ենթակա է ազատման, ինչը անմիջականորեն կապված է այն հանգամանքի հետ, որ մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասի համաձայն կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունների վերաբերյալ կանոնները կիրառվում են 2005 թվականի հուլիսի 1-ից:

- սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կանոնները, որոնք սահմանում են կառավարչի գույքային պատասխանատվությունը:

Այս դրույթները գործում են 2005 թվականի հուլիսի 1-ից:

Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կանոնները, որոնք սահմանում են, Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հարկադիր կատարողի, դատախազության մարմինների կողմից պարտապանին սնանկ ճանաչելու հայցադիմումով դատարան դիմելու պարտականությունը չկատարելու համար անձնական գույքային պատասխանատվության սահմանները, կիրառվում են, եթե պարտապանի՝

մեկնաբանվող օրենքով սահմանված սնանկության հատկանիշներն ի հայտ են եկել 2004 թվականի հուլիսի 1-ից հետո: